

ԼՐԱՏՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԳԻՆԲԱՆԱԿՆԵՐԻՆ
ԼՍՈՑԻԼՑԻԼՑԻ

1(1)



2023

eISSN 2953-8092

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

HERALD OF THE ARMENIAN
LIBRARY ASSOCIATION

N 1 (1)

ԵՐԵՎԱՆ

2023

Հանդեսը լույս է տեսնում 2023 թվականից
տարին երկու անգամ (էլեկտրոնային)
The journal has been published since 2023
twice a year (electronic)

Հրատարակումը երաշխավորված է
Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից
Publication is recommended by
Armenian Library Association

Խ մ ք ա գ ռ ա կ ա ն խ ո ղ ո Ւ Ր Ղ

Նախագահ՝ *Ռուզան Տոնոյան*

Գլխավոր խմբագիր՝ *Մայա Գրիգորյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Արմինե Հովհաննիսյան*

Անդամներ՝ *Ավագ Հարությունյան, Արարատ քին. Պողոսյան,*

Գագիկ Սուքիասյան, Լուսինե Կիրակոսյան,

Համո Սուքիասյան, Մհեր Ղազինյան,

Միհրան Մինասյան, Նազենի Արզումանյան,

Ռաֆիկ Ղազարյան, Վահե Թորոսյան, Տիգրան Զարգարյան

Editorial Board

Chair: Ruzan Tonoyan

Editor-in-Chief: Maya Grigoryan

Executive Secretary: Armine Hovhannisyan

Members: Avag Harutyunyan, Priest Ararat Poghosyan, Gagik Sukiasyan,

Lusine Kirakosyan, Hamo Sukiasyan, Mher Ghazinyan,

Mihran Minasyan, Nazeni Arzumanyan, Rafik Ghazaryan,

Vahe Torosyan, Tigran Zargaryan

e-ISSN 2953-8092

DOI: 10.54503/2953-8092

Հայերեն բաժնի խմբագիր
Հայերեն բաժնի սրբագրիչ
Անգլերենի խմբագիր և սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորում և էջադրում՝

Նելլի Հայրապետյան
Գոհար Սարգսյան
Նունե Շահումյան
Ռուզաննա Թումանյան

Editors of Armenian segment
Proofreader of Armenian segment
Editor and proofreader of English
Computer design and pagination

Nelly Hayrapetyan
Gohar Sargsyan
Nune Shahumyan
Ruzanna Sargsyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/6

Address: Marshal Baghramyan ave. 24/6, 0019, Yerevan, Armenia

Ամսագրի պաշտոնական կայքէջը՝
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

Official site of the journal
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

ԼՐԱՏՈՒ ՀԱՅՎԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի՛ ընթերցող

Գրադարանագիտության, մատենագիտության, գրատպության ոլորտին առնչվող հարցադրումները կարիք ունեն պարզաբանումների: Լինելով հասարակության բաղկացուցիչ մասը և հանդիսանալով տեղեկատվության կուտակողներ ու փոխանցողներ՝ գրադարանները հենց այն կառույցներն են, որոնք պետք է զբաղվեն վերոնշյալ ոլորտների ուսումնասիրությամբ: Միննույն ժամանակ գրադարաններն իրենք հանդիսանում են հետազոտության օբյեկտներ:

Այսօր հայաստանյան իրականության մեջ գիտա-տեղեկատվական ամսագրերի ցանկը բավական ընդգրկուն է, սակայն գրադարանային ոլորտին առնչվող կամ խնդիրները արժարժող պարբերականների թիվը խիստ աղքատիկ է:

1941 թ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանը՝ Հ. Քոչարի խմբագրությամբ, հրատարակում է «Բիբլիոգրաֆիական ամսագիրը» (ընդամենը մեկ համար), այնուհետև, երկար ընդմիջումից հետո, 1960 թ.՝ «Գրադարանավար» մասնագիտական ամսագիրը (տարեկան 8 համար): 1961 թ. սկսվում է «Կուլտուր-լուսավորական աշխատանք» (հրատարակիչ՝ Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն) ամսագրի տպագրությունը: 1989 թ. հանդեսը անվանափոխվում է և մինչև 1990 թ. հրատարակվում «Մշակույթ» խորագրով՝ որպես ՀԽՍՀ կուլտուրայի մինիստրության և մշակույթի ֆոնդի հասարակական քաղաքական, մշակույթի և արվեստի հարցերով գիտահանրամատչելի պատկերազարդ հանդես:

Հայաստանի անկախացումից հետո՝ 1996-2008 թթ., Հայաստանի գրադարանային միությունը հրատարակում է իր տարեգիրքը՝ «Տեղեկագիր Հայաստանի գրադարանային միության» վերնագրով (ընդամենը 10 համար): 2004-2014 թթ. ընթացքում Հայաստանի ազգային գրադարանը թողարկում է «Հոգևոր հայրենիք» ամսաթերթը, իսկ 2015- 2019 թթ.՝ «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտա-

ԼՐԱՏՈՒ ՀԱՅՎԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

մեթոդական ամսագիրը, որը լույս է տեսնում վեցամսյա պարբերականությամբ, էլեկտրոնային ձևաչափով:

Շարունակելով ավանդույթը և կարևորելով ոլորտի ձեռքբերումներն ու առկա խնդիրները՝ Հայկական գրադարանային ասոցիացիան ընթերցողների և գրադարանային հանրության դատին է ներկայացում «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» պարբերականի անդրանիկ համարը՝ որպես ասոցիացիայի տարեգրքի (1996-2008 թթ.) տրամաբանական շարունակություն:

Հանդեսի նպատակն է՝ անդրադառնալ Հայաստանի գրադարանային համակարգում առկա խնդիրներին, արժևորել գրադարանների դերը հասարակական, մշակութային, գիտական, տեղեկատվական կյանքում, ոլորտին առնչվող հարցերում ՀՀ պետական կառավարման համակարգի մարմինների ընդունած որոշումները, ներկայացնել ձեռքբերումները, հետազոտել հայ տպագրության պատմությունը, լուսաբանել այլ երկրներում գրադարանագիտության նվաճումները, ներկայացնել Գրադարանային միությունների և հաստատությունների միջազգային դաշնության (IFLA) գործունեությունը:

Հանդեսի առանցքային բաժիններն են՝ «Տեսություն և պրակտիկա», «Ժամանակակից գրադարաններ», «Մշակութային ժառանգություն», «Հայկական գրադարանային ասոցիացիա: Գործընկերություն», «Գրադարանային իրադարձություններ», «Գրադարանային գործի երախտավորներ»:

Ժամանակակից տեխնոլոգիական զարգացումներն անմիջականորեն իրենց ազդեցությունն են ունենում գրադարանային ոլորտի վրա՝ ստիպելով վերանայել ավանդական գործառույթները: Նկատի առնելով զարգացման բուռն ընթացքը՝ ամսագրում, բացի ավանդական գրադարանային խորագրերից, կլուսաբանվեն նաև 21-րդ դարում գրադարանների առջև ծառայած մարտահրավերները և խնդիրները:

Կարծում ենք՝ հանդեսը կընդունվի մասնագիտական հանրության կողմից, կդառնա պահանջված հրատարակություն և կնպաստի գրադարանագիտական մտքի զարգացմանը Հայաստանում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՏՍԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՏՍԻԱՅԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1994-2014 թթ.)*

ՀՏԴ 02(479.25) + 070

ՄԱԴԼԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՏՍԻԱՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԽՆԿՈ ԱՊՈՐ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ORCID: [0009-0001-6664-973X](https://orcid.org/0009-0001-6664-973X)

Ինչպես հղել՝ Հովսեփյան Մ. (2023), Հայկական գրադարանային ասոցիացիայի պարբերական հրատարակությունները (1994-2014 թթ.), *Լրափու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(1), 5-8:

How to cite: Hovsepyan M. (2023), Serial Publications of the Armenian Library Association, *Herald of the Armenian Library Association*, 1(1), 5-8.

Գրադարանների գործունեությունը հետանկախության տարիներին որակական նոր փոփոխություններ կրեց: Մշակութային այս օջախները կանգնեցին նոր մարտահրավերների առաջ: Բնակչության կրթական մակարդակի բարձրացմանը զուգընթաց ավելացան ընթերցողների պահանջները, որոնց համապատասխան գրադարանները գրքի պահոցներից վերաճեցին գրքի քարոզչության, գիտամեթոդական և մատենագիտական տեղեկատվության օջախների: Միևնույն ժամանակ չլուծված մնացին գրադարանային բազմաթիվ խնդիրներ: Մտահոգիչ էր հատկապես համայնքային գրադարանների վիճակը. կադրերի արտահոսք, շենքային անմխիթար պայմաններ, տեխնիկական և ֆինանսական միջոցների բացակայություն: Ժամանակի հրամայականով առաջ եկավ Հայաստանի գրադարան-

* Հոդվածը ներկայացվել է 23.04.2023, գրախոսվել է 31.05.2023, ընդունվել է տպագրության 12.06.2023:

The article was submitted on 23.04.2023, reviewed on 31.05.2023, accepted for publication on 12.06.2023.

ները միավորող, նրանց շահերը մեկտեղող կազմակերպության ստեղծման գաղափարը: Հայաստանում գրադարանային գործի բարելավման, արտերկրի գրադարանների և գրադարանային կազմակերպությունների հետ կապերը զարգացնելու նպատակով 1994 թ. հոկտեմբերի 7-ին հիմնադրվեց «Հայկական գրադարանային ասոցիացիա» (այսուհետ՝ ՀԳԱ) մասնագիտական հասարակական կազմակերպությունը (սկզբում՝ «Հայաստանի գրադարանային միություն», «Հայկական գրադարանային միություն»): Համախմբելով հանրապետության գրադարանային աշխատողներին մասնագիտական հարցերի լուծման և շահերի պաշտպանության համար՝ կազմակերպությունը պարբերաբար հանդես է գալիս մի շարք ծրագրային նախաձեռնություններով: Հայկական գրադարանային ասոցիացիայի ձեռնարկումները լուսաբանվում են ԶԼՄ-ների, ասոցիացիայի կազմակերպության կողմից հրատարակությունների միջոցով: Առանձնացնենք հատկապես կառույցի հրատարակչական գործունեությունը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ»

Տարեգիրք, որտեղ արծարծվում են գրադարանային ոլորտի խնդիրները և ներկայացվում են նշանակալից իրադարձությունները: Լույս է տեսել 1996-2008 թթ.՝ 10 համար: 1-3-րդ համարները կոչվել են «Տեղեկագիր», 4-5-րդ համարները՝ «Տեղեկագիրք», 6-10-րդ համարները՝ «Հայկական գրադարան» տարեգիրք:

➤ ՏԵՂԵԿԱԳԻՐ 1 /Հայաստանի գրադ. միություն; Խմբ. Խորհուրդ՝ Տ. Զարգարյան, Ն. Հայրապետյան /պատաս./, Մ. Հովսեփյան, Հ. Մանասերյան, Գ. Տեր-Վարդանյան.- 1996.- 45 էջ:

➤ ՏԵՂԵԿԱԳԻՐ 2 /Հայաստանի գրադ. միություն, տպագր. պատր. Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան.- 1997.- 63 էջ:

➤ ՏԵՂԵԿԱԳԻՐ 3 /Հայկական գրադ. միություն, տպագր. պատր. Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան.- 1998.- 114 էջ:

➤ ՏԵՂԵԿԱԳԻՐԲ 4 /Հայկական գրադ. միություն, տպագր. պատր. Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան.- 1999.- 179 էջ:

¹ Հայկական գրադարանային ասոցիացիա
http://alarmenia.am/?page_id=4&lang=hy (12.06.2023):

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

➤ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ 5 /Հայկական գրադ. միություն, տպագր. պատր. Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան.- 2000.- 153 էջ:

➤ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ: Տարեգիրք 6 /Հայկական գրադ. միություն, պատր. Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան.- 2002.- 132 էջ:

➤ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ: Տարեգիրք 7 /Հայկական գրադ. միություն, պատր. Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան.- 2003.- 126 էջ:

➤ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ: Տարեգիրք 8 /Հայկական գրադ. միություն, պատր. Ն. Հայրապետյան, Ռ. Ղազարյան.- 2004.- 142 էջ:

➤ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ: Տարեգիրք 9 /Հայկական գրադ. ասոց., պատր. Ռ. Ղազարյան, խմբ. Դ. Սարգսյան.- 2005.- 162 էջ:

➤ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ: Տարեգիրք 10 /Հայկ. գրադ. ասոց., պատր. Ռ. Ղազարյան, խմբ. Դ. Սարգսյան.- 2008.- 119 էջ:

«ԳԻՐՔԸ ԵՎ ԵՍ»

Ազգային գրադարանային շաբաթվա շրջանակում, 5 տարի շարունակ, Հայաստանի ազգային գրադարանը կազմակերպել է դպրոցականների գրական-ստեղծագործական մրցույթ, որի արդյունքները յուրաքանչյուր տարի ամփոփվել են մեկ գրքում: Մրցույթին մասնակցել են հանրապետության տարբեր մարզերի աշակերտներ՝ նպաստելով պատանիների մեջ գրքի, գիտելիքի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը:

➤ ԳԻՐՔԸ ԵՎ ԵՍ: Ստեղծագործական շարադրությունների ժողովածու (35 շարադրություն) /Հայկական գրադ. ասոց., պատր. Ռ. Ղազարյան, Վ. Սարգսյան, խմբ. Դ. Սարգսյան.- Ե., 2006.- 48 էջ:

➤ ԳԻՐՔԸ ԵՎ ԵՍ 2: Ստեղծագործական շարադրությունների ժողովածու (34 շարադրություն) /Հայկ. գրադ. ասոց., պատր. Ռ. Ղազարյան, Վ. Սարգսյան, խմբ. Դ. Սարգսյան.- Ե., 2007.- 48 էջ:

➤ ԳԻՐՔԸ ԵՎ ԵՍ 3: Ստեղծագործական շարադրությունների ժողովածու (26 շարադրություն) /Հայկ. գրադ. ասոց., պատր. Ռ. Ղազարյան, Վ. Ա. Սարգսյան, խմբ. Դ. Սարգսյան.- Ե., 2009.- 47 էջ:

➤ ԳԻՐՔԸ ԵՎ ԵՍ 4: Ստեղծագործական շարադրությունների ժողովածու (23 շարադրություն) /Հայկ. գրադ. ասոց., պատր. Ռ. Ղազարյան, Վ. Ա. Սարգսյան, խմբ. Դ. Սարգսյան.- Ե., 2010.- 47 էջ:

➤ ԳԻՐՔԸ ԵՎ ԵՍ 5: Ստեղծագործական շարադրությունների ժողովածու (33 շարադրություն) /Հայկ. գրադ. ասոց., պատր. Ռ. Ղազարյան, Վ. Ա. Սարգսյան, խմբ. Դ. Սարգսյան.- Ե., 2011.- 63 էջ:

«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ»

Տպագրվել է 2004-2014 թթ.: 2004 թ. լույս է տեսել որպես Հայաստանի ազգային գրադարանի ամսաթերթ: Անդրադարձել է ոչ միայն Ազգային գրադարանի, այլև հանրապետության գրադարանների հիմնախնդիրներին, գրադարանային նորություններին և առօրյային: 2008 թ. 3-րդ համարից մինչև 2011 թ. 6-րդ համարը հանդես է եկել որպես Հայաստանի ազգային գրադարանի և Հայկական գրադարանային ասոցիացիայի ամսաթերթ: 2011 թ. 7-րդ համարից /հուլիս/ մինչև 2011 թ. 11-12-րդ համարը թերթի վրա որևէ պատասխանատու կազմակերպության անուն չի նշվել: 2012 թ. 1-ին համարից մինչև 2014 թ. 10-11-րդ /նոյ.- դեկտ./ համարը լույս է տեսել՝ որպես Հայաստանի ազգային գրադարանի պաշտոնաթերթ:

«Библиотеки Южного Кавказа и кто есть кто в библиотечной сфере» справочник /Сост. Айрапетян Н., Исмаилов Х., Шатиришвили Г.; под. ред. К. Арабян.- Ереван, 2003.- 304с.

Տեղեկատուն ընդգրկել է Հարավային Կովկասի գրադարանների վերաբերյալ համառոտ տեղեկություններ: Նյութերը նախապատրաստել և տրամադրել են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գրադարանային ասոցիացիաների մասնագետները: Տեղեկատուն բաղկացած է 3 մասից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է տվյալ երկրի գրադարանային ոլորտը:

Հայկական գրադարանային ասոցիացիայի վերոհիշյալ հրատարակությունները՝ միտված Հայաստանում գրադարանային գործի զարգացմանը, վստահաբար ծառայել են իրենց նպատակին:

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԹՎԱՆՇԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

*Բազ/ազատ կոդերով ծրագրաշարերի ներկայացում**

ՀՏԴ 02(479.25) : 681.3

DOI: 10.54503/2953-8092.2023.1(1)-9

ՆԵՐՍԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱՍ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ORCID: [0009-0006-3634-726X](https://orcid.org/0009-0006-3634-726X)

Սույն հոդվածում վերլուծության ենթ ենթարկել թվային գրադարանների կառուցման ընդհանուր դրույթները և հատկապես բաց/ազատ կոդերով ծրագրաշարերը, որոնք գրադարանների համար դարձել են անհրաժեշտություն: Ուշադրությունը կենտրոնացրել ենք հայաստանյան գրադարաններում կիրառվող ծրագրաշարերի վրա, որոնց ուսումնասիրությունը կարող է առավել արդյունավետ դարձնել գրադարանների գործունեությունը:

In this article, we have analyzed the general principles of building digital libraries and especially open/free source software, which have become indispensable for librarians. We have focused our attention on the programs used in Armenian libraries, the study of which can make activities of libraries more effective.

Ինչպես հղել՝ Հայրապետյան Ն. (2023), Թվանշային գրադարանների ստեղծման անհրաժեշտությունը: Բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի ներկայացում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի 1(1)*, 9-21: [https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-9](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-9)

How to cite: Hayrapetyan N. (2023), The Importance of Creating Digital Libraries: Presentation of Free/Open Source Software, *Herald of the Armenian Library Association 1(1)*, 9-21:

* Հոդվածը ներկայացվել է 02.02.2023, գրախոսվել է 06.04.2023, ընդունվել է տպագրության 29.05.2023:
The article was submitted on 02.02.2023, reviewed on 06.04.2023, accepted for publication on 29.05.2023.

[https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-9](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-9)

Քանալի բառեր¹ թվանշային գրադարան, տեխնոլոգիական զարգացում, գրադարանային գործառույթներ, ծրագրաշարեր, բաց մատչելիություն, տեղեկատվության կուտակում, երկարաժամկետ պահպանություն:

Ներածություն

Մարդկությունը թևակոխել է չորրորդ արդյունաբերական հեղափոխության դարաշրջան, որն ուղեկցվում է տեղեկատվական տեխնոլոգիաների, վիրտուալ իրականության, արհեստական բանականության և բազմաթիվ այլ ոլորտներում գրանցվող նվաճումներով: Նոր դարաշրջանն իր հետ բերել է նոր մարտահրավերներ, ընդլայնել մարդկային գործունեության սահմանները:

Տեխնոլոգիական նման փոփոխությունները նոր մարտահրավերների առաջ են կանգնեցրել նաև գրադարաններին: Ներկայում անհրաժեշտություն է ավանդական գրադարանների կողքին կամ փոխարեն թվանշային գրադարանի ստեղծումը՝ համապատասխան մասնագետի հետ միասին: Սա դժվար և երկարատև աշխատանք է, որը պահանջում է որոշակի գիտելիքների, տեխնոլոգիաների, հմտությունների առկայություն և գրադարանում համապատասխան մասնագետի ներգրավում:

Թվայնացման առավելությունները

Սոցիալական մեդիան համակարգչային տեխնոլոգիաների ամբողջությունն է, որը հեշտացնում է տեղեկատվության, գաղափարների և մի շարք այլ առաջնահերթությունների ստեղծումն ու փոխանակումը վիրտուալ համայնքների և ցանցերի միջոցով (ՕԴԵԵԲԱ 2011, 63-69): Ներկայում սոցիալական մեդիայի ծառայությունները բազմազան են, բայց ունեն որոշ ընդհանուր առանձնահատկություններ: Նախ՝ սոցիալական մեդիան ինտերակտիվ Web 2.0 համացանցային ծրագիր է: Երկրորդ՝ օգտագործողի կողմից ստեղծված բովանդակությունը, ինչպիսիք են տեքստային հաղորդագրությունները (գրառումները) կամ մեկնաբանությունները, թվային լուսանկարները կամ տեսանյութերը և բոլոր առցանց փոխազդեցությունների արդ-

յունքում ստացված տվյալները սոցիալական ցանցերի բաղկացուցիչ մասն են: Երրորդ՝ սոցիալական ցանցերը օգտատիրոջ պրոֆիլը միացնում են այլ անձանց կամ խմբերի պրոֆիլին՝ դրանով իսկ նպաստելով ամբողջ առցանց համակարգի զարգացմանը:

Գրատպության պատմությունը համաշխարհային մշակույթի ու քաղաքակրթության զարգացման լուսավոր էջերից է: Հայ գրատպության սկիզբ է համարվում 1512 թ., երբ Հակոբ Մեղապարտի ջանքերով Վենետիկում տպագրվեց առաջին հայերեն գիրքը՝ «Ուրբաթագիրքը», որին 1513 թ. հաջորդեցին «Պատարագատետրը», «Աղթարքը» «Պարզատումարը», և «Տաղարանը» (ԼԵՎՈՆՅԱՆ 1958, 253; ԻՇԽԱՆՅԱՆ 2012, 536; ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015, 55-64): Տպագիր ժառանգությունը ազգային հարստություն է և մեծ նշանակություն ունի յուրաքանչյուր ժողովրդի պատմության, մշակույթի և քաղաքակրթության ուսումնասիրության, պատմական հիշողության պահպանման և սերունդներին փոխանցելու գործում, այդ իսկ պատճառով մշակութային արժեքները պատշաճ կերպով պահպանման կարիք ունեն:

Գրադարաններն այն կառույցներն են, որտեղ պահվում է մեզ հասած տպագիր մշակութային ժառանգությունը: Գրադարանային հավաքածուների պահպանման համար գրադարանավարների առջև կանգնած է կրկնակի խնդիր՝ բնօրինակ փաստաթղթերի երկարաժամկետ պահպանություն և գրադարանային հավաքածուների արագ և հեշտ հասանելիության ապահովում:

20-րդ դարի վերջին քառորդից սկսած տեղեկատվական նոր տեխնոլոգիաները և ավտոմատացման համակարգերը անընդհատ ընդարձակում են գրքի պահպանության, խնամքի, հաջորդ սերունդներին փոխանցելու հնարավորությունները: Համակարգիչների մուտքը գրադարաններ և արխիվներ հեղաշրջում է մինչ այդ եղած պատկերացումները, իսկ թղթային տարբերակի կողքին էլեկտրոնային գրքերի հայտնությունը հնարավորություն է տալիս ընդգրկել ընթերցողական լայն շրջաններ: Տպագիր նյութերի թվայնացման աշխատանքները գնալով ավելի մեծ ծավալներ են ընդգրկում: Ավելին, ներ-

կայում թվայնացումը լայն կիրառություն է գտնում մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ գիտություն, կրթություն, սոցիալ-տնտեսական ոլորտ, մշակույթ (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2015, 3-12):

Թվային հեղափոխությունը էական ազդեցություն է ունենում նաև գրադարանների գործունեության վրա: Գրադարանները մշակույթը զարգացնելու և մշակութային արժեքների հանրահոգակման լավագույն միջոցներից մեկն են: Թվանշային գրադարանների ստեղծման համար համակարգչային տեխնիկայից և կապի միջոցներից բացի, անհրաժեշտ են նաև ծրագրային լուծումներ: Համակարգիչները և կապի միջոցները ապահովում են գրադարանի տեխնիկական զինվածությունը, իսկ ծրագրային լուծումները կազմակերպում են այդ սարքերի փոխհամագործակցված աշխատանքը, հետևում տեղեկատվական հոսքերի տեղաշարժերի ճշտությանը, դեկավարում համակարգչային ցանցերի գործունեությունը, բավարարում օգտվողների տեղեկատվական հարցումները:

ՀՀ գրադարաններում տպագիր նյութերի թվայնացումը կատարվում է մի շարք գործընթացների հաջորդականությամբ: Նախ այդ նյութերը լուսաձրվում են հատուկ նկարող սարքերի միջոցով, որոնք ապահովում են պատկերի բարձր որակ, այնուհետև պատկերներ մշակող ծրագրերից մեկով՝ («Adobe Photoshop», «ACDSee» և այլն) նկարահանված յուրաքանչյուր կադրից հեռացվում են նկարահանման արդյունքում պատկերի շուրջը առաջացած ավելորդ հատվածները, որից հետո ստացված պատկերը հիշում թվային նյութերի համար նախագծված ձևաչափերից որևէ մեկով (նպատակահարմար են TIFF և PDF ձևաչափերը): PDF նիշքի ծավալը փոքրացնելու համար անհրաժեշտ է այն օպտիմալացնել, որն էլ իրականացվում է «Adobe Acrobat Professional» ծրագրի միջոցով: Հաջորդ քայլն արդեն PDF ձևաչափի վերածված նյութը համացանցում հասանելի դարձնելն է, որի համար անհրաժեշտ է կատարել այդ նյութերի մատենագիտական նկարագրություն՝ միջազգայնորեն ընդունված ստանդարտներից որևէ մեկով:

Երկարաժամկետ պահպանության և առօրյա օգտագործման համար կատարվում է լուսածրում՝ տարբեր ձևաչափերով: Երկարաժամկետ պահպանության նիշքերը պետք է լինեն չսեղմված TIFF ձևաչափով: Առօրյա օգտագործման նիշքերը ցանկալի է, որ լինեն սեղմված ձևաչափերով: Տեքստային նիշքերի համացանցային ներկայացման լավագույն ձևաչափը PDF-ն է (ԱՂՈՅԱՆ 2015, 13-17):

Տպագիր նյութերի փոխարինումը էլեկտրոնայինի և դրանց տեղադրումը համացանցում ունի մի շարք առավելություններ (ԳՍՊՈՅԱՆ 2017, 81).

- Շուրջօրյա հասանելիություն:
- Ընթերցողների հարմարավետություն, ժամանակի խնայողություն:
- Փնտրման և դիտման լայն հնարավորություն:
- Տպագիր ժառանգության երկարաժամկետ պահպանություն:

Այսպիսով, թվանշային գրադարանը տեղեկատվական համակարգ է, որը թույլ է տալիս հուսալիորեն պահպանել և արդյունավետ կերպով օգտագործել միջազգային ստանդարտներով մուտքագրված էլեկտրոնային պաշարները, հասանելի է շուրջօրյա, ունի փնտրում կատարելու ճկուն հնարավորություն, ինչպես նաև նյութի ներբեռնման և բնօրինակից նույնական պատճենի ստեղծման հնարավորություն:

Բաց/ազափ կողերով ծրագրաշարերի ներկայացում:

Կոմերցիոն տեսակետից համակարգչային ծրագրերը բաժանվում են երկու խմբի՝ վճարովի և ազատ տրամադրվող: Վերջիններս կոչվում են Ազատ/բաց կողերով ծրագրեր (ԲԿԾ): Նման ծրագրաշարի կողը հասանելի է բոլորին: Բաց կողով ծրագրակազմն անվճար է և ցանկացած օգտագործողի կողմից կարող է ընդլայնվել կամ փոփոխվել: Օգտագործողը արդեն ստեղծված կողը կարող է օգտագործել սեփական կարիքների համար, կարող է ձևափոխել այն, ինչպես նաև սկզբնական կամ արդեն ձևափոխված կողը փոխանցել ուրիշներին՝ հետագա օգտագործման համար:

Ազատ ծրագրաշարի գաղափարը ձևավորվել է 1960-ականների վերջին: ԲԿԾ-ի զարգացման փուլում կարևոր իրադարձություն էր ԲԿԾ բիզնես մոդելը, որն առաջարկվել էր 1998 թ. OSS խմբի կողմից (Open Source Initiative, OSI):

Աշխարհում օգտագործվող ԲԿԾ ամենահայտնի համակցությունը, որը կոչվում է «LAMP», ներառում է «Linux»-ը՝ որպես օպերացիոն համակարգ, «Apache»-ը՝ վեբ սերվերի համար, «MySQL»-ը՝ տվյալների բազայի կառավարման համար, «PHP»-ն՝ որպես ծրագրավորման գործիք: Աշխարհի վեբ կայքերի մոտ 60%-ն օգտագործում է «Apache» ծրագրակազմ: Որպես համացանցի դիտակ՝ բավականին տարածված է «Mozilla Firefox»-ը, իսկ որպես գրասենյակային ծրագրակազմ՝ «Open Office»-ը և «LibreOffice» (КЕДРИН, СОКОЛО-BA 2007, 4):

ԲԿԾ համակարգերը պետք է արտոնագրված լինեն առանձնահատուկ պայմաններով: Ամենատարածվածներն են «Ընդհանուր հանրային արտոնագիրը» (GNU General Public License /GPL/), «Ստեղծագործական համայնքներ» (Creative Commons /CC/ և BSD (Berkeley Software Distributio/) արտոնագրերը (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2011, 21-27):

ԲԿԾ համակարգերը պարտադիր պետք է բավարարեն հետևյալ 10 պայմաններին.

- Անվճար տարածում:
- Ծրագրի սկզբնական կոդի անարգել տրամադրում:
- Ձևափոխման հնարավորություն, ինչպես նաև փոփոխված ծրագրի ազատ տարածում:
- Եթե նույնիսկ հեղինակային կողմ փոփոխել չի կարելի, ապա ածանցյալ ծրագրերը և դրանց սկզբնական կոդերը պետք է հնարավոր լինի ազատ տարածել:
- Խտրականության բացակայություն առանձին մարդկանց կամ խմբերի հանդեպ:
- Խտրականության բացակայություն օգտագործման նպատակի հանդեպ:

➤ Արտոնագրի տարածում:

➤ Արտոնագիրը չպետք է կապված լինի կոնկրետ արտադրանքին (ծրագիրը չի կարող տրամադրվել որպես մեկ այլ, ավելի խոշոր ծրագրաշարի մաս):

➤ Արտոնագիրը չպետք է խոչընդոտի այլ ծրագրերի օգտագործմանը (պարտադիր չէ ԲԿԾ համակարգերը օգտագործել միայն և միայն այլ ԲԿԾ համակարգերի հետ համատեղ):

➤ Արտոնագիրը տեխնոլոգիական տեսանկյունից պետք է լինի չեզոք (տեխնոլոգիական լուծումները կարող են լինել տարբեր):

ԲԿԾ-ին ամբողջական կամ մասնակի անցման մասին որոշում կայացնելիս պետք է համեմատել դրական և բացասական կողմերը: Սովորաբար բերվում են հետևյալ փաստարկները.

Կողմ փաստարկներ.

➤ Լիարժեք վերահսկողություն - օգտվողը ինքը կարող է փոփոխել ծրագիրը:

➤ Անվտանգություն – ԲԿԾ համակարգերում օգտվողը հնարավորություն ունի ուսումնասիրելու ծրագիրը և շտկել առաջացող խնդիրները:

➤ Տեղայնացում – ԲԿԾ համակարգերը հեշտ է տեղայնացնել, նույնիսկ փոքր լեզվական խմբերի համար:

➤ ԲԿԾ համակարգերը անվճար են տեղադրվում:

➤ ԲԿԾ-ն տրամադրում են լավ խորհրդատվական աջակցություն մասնագետների վերապատրաստման և ծրագրի ուսումնասիրման հարցում:

Դեմ փաստարկներ

➤ Կոմերցիոն ծրագրերն ունեն ավելի լավ տեխնիկական աջակցություն:

➤ Կոմերցիոն նախագծերը արագ են զարգանում:

➤ Թաքնված ծախսեր կապված ԲԿԾ տեղադրման հետ:

➤ Կոմերցիոն շուկայում առկա է բարձր մրցակցություն:

Բաց/ազատ կոդերով ծրագրերի կիրառությունը արագորեն տարածվեց աշխարհում: Այն սկսեցին օգտագործել տարբեր ոլորտ-

ներում, այդ թվում նաև գրադարաններում: Այնուամենայնիվ, հայաստանյան գրադարանները դեռ բավականաչափ տեղյակ չեն իրենց գործունեությունը ավտոմատացնելու համար այս ծրագրային գործիքների օգտագործման հնարավորություններից:

Գրադարանային ոլորտի համար ստեղծվել են ԲԿԾ-ի մի շարք համակարգեր, որոնցից ամենահայտնիներն են.

➤ Ինտեգրացված գրադարանային համակարգեր՝ Koha, Evergreen, Openbiblio

➤ Հավաքածուների կառավարում՝ Greenstone, ePrints, DSpace, OJS-PKP

➤ Վեբ հանգույցներ՝ Plone, Drupal

➤ Հեռաուսուցում՝ Moodle, Ilias, Sakai

➤ Նիշերի օպտիկական ճանաչում՝ Tesseract /Google/

Համակարգային ապահովման ծրագրերից աշխատանքային կայանների համար հայաստանյան գրադարաններում ամենատարածվածներն են «Windows», իսկ սպասարկող կայանների համար՝ «Linux» համակարգերը:

Ներկայացնենք Հայաստանի գրադարաններում կիրառվող գրադարանային գործառնությունների ավտոմատացման ԲԿԾ համակարգերից մի քանիսը:

Հայաստանի գրադարաններից ԲԿԾ ծրագրաշարերի կիրառման առումով առաջամարտիկը ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանն է: Գրադարանը հաջողությամբ փորձարկում և ամենօրյա աշխատանքում կիրառում է ԲԿԾ-ից շատերը: Հայաստանյան գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակը և ՀԳԳ էլեկտրոնային քարտարանը, որոնք ստեղծվել էին «ALEPH» կոմերցիոն համակարգով, 2016 թ. հաջողությամբ փոխարինվել են «Koha» համակարգով, որը բաց կողերով գրադարանային համակարգ է: «Koha» ծրագրային ապահովումը կարող է օգտագործել ինչպես առանձին անկախ գրադարանը, այնպես էլ գրադարանների միավորված խումբը, որ նախընտրել է ստեղծել միասնական քարտարան: Ցանկացած մարզային, համայնքային գրադարան կարող է

օգտվել այս անվճար ծրագրային ապահովումից, որը մշակված է գրադարանագիտության և տեղեկատվական գիտության բնագավառներում առկա միջազգային չափանիշների համաձայն: Այսօր արդեն Հայաստանյան գրադարանների էլեկտրոնային համահավաք գրացուցակին¹ միացել են հանրապետական, մարզային և բուհական 33 գրադարաններ, որոնք Koha» համակարգով մուտքագրում են իրենց գրադարաններում առկա գրականությունը: Ծրագրի շնորհիվ միավորված գրադարանների ընթերցողները կարող են փնտրել և գտնել իրենց նախընտրած նյութը միմյանց շտեմարաններից, պատվիրել առցանց, կատարել տացք, վերադարձ և այլն (ԳՐԻ-ԳՈՐՅԱՆ 2020, 95):

Հիմնարար գիտական գրադարանը հնատիպ և վաղ շրջանի հրատարակությունների թվայնացման աշխատանքները իրականացրել և շարունակում է իրականացնել «Greenstone» ծրագրով, որը ևս բաց կոդերով ծրագրաշարերից է՝ նախատեսված թվային հավաքածուների ստեղծման և դրանց սպասարկման համար²: Գիտական ամսագրերի հոդվածների մուտքագրումը ՀԳԳ-ը իրականացրել է «ePrints» համակարգով: Այժմ այդ աշխատանքներն արվում են «Dlibra» համակարգով: Համակարգը իրենից ներկայացնում է թվային պահոց, որը հնարավորություն է տալիս պահպանել տարբեր տեսակի թվային օբյեկտներ:

Նիշերի օպտիկական ճանաչման համար ՀԳԳ-ում կիրառվում է «ABBY FineReader» ծրագիրը, Հայաստանի ազգային գրադարանում օգտագործում են «Tesseract» բաց/ազատ կոդերով ծրագիրը:

Հայաստանի ազգային գրադարանում ևս լայն կիրառություն գտան ԲԿԾ համակարգերը: Հայաստանի ազգային գրադարանը հանդիսանում է հայաստանյան գրադարանների համահավաք գրա-

¹ Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ
<https://armunicat.nla.am/> (29.05.2023)

² Գրինսթոուն թվային գրադարանի ծրագրաշար <http://greenstone.flib.sci.am>
(29.05.2023)

ցուցակի սպասարկողը: Ստեղծվել և Հիմնարար գիտական գրադարանի հետ համատեղ աշխատանքներ են իրականացվել «Հայ գիրք», «Հայ մամուլ» էլեկտրոնային շտեմարաններում: Հավաքածուների կառավարում իրականացնող «ePrints» համակարգով Հայաստանի ազգային գրադարանը ստեղծել է «Հայաստանի ատենախոսություններ» էլեկտրոնային շտեմարանը: Ներկայումս անցում է կատարվել «ePrints» համակարգից «Dspace» համակարգ, որը նույնպես պատկանում է ԲԿԾ ընտանիքին:

Գիտատեխնիկական և Հանրապետական գիտաբժշկական գրադարանները աշխատում են կոմերցիոն «IRBIS» համակարգով: IRBIS-ը տիպիկ ինտեգրված լուծում է գրադարանային տեխնոլոգիաների ավտոմատացման ոլորտում և նախատեսված է ցանկացած տեսակի և ուղղվածության գրադարաններում օգտագործելու համար:

Համակարգը լիովին համապատասխանում է նման համակարգերի միջազգային պահանջներին և աջակցում է մատենագիտական բոլոր ստանդարտներին և ձևաչափերին: Համակարգը թույլ է տալիս նկարագրել բոլոր տեսակի հրապարակումները:

Ավ. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարանը ընթերցողների էլեկտրոնային սպասարկումը իրականացնում է «ELGRAD» համակարգով, որը նույնպես կոմերցիոն համակարգ է: Համակարգը նախատեսված է ընթերցողների էլեկտրոնային սպասարկման կազմակերպման և գրադարանների գործառույթների վարման ավտոմատացման համար: «ELGRAD» համակարգը բաղկացած է երկու ենթահամակարգերից.

➤ Ընթերցողների էլեկտրոնային սպասարկման և գրակառույցի ընթերցման համակարգ,

➤ Գրադարանային գործառույթների էլեկտրոնային վարման ենթահամակարգ³:

³ Էլգրադ ծրագրի քննարկում <http://isahakyanlibrary.am/news056.html>
(29.05.2023)

Ծրագիրը հնարավորություն է ընձեռում գրադարանի ընթերցողներին սպասարկել էլեկտրոնային տարբերակով:

Ամփոփում

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գրադարանները կառույցներ են, որտեղ պահվում են մեզ հասած տպագիր նյութերը, որոնք պարտավոր են պատշաճ կերպով փոխանցել սերունդներին: Այս խնդիրը լուծելու համար ժամանակակից գրադարանները օգտվում են տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից: Գրադարանների ավանդական գործառույթների կողքին ձևավորվում են էլեկտրոնային գործառույթներ՝ ընթերցողի էլեկտրոնային գրանցում, էլեկտրոնային սպասարկում, նյութի էլեկտրոնային փնտրում և այլն: Արդյունքում մեծապես բարելավվում է ընթերցողների սպասարկման որակը: Փոխվում է գրադարանավարի կերպարը: Պահանջվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետող գրադարանավարներ: Սա որակական քայլ է գրադարաններում՝ արհեստական բանականության կիրառման ուղղությամբ: Անհրաժեշտ է դառնում թվային գրադարանների ստեղծումը: Դրանք ապահովում են նյութի հասանելիությունը ցանկացած ժամի, ցանկացած վայրից, ապահովում՝ գրադարանային հավաքածուների երկարաժամկետ պահպանությունը: Կարևորվում է բաց կոդերով համակարգերի կիրառումը: Հայաստանի գրադարաններն ակտիվ թվայնացման աշխատանքներ են իրականացնում՝ կիրառելով բաց/ազատ կոդերով ծրագրաշարեր: Մի շարք ծրագրեր արդեն լայն կիրառություն ունեն հայաստանյան գրադարաններում, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել թվայնացման լայնածավալ աշխատանքներ:

Օգրագործված գրականության ցանկ (References)

ԱՂՈՅԱՆ 2015 – Աղոյան, Ն. (2015), էլեկտրոնային գրքի ձևաչափերի ներկայացում և դրանց կիրառումը հայատառ նյութերի պարագայում, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 13-17 [Aghoyan, N. (2015) Introducing e-Book Formats and Their Applications for Armenian Script Materials, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(1), 13-17];

ԳՍՊՈՅԱՆ 2002 – Գսպոյան, Ա. (կազմ.) (2017), *Ուղեցույց ժամանակակից գրադարանավարների համար*, Երևան, «Մխիթար Սեբաստացի», 117 [Gspoyan, A. (comp.) (2017), *Ughets'uyts' Zhamanakakits' Gradaranavarneri Hamar*, Yerevan, “Mkhitar Sebastats'”, 117];

ԳՐԻԳՐԻՅԱՆ 2015 – Գրիգորյան, Մ. (2015), Հայ գիրքը՝ պատմության քառուղիներում (համառոտ ակնարկ), *Բանբեր Հայաստանի գրադարանների* (2015), 1(1), 55-64 [Grigoryan, M. (2015), Armenian Book in the Crossroads of The History Short Essay, *Bulletin of Armenian Libraries (Yerevan)*, 1(1), 55-64];

ԳՐԻԳՐԻՅԱՆ 2020 – Գրիգորյան, Կ. (կազմ.) (2020), «Կոհա» քարտազրման USMARC դաշտերի ուղեցույց, Երևան, 95 [Grigoryan, K. (2020) “Koha” Kartagrman USMARC Dashteri Ughets'uyts', Yerevan, 2020, 95];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2011 – Զարգարյան, Տ. (2011), Թթթթթթթ նյութերի թվայնացման առանձնահատկությունները, *Գիտության աշխարհում* (Երեվան), 1, 21-27 [Zargaryan, T. (2011), Tghtayin Nyuteri Tvaynats'man arandznahatkutyunnery, *Gitutyashkharhum* (Yerevan), 1, 21-27];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2015 – Զարգարյան, Տ. (2015), Հայաստանում թվային գրադարանի ստեղծման պատմությունից (Հայացք 25 տարվա անցած ուղուն), *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 3-12 [Zargaryan, T. (2015), From the History of Developing Digital Libraries in Armenia: 25 Years of Library Automation in Armenian, *Bulletin of Armenian Libraries (Yerevan)*, 1(1), 3-12];

ԻՇԽԱՆՅԱՆ 2012 – Իշխանյան, Ռ. (2012), Հայ գրքի պատմություն, Երեվան, Անտարես, 2012, 536 [Ishkhanyan, R. (2012) *Hay Grqi Patmutyuan*, Yerevan, Antares, 536];

ԼԵՎՈՆՅԱՆ 1958 – Լևոնյան, Գ. (1958), Հայ գիրքը և փպագրության արվեստը, Երևան, Հայպետհրատ, 253 [Levonyan, G. (1958), *Hay Girqyev Tragrutyash Arvesty*, Yerevan, Armenian State Publishing House, 253];

КЕДРИН, СОКОЛОВА 2007 – Кедрин, А., Соколова, Н. (2007), Использование программного обеспечения с открытым исходным кодом в библиотеках: за и против (доклад), “Информационные технологии, компьютерные системы и издательская продукция для библиотек”. Одинадцатая международная конференция и выставка Libcom-2007, Москва, 4 [Kedrin, A, Sokolowa N. (2007), Ispolzovanie Programnogo Obespechenie s Otkrutim Iskhodnim Kodom v Bibliotekakh: Za I Protiv, *Information Technolo-*

gies, *Computer Systems and Publishing Products for Libraries* (Moscow). 11th International Conference and Exhibition Libcom-2007, 4].

THE IMPORTANCE OF CREATING DIGITAL LIBRARIES

Presentation of free/open source software

NELLY HAYRAPETYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Key words: Digital library, technological development, library functions, software, open access, accumulation of information, long-term preservation.

The study shows that libraries are structures where the printed materials that have come down to us are preserved to pass on to the next generation. To solve this problem, modern libraries use the opportunities provided by information technologies. Along with the traditional functions of libraries, electronic functions are being formed: electronic registration of the reader, electronic service, electronic search of material, etc. As a result, the quality of service to readers is greatly improved. The character of the librarian is changing. Librarians with knowledge of modern information technologies are required. This is a qualitative step towards the use of artificial intelligence in libraries. The creation of digital libraries becomes necessary. They provide access to material at any time, from any place, and ensure long-term preservation of library collections. The use of open source systems is emphasized. Armenian libraries are actively digitizing, using open/free source software. A number of programs are already widely used in Armenian libraries, which makes it possible to carry out large-scale digitization works.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ ԳՈՎԱԶԴԻ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ՀՏԴ 021.7(479.25) +

DOI: 10.54503/2953-8092.2023.1(1)-17

ԱՆՈՒՇ ՍԵՐՅՈՒԺԱՅԻ ՄԱԿԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Բանալի բառեր՝ Ժամանակակից գրադարան, հանրային կապեր, գրադարանային գործառնություններ, գովազդ, տեղեկատվության փոխանցում, սոցիալական ցանցեր:

Ներածություն

Գրադարանը միայն գիրք սպասարկելու և ընթերցելու վայր չէ. այն միջավայր է ինքնազարգանալու և կրթվելու համար: Տեղեկատվական դաշտի սահմանների ընդլայնումը, տեղեկատվության հավաքագրումը, մշակումն ու սպասարկումը առանցքային է դարձել հասարակության զարգացման ճանապարհին: Կարևոր այս գործառնության իրականացման պատասխանատուներն առաջին հերթին գրադարաններն են, որոնք միևնույն ժամանակ պետք է ստանձնեն այդ տեղեկատվությունը հասարակությանը մատչելի դարձնելու ուղիների համակարգման ողջ պատասխանատվությունը: Անխուսափելի է այն փաստը, որ ժամանակակից PR-ը պետք է գտնի իրավիճակի լուծման տարբերակներ և ստեղծի նոր արժեքներ:

Պատմամշակութային զարգացման ընթացքում գրադարանը չի կորցրել իր ստեղծագործական դերը, ավելին, այն շարունակում է զարգանալ հասարակության նոր սոցիալ-մշակութային մոտեցումներին և պահանջներին համապատասխան: Գրադարանային բարենպաստ միջավայրը խթանում է օգտվողի ստեղծագործական-հետազոտական աշխատանքների իրականացմանը, գիտելիքների աճին, ինքնակրթությանը, բազմակողմանի զարգացմանը և այլն: Արդի շրջանում գրադարանը հանդես է գալիս որպես սոցիալ-հաղորդակցական, կրթադաստիարակչական, մշակութային և տեղեկատվական միջավայր, որն ունի համակարգված հավաքածու և կարող է թղթային, էլեկտրոնային և այլ կրիչներով այն տրամադրել հասարակության տարբեր շերտերին առանց սահմանափակումների¹: Ժամանակակից գրադարանները ժամանակի հետ համահունչ քայլելու համար, պետք է վերանայեն ավանդական գործառնությունները, մշակեն նոր չափորոշիչներ և գործունեություն ծավալեն նոր պահանջներին համապատասխան: Սույն ուսումնասիրության նպատակը ժամանակակից գրադարանի ձևավորման մեջ «հանրային կապեր» հասկացության վերարժևորումն է՝ որպես գրադարան-հասարակություն փոխադարձ հա-

¹ ՀՀ օրենքը գրադարանների և գրադարանային գործի մասին, հոդված 4
<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75198> (31.05.2023):

մագործակցության առանցքային կամուրջ: Սա ենթադրում է սոցիալական տարբեր հարթակներով և ֆիզիկական միջոցներով բարենպաստ պայմանների ստեղծում:

Հանրային կապերի դերը գրադարանի զարգացման մեջ

«Public Relations»-ը անգլերեն եզրույթ է, որը թարգմանաբար նշանակում է «հանրային հարաբերություններ»: PR երևույթի ամբողջական սահմանումը տալիս է անգլիացի Սեմ Բլեյքը. «Հանրային կապերը գիտություն է, մշակույթ, մեթոդների, հնարների, տեխնոլոգիաների միաձուլում՝ ուղղված արտաքին միջավայրի հետ փոխհամաձայնության հասնելուն, որը հիմնվում է ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության վրա» (БЛЕК 1990, 17): Հանրային կապեր (այսուհետ՝ PR) արտահայտությունը ենթադրում է տեղեկատվության տարածում և գովազդ, սակայն ոչ ուղիղ իմաստով: PR-ն ուղղակի ասված խոսք չէ, ոչ էլ փառաբանում: Այն զգացողություն է, վստահություն: Այսօր PR հասկացությունը մուտք է գործել տարբեր ոլորտներ, այդ թվում՝ գրադարաններ: Այն դարձել է անհրաժեշտություն ցանկացած մշակութային օջախի համար: PR գործիքակազմը տարբեր մոտեցումներով կիրառվում է գրադարաններում՝ նպաստելով այս կառույցների հանրայնացմանը, հասարակության հետ կայուն հարաբերություններ հաստատելուն:

Գիտելիքների տարածմանն ու ամրացմանը զուգահեռ զարգացել և ձևափոխվել է նաև գրադարանների գործելաոճը: Ժամանակակից գրադարանների կառավարման մեջ կարևորվում են գրադարանի մշակութային և հանրային գործառույթները, որոնք ձուլվում են սոցիալական ու տնտեսական միջավայրերին: Ինչպե՞ս ներգրավել նոր ընթերցողների, ինչպե՞ս գրավիչ դարձնել գրադարանը, ինչպե՞ս վերափոխել պայմանները, որպեսզի դրանք համահունչ դառնան հասարակության պահանջներին և այլն: Այս հարցերի պատասխանների փնտրտուքի ժամանակ ներկայում կիրառվում են մարքեթինգային տարբեր հնարքներ և գործիքներ, որոնց շնորհիվ ընդլայնվում է գրադարաններից օգտվողների շրջանակը և ավելի մատչելի դառնում օգտվելու գործընթացը: Այս փոփոխությունների և փնտրտուքի շղթայում առավել կարևորվում է PR հասկացությունը:

Փաստ է, որ հանրային կապերը արդյունավետ միջոց է ընդլայնելու գրադարանային ապրանքների և ծառայությունների շրջանակը: Գրադարանը գովազդող նյութերը կարող են տեղադրվել տեղեկագրերի, անդորրագրերի, տեղեկատվական թղթապանակների, բուկլետների, բրոշյուրների, հրավիրատոմսերի և պաստառների վրա, որոնց տպագրությունը կարող է ստանձնել հենց գրադարանը: Դա ոչ միայն դրամական օգուտ կլինի տվյալ հաստատության համար, այլև կարող է դառնալ ֆինանսական եկամուտ ապահովող աղբյուր: Գրադարանի PR գործունեությունը ենթադրում է բարեկեցիկ և դրական ազդեցությամբ միջավայրի ձևավորում, որը միանշանակ նպաստում է ընթերցողական նոր լսարանի ներգրավմանը: Ընդգրկուն այս գաղափարի ներքո միավորվում են գրադարանի արտաքին ֆիզիկական պայմանները, գրադարանավարների մասնագիտական որակները, վիրտուալ տարածքը և այլն: Այս ամենի համադրումը միտվում է գրադարանը ընթերցող կապերի ձևավորմանն ու հաստատմանը:

Յուրաքանչյուր գրադարան համակարգված և նպատակային աշխատանք է տանում հասարակության մեջ կառույցի վարկանիշը բարձրացնելու և տարբեր հասարակական շերտերին դեպի գրադարան գրավելու համար: Այս գործընթացում, իհարկե, կարևոր դեր ունի գրադարանի յուրաքանչյուր աշխատակից և բաժին, սակայն խիստ կարևոր է մասնագիտացված խմբի աշխատանքը: Թիրախավորված և մասնագիտական մոտեցումը միանշանակ առավել մեծ ազդեցություն է ունենում հասարակության մեջ տվյալ գրադարանի մասին ճիշտ պատկերացում ստեղծելու վրա: Գրադարանի նպատակն է ստեղծել «դրական կերպար» և պահպանել ու զարգացնել այն իր թիրախային լսարանում: Միևնույն ժամանակ՝ ստեղծել պայմաններ՝ նոր լսարան ներգրավելու և իր մշտական օգտվողը դարձնելու համար: Անհրաժեշտ է վերահսկել, թե ինչ են մտածում և զգում մարդիկ, ինչ կարիք և պահանջմունք ունեն, ինչ են ակնկալում տեսնել և ստանալ գրադարանում, ինչն է հիասթափեցնում և վանում: Վերոնշյալ կետերը գործոններ են, որոնց ճիշտ վերլուծությունը հնարավորություն է տալիս վերակազմակերպվել և առաջ շարժվել: Սա ընդլայնում է գրադարանի՝ որպես մշակութային և տեղեկատվական հաստատության գործունեության սահմանները:

Չպետք է շփոթել PR և գովազդ հասկացությունները: Հասարակայնության հետ կապերն ուղղված են պահպանելու ներդաշնակ հարաբերություններ միջավայրի հետ: Գրադարանի PR-ի նպատակն է ստեղծել բարենպաստ սոցիալական դաշտ և դրան համապատասխան կատարել իր գործառույթները՝ հանրության ուշադրությունը սևեռելով իր վրա: Քանի որ գործառույթներն առնչվում են տարբեր սոցիալական խմբերին և լսարաններին, պահանջվում է զգոնություն՝ չթերանալու և դրանով իսկ գրադարանի վարկանիշը չիջեցնելու համար: Վատ պայմանները, գրադարանավարի ոչ ճիշտ վերաբերմունքը, ճճգրտված տվյալները, մասնագիտական ոչ ճիշտ մոտեցումը կարող են վնաս հասցնել գրադարանի վարկանիշին: Սա ևս նախապայման է՝ հանրության հետ հարաբերությունների կարգավորումը մասնագետների թիմին վստահելու համար: Գրադարանի PR գործունեությունը ենթադրում է.

- Իրավիճակի վերլուծություն, շուկայի պահանջարկի և արտադրանքի համադրում:
- Հայտարարությունների թիրախային խմբերի ուսումնասիրում:
- Թիրախային լսարանների սահմանում:
- Գործունեության խթանմանն ուղղված գործողությունների պլանավորում:
- Գովազդային հոլովակների պատրաստում, արդյունավետության որոշում:

Այսօր գրադարաններում մշակվում են սպասարկման և տեղեկատվության մատուցման համընդհանուր ձևեր՝ ավանդականի շրջանակից դուրս գալու համար: Ամրագրվում է այն փաստը, որ օգտվողը դառնում է գրադարանի վարկանիշը ձևավորողներից մեկը: Սրա շնորհիվ բարձրանում է ներդրում ունենալու զգացողությունն, ինչն էլ իր հերթին խթանում է նախաձեռնությամբ հանդես գալու որոշումը: Այսինքն՝ ընթերցողը պասիվ հանդիսատեսից վերածվում է մասնակցի, ներգրավվում է որոշ գործընթացների մեջ, ինչը նպաստում է վստահության մթնոլորտի բարձրացմանը (БУРСИНА 2006, 65-73):

Ամենօրյա աշխատանքը փաստում է, որ այն հարցը, թե ում է ուղղված գրադարանի այս կամ այն առաջարկը, ունենում է ընդհանուր մի պատասխան՝ բոլորին: Սակայն այդ «բոլորը» մեծամասամբ վերածվում է «ոչ ոքի»: Հետևաբար, վստահության մթնոլորտ ստեղծելու համար գրադարանը պետք է թիրախավորի և տարբերակի ծառայություններն ըստ բովանդակության, լսարանի, անհրաժեշտության և այլն: Սա պետք է հաշվի առնել գրադարանային ծառայությունների խթանման ռազմավարություն կառուցելիս, քանի որ որքան ճշգրիտ որոշվի հասցեատերը, այնքան ավելի արդյունավետ կլինի հաղորդագրությունը: PR գործունեության արդյունավետության համար խիստ կարևոր է հաղորդակցության ծավալի մեծացումը: Իրական արդյունքի հասնել հնարավոր է միայն համակարգված գործողություններով: Ցավոք, գրադարանները սովորաբար սահմանափակվում են իրենց սեփական հայտարարությունների տախտակում տեղեկատվություն տեղադրելով, երկու-երեք լրագրողների հրավիրելով և պասիվ սպասելով արդյունքին: Մինչդեռ անհրաժեշտ է յուրաքանչյուր իրադարձության մասին տեղեկատվություն է ուղարկել բոլոր ՁԼՄ-ներին միաժամանակ:

Ըստ ընդունված կարծիքի՝ եթե կա մի տեղ, որտեղ գրադարանային ծառայությունները պահանջված են, ապա լրացուցիչ ջանքեր գործադրելու կարիք չկա: Սա թյուր կարծիք է, քանի որ գրադարանից օգտվողին անհրաժեշտ է միշտ պահել «լարված» վիճակում, որպեսզի նա ազատ ժամանակ ունենալու դեպքում նախապատվությունը տա հենց տվյալ գրադարանին: Ուրեմն, PR-ը ենթադրում է տեղեկատվության պարբերաբար տեղադրում, գրադարանի ծառայությունների անընդհատ հիշեցում: Նման հիշեցման մեխանիզմներ կարող են դառնալ ընթերցողների, կամավորների, մամուլի ակումբները, մի բան, որ հաստատնյան գրադարաններում գրեթե բացակայում է:

Որևէ ծառայություն կամ «ապրանք» մատուցելուց առաջ գրադարանը պարտավոր է մշակել գործողությունների կայուն հերթականություն: Արդյունքը կբավարարի միայն այն դեպքում, եթե պահպանվի գործողությունների ամբողջականությունը, փոխըմբռնումը, համահունչ լինելը և թափանցիկությունը: Հայաստանյան գրադարաններից որոշներն ունեն հասարակայնության հետ կապերի բաժին. նրանց ծավալած գործունեությունը գրեթե նորարարություն չէ մարքեթինգի ասպարեզում: Ավելին, նրանք բոլորը, առանց մի որևէ կետ բաց թողնելու, հետևում են մշակված և «հաստատված» ձևաչափին: Գրեթե բոլորն ունեն վեբ կայքէջեր և սոցիալական հարթակներ, որոնցով իրականացվում է տեղեկատվության փոխանցումը: Կայքերը առանձնապես չեն տարբերվում միմյանցից, կառուցված են «քարացած» կանոններին համապատասխան, սակայն ունենք գեղագիտական առանձնահատկություններ: Մինչդեռ կայքէջը պետք է լինի ճկուն, տարբերվող և հագեցած: Շատ կարևոր են շենքային պայմանները, ինչը հնարավորություն է տալիս մասնագետներին գրադարանը ներկայացնել «նոր լույսի ներքո»: Լուսավոր, ընդարձակ, գունագեղ պայմանները միանգամից գրավում են ընթերցողներին: Որոշ գրադարաններ արդեն առաջարկում են բաց դարակային համակարգ, որը ևս բավական գրավիչ է: Կազմակերպվում են միջոցառումներ ոչ միայն գրադարանների ներսում, այլև գրադարաններից դուրս,

մասնակցում են կամ հովանավորում են հասարակության տարբեր շերտերին հետաքրքրող միջոցառումներ: Այս ամենը նպաստում է, որպեսզի ամրապնդվի այն հարգանքը, որ կա հասարակության մեջ դեպի գրադարան հասկացությունը:

Գովազդը և գրադարանը

Գրադարանային գովազդի զարգացման միտում Հայաստանում նկատվում է հատկապես վերջին տասնամյակներում: Այն դարձել է գրադարանային գործունեության անբաժանելի մասը: Գրադարանային գովազդը ենթադրում է.

➤ Տեղեկատվության տարածման տարբեր միջոցների օգտագործում՝ պաստառներ, ռադիո, տեսահոլովակներ, նամակներ, էջադիրներ և այլն:

➤ Լուսաբանում՝ հրապարակումներ ԶԼՄ-ներում:

➤ Նյութերի վերահսկում: Գրադարանը իրավասու է վերահսկելու ԶԼՄ-ներում տեղադրված իր նյութերը, ինչպես նաև որոշակիորեն փոփոխելու կամ ուղղելու դրանք:

➤ Գրադարանների վերաբերյալ նյութերի լուսաբանման տևողություն:

➤ Հաղորդագրության ստեղծարարություն:

Գրադարանը մշտապես պետք է հանդես գա գովազդային հաղորդագրության վերաբերյալ նոր գաղափարներով, որպեսզի հնարավոր լինի նորովի ներկայացնել ծառայությունները: PR-ի դեպքում հաղորդագրության կրեատիվությունը ևս մեծ նշանակություն ունի, սակայն այս պարագայում անհրաժեշտ է շեշտադրել հաղորդագրության կարևորությունն ու արդիականությունը: Պետք է կարողանալ ճիշտ ժամանակին տրամադրել ճիշտ տեղեկատվություն՝ միաժամանակ չմոռանալով հաղորդագրության գրավչության, դրա կրեատիվության մասին: Գրադարանի մասին հասարակական կարծիք կարող է ձևավորվել լրատվամիջոցների՝ մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, էլեկտրոնային ԶԼՄ-ների միջոցով (XACAHOBA 2017, 5-8): Գրադարանային գովազդը հնարավոր է տարածել ուղղակի (անձամբ կամ փոստով հանձնվող գովազդային նյութեր, նամակներ, թերթիկներ), մամուլում (թերթեր, ամսագրեր, տեղեկատուներ), ռադիոյով, տպագիր միջոցներով (կատալոգներ, բուկլետներ, օրացույցներ), էկրանային ձևաչափով (կինո, հեռուստատեսություն), համացանցում (սոցիալական կայքեր, էլեկտրոնային էջեր), արտաքին (ցուցափեղկեր, պաստառներ), տրանսպորտային (փոխադրամիջոցների վրա կամ ներսում, կայարաններում, օդանավակայաններում), հուշանվերների տեսքով (ինքնահոսներ, թղթապանակներ, բացիկներ) և այլն (XACAHOBA 2017, 8-13):

Գրադարանային գովազդը պետք է լավ մշակված լինի: Այն ստեղծելիս հարկ է հաշվի առնել գրադարանի գտնվելու վայրը, հեղինակությունը, գրականության թարմացմանը հաճախականությունը և օգտվողների կոնկրետ խմբի նախասիրությունները: Ըստ այդմ՝ առանձնացվում են գրադարանային գովազդի տեսակներ.

➤ Կոնկրետ լսարանի համար նախատեսված գովազդ՝ ներգրադարանային, ընթերցողների համար, հնարավոր օգտվողների համար:

➤ Լսարան ներգրավելու համար նախատեսված գովազդ: Սա կարող է լինել զանգվածային, որը հաշվարկված է օգտվողների լայն շրջանակի համար և խմբակային՝ կոնկրետ խմբերի համար (КОЛЕЧНИКОВА 2009, 256):

Գովազդը կարող է պարունակել միայն հաղորդագրություն, ասենք՝ գրադարանի հասցեն: Այն գրադարանները, որոնք ունեն որոշակի արտադրանք (տարբեր տեսակի հրատարակություններ և տվյալների շտեմարաններ) և հասարակությանը տրամադրում են կանոնակարգված վճարովի ծառայություններ, շուկայում հանդես են գալիս իրենց տնտեսական նշանով: Այս տեսանկյունից ապրանքի գովազդը նպատակաուղղված է շահույթ ստանալուն: Գրադարանները կարող են զբաղվել առևտրային գովազդով, որն ուղղված է ոչ առևտրային սոցիոլոգիական, կրթական, դաստիարակչական նպատակների: Գովազդային գործունեությունը իր մեջ ներառում է գործընթացների որոշակի խումբ:

Գրադարանային գովազդը պետք է ունենա նպատակի կոնկրետացում, պատասխանատվության սահմանում, բյուջեի որոշում, գովազդային թեմայի մշակում, գովազդի միջոցի ընտրում, գովազդային հայտարարությունների ստեղծում, գովազդի ցուցադրման ժամանակի որոշում, գովազդի արդյունավետության որոշում (СУСЛОВА 2009, 255): Առանձնակի ուշադրություն պետք է դարձնել գովազդի հաղորդագրությանը, որը ենթադրում է մշակված քայլերի ամբողջություն, մասնավորապես.

➤ Պետք է հաշվի առնել օգտվողների կրթվածության աստիճանը (խոսքը չի վերաբերում գրագիտությանը կամ անգրագիտությանը):

➤ Օգտվողի համար գովազդվող ծառայության օգտակարության ընդգծումը:

➤ Գովազդվող ծառայության առավելությունների ընդգծումը, որով այն տարբերվում է շուկայում առաջարկվող նմանատիպ ծառայություններից

➤ Ծառայությունից օգտվելու կանոնների մանրամասն նկարագրություն:

Կարծում ենք՝ գրադարանների գլխավոր նպատակը հնարավորինս շատ ընթերցողների ներգրավումն է: Այս նպատակը ենթադրում է ծառայությունների շրջանակի նախնական կոնկրետացում, որպեսզի առաջարկվող ծառայությունն ունենա թիրախային լսարան, իսկ գովազդը հետաքրքրի այդ լսարանին: Օրինակ՝ համացանցային գովազդը կամ հեռուստագովազդը հիմնականում գրավում է երիտասարդներին, իսկ ռադիոգովազդը կամ տպագիր գովազդը գրավում է միջինից բարձր տարիքի անձանց:

Գրադարանային գովազդի համատեքստում խիստ կարևորվում է «արտաքին գովազդ» հասկացությունը, որը գրաֆիկական, տեքստային կամ այլ գովազդային հաղորդագրություն է, տեղադրվում է ժամանակավոր կամ ստացիոնար կոնստրուկցիաների վրա, որոնք տեղակայված են լինում բաց տարածքում, ինչպես նաև շենքերի արտաքին մակերեսներին, անցումներում, խանութներում և սուպերմարկետներում: Հմտորեն օգտագործելով այդ լուծումները՝ գրադարանը կարող է ձևավորել և փոխել իր իմիջը:

Գրադարանի համար շատ կարևոր է մրցունակությունը: Այս դեպքում գովազդի նպատակն է ցույց տալ այն առաջարկները կամ ծառայությունները, որոնց շնորհիվ տվյալ գրադարանը կարող է առավելություն ունենալ մյուս գրադարանների նկատմամբ: Կարելի

է կիրառել տարբեր հնարքներ, օրինակ՝ շրջագայություն դեպի գրադարան, շնորհանդեսներ, ցուցահանդեսներ և այլն:

Գրադարանային գովազդն արդյունավետ կլինի իրականացնել հասարակության տարբեր շերտերում, սակայն առավել կարևորվում են ուսումնական հաստատությունները, ուր գովազդն ունի իր առանձնահատկությունները: Գրադարաններից մեծամասամբ օգտվում են կրթական համակարգի տարբեր ներկայացուցիչները՝ ուսանողներ, դպրոցականներ, ուսուցիչներ, գիտնականներ, աշխատակիցներ: Ըստ այդմ՝ պետք է վերանայել մատուցվող ծառայությունների որակը, մատուցման ձևաչափը, որպեսզի հնարավոր լինի գովազդի միջոցով այս թիրախային լսարանները բերել գրադարան և պահել նրանց հետ ամենօրյա կապը: Հատուկ այս լսարանների համար պետք է մշտապես հիշեցնել գրադարանի նորությունները և մատենագիտական ծառայությունները: Կրթական հաստատությունների նախասրահներում, լսարաններում, միջանցքներում պետք է փակցված լինեն տեղեկատվության հատուկ ցուցանակներ՝ նախատեսված գրադարանային գովազդի համար (БОРИСОВА 2002, 224):

Արդի շրջանում տեխնոլոգիական զարգացմանը զուգահեռ խիստ կարևորվում է համացանցային գովազդը, որն առավել ընդունելի է հատկապես երիտասարդ սերնդի համար: Անհրաժեշտ է կայքէջերի և սոցիալական տարբեր հարթակների միջոցով տարածվի տեղեկատվությունն ու գովազդը: Ցանկալի կլինի ստեղծել թիրախային լսարանների ընդհանուր հարթակներ, որոնց միջոցով նրանք ամեն օր կստանան տեղեկատվություն այս կամ այն նորության կամ ծառայության մասին:

Ամփոփում

Ամփոփելով՝ նշենք, որ ժամանակակից գրադարանների գործունեությունն առանց PR-ի և գովազդի հնարավոր չէ պատկերացնել: Հատկապես տեղեկատվության մեծ հոսքերի պարագայում գրադարանները պետք է կարողանան դառնալ մրցունակ՝ այդ ամենը ընթերցողին առավել արագ և արդյունավետ մատուցելու համար: Միջազգային հարթակներում, նաև Հայաստանում, գոյություն ունեն բազմաթիվ հնարքներ, որոնք թույլ են տալիս գրադարանները դարձնել ակտիվ և գրավիչ ժամանցի վայրեր: Իհարկե, Հայաստանում այդ գործընթացն արագ տեղի չի ունենում հատկապես գրադարանների սուղ ֆինանսական միջոցների պատճառով, սակայն զարգացման միտում արդեն իսկ նկատվում է: Հայաստանում առաջնային ենք համարում գրադարանների շենքային պայմանների, տարածքների, հնարավոր ընթերցողի և գրադարան փոխհարաբերությունների բարեփոխումը և պահպանումը: Սա պահանջում է ամենօրյա և տքնաջան աշխատանք, որը միանշանակ պետք է իրականացնեն մասնագիտացված թիմերը, որպեսզի նպատակը լինի արդարացված, իսկ աշխատանքը՝ արդյունավետ: Գրադարանները պետք է ունենան հատուկ մշակված ծրագրեր՝ նպատակի, գործողությունների հստակ հերթականությամբ, ինչը կապահովի արդյունքը: Պետք է կապ հաստատել ուսումնական հաստատությունների, տարբեր հիմնարկությունների, կազմակերպությունների հետ, կազմակերպել հանդիպումներ և

այլն: Նպատակը՝ տեղեկատվություն տրամադրել գրադարանի և նրա կողմից առաջարկվող ծառայությունների մասին:

Օգտագործված գրականության ցանկ

1. БЛЕК 1990 – Блек Сэм, *Паблик рилешнз. Что это такое?*, Москва, 1990.
2. БОРИСОВА 2002 – Борисова О., *Библиотечно-библиографическая реклама*, Москва, 2002.
3. БУРСИНА 2006 – Бурсина Ю. А. *Библиотечный PR. технологии создания системы доверия во внешних партнерских отношениях*, Справочник руководителя учреждения культуры, Москва, 2006, № 5, 65-73. https://www.library.ru/1/kb/articles/article.php?a_uid=262 (31.05.2023)
4. КОЛЕСНИКОВА 2009 – Колесникова М. Н., *Менеджмент библиотечно-информационной деятельности*, Москва, 2009.
5. СУСЛОВА 2009 – Сусллова И. М., *Менеджмент библиотечно-информационной деятельности*, СПб., 2009. <http://surl.li/iiees> (31.05.2023)
6. ХАСАНОВА 2017 – Хасанова Бенюх Алла, *Рекламная деятельность библиотеки*, СПб, 2017 <https://nauchkor.ru/pubs/reklamnaya-deyatelnost-biblioteki-58f39fd55f1be72b24e21398> (31.05.2023)

Հապավումներ

- ՋԼՄ – Զանգվածային լրատվական միջոցներ
 ՀՀ – Հայաստանի Հանրապետություն

THE ROLE OF PUBLIC RELATIONS AND ADVERTISING IN THE FORMATION OF THE MODERN LIBRARY

ANUSH MAKARYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Key words: *Modern library, public relations, library functions, advertising, information transfer, social networks.*

The activity of modern libraries cannot be imagined without PR and advertising. Especially in the case of a large flow of information, libraries must be able to become competitive in order to deliver it all to the reader more quickly and efficiently. On the international platforms, today also in Armenia, there are many tricks that allow to turn libraries into active and attractive places of entertainment. Of course, this process does not happen quickly in Armenia, especially due to the limited financial resources of libraries, but a trend of development is already visible. In Armenia, we consider the reform and preservation of the building conditions, spaces, potential reader and the library to be a priority in Armenia. This requires daily and painstaking work, which must definitely be carried out by specialized teams, so that the goal is justified and the work is effective. Libraries should have specially developed programs with a clear purpose and sequence of actions, which will ensure the result. It is necessary to establish contact with educational institutions, various institutions, organizations, organize meetings, etc. Purpose: to provide information about the library and the services it offers.

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (2010-2021 թթ.)*

ՀՏԴ 027.53(479.25) + 31

DOI: 10.54503/2953-8092.2023.1(1)-25

ԼԻԱՆՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ORCID: [0009-0009-3456-0421](https://orcid.org/0009-0009-3456-0421)

Սույն ուսումնասիրության նպատակը Սյունիքի մարզային և համայնքային գրադարանների վերջին տասնամյակում ծավալած գործունեության վերլուծությունն է՝ որպես ՀՀ մարզերի գրադարանների զարգացման մոդել: Անդրադառնալու ենք մարզի գրադարանների խնդիրներին և ձեռքբերումներին՝ որպես հիմք ունենալով սեփական դիտարկումները, ՀՀ վիճակագրական վարչության տվյալները, պետական որոշումներն ու փաստաթղթերը: Վերլուծությունն ընդգրկում է 2010-2021 թթ. ժամանակահատվածը: Կարծում ենք՝ ստացված արդյունքները հնարավորություն կտան դիտարկել մարզում գրադարանային գործի կազմակերպման դրական և բացասական կողմերը:

The goal of this study is the analysis of the activity of regional and community libraries of Syunik in the last decade as a model for the development of libraries in RA regions. We will address the problems and achievements of the libraries of the region, based on our own observations, the data of the Statistical Department of the Republic of Armenia, state decisions and documents. Analysis covers 2010-2021. Period. We believe that the obtained results

* Հոդվածը ներկայացվել է 11.03.2023, գրախոսվել է 16.05.2023, ընդունվել է տպագրության 22.05.2023:

The article was submitted on 11.03.2023, reviewed on 16.05.2023, accepted for publication on 22.05.2023.

will give an opportunity to consider the positive and negative aspects of the organization of library work in the region.

Ինչպես հղել՝ Գասպարյան Լ. (2023), Սյունիքի մարզում գործող գրադարանների վիճակագրական վերլուծություն (2010-2021 թթ.), *Լրապուհ Հայկական գրադարանային ասոցիացիայի* 1(1), 35-55:

[https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-25](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-25)

How to cite: Gasparyan L. (2023), Libraries Operating in Syunik Region: Statistical analyses (2010-2021), *Herald of the Armenian Library Association* 1(1), 35-55: [https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-25](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-25)

Քանակի բաներ՝ Սյունիքի տարածաշրջան, մարզային և համայնքային գրադարաններ, վիճակագրական վերլուծություն, գրադարանային հավաքածուներ, սպասարկում:

Ներածություն

Գրադարանային գործի կազմակերպումը տարբեր դարաշրջաններում ունեցել է իր առանձնահատկությունները: Այսօր գրադարանները հասարակության զարգացման անբաժանելի մասն են՝ որպես տեղեկատվություն հավաքագրող, ամփոփող և տարածող կառույցներ: Ահա ինչու վստահ կարող ենք պնդել, որ գրադարանային գործի ճիշտ կազմակերպումը կարող է իր առանձնահատուկ դերն ունենալ գիտելիքահենք հասարակության կայացման ու զարգացման բարդ գործընթացում: Ներկա ժամանակաշրջանում մեծ կարևորություն է տրվում ՀՀ մարզերի զարգացմանը, նրանցում սոցիալ-տնտեսական և մշակութային վերելքի արդյունավետության բարձրացմանը: Մարզերի մշակութային կյանքում առաջնահերթություն է համարվում նաև գրադարանային գործի կազմակերպումը¹, որն իրականանում է մի շարք խոչընդոտների հաղթահարման պայմաններում:

¹ Մարզային գրադարանների բյուջեն վերջին տարում կրկնապատկվել է <https://infocom.am/hy/article/8380> (22.05.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

1. Արտագաղթ – Ավելացել է բնակիչների հոսքը համայնքներից դեպի մայրաքաղաք և արտերկիր: Բնակչության նվազումը մարզերում ենթադրում է մի շարք խնդիրների առկայություն, որոնք ակամա խոչընդոտում են նաև գրադարանային գործի կազմակերպմանը:

2. Սոցիալական գործոն – Մարզերում առկա սոցիալական խնդիրները էապես նպաստում են մարդկանց մտածելակերպի վրա և ազդում կեցության ձևերի վրա: Սոցիալ-տնտեսական խնդիրները անմիջականորեն ազդում են մշակութային դաշտի վրա՝ մարդկանց մեջ մշակույթի հանդեպ առաջացնելով անտարբերություն:

3. Պետության աջակցություն – Մարզային գրադարաններն ունեն պետական աջակցության կարիք: Յուրաքանչյուր տարի հատկացվող գումարները և տրամադրվող միջոցները բավարար չեն գրադարանների գործունեության կայուն զարգացման համար:

4. Մասնագետներ – Այսօր գրադարանավարի մասնագիտությունը պահանջված չէ: Մասնագետների պակասը ևս լուրջ խնդիր է ոչ միայն մարզերում, այլ ընդհանրապես գրադարանների զարգացումն ապահովելու համար (ՄՈՒՐԱԴՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023, 404-418):

Հաշվի առնելով վերը նշված գործոնները՝ վստահ կարող ենք նշել, որ մարզերում գրադարանային գործի կազմակերպումը շատ ավելի բարդ գործընթաց է, քան մայրաքաղաքում:

Սյունիքի մարզի գրադարանների վիճակագրական վերլուծություն

Սյունիքի մարզային և համայնքային գրադարանները, ինչպես մյուս գրադարանները, իրականացնում են տպագիր արտադրանքի հավաքածուների պահպանում, համալրում, մշակում, գրադարանային տեղեկատվական մատենագիտական սպասարկման կազմակերպում, մարզի գրադարանների զարգացման և մեթոդական աջակցության ապահովում: Որպես մարզի մշակութային, տեղեկատվական ու կրթական կենտրոններ, ապահովելով գրականության առ-

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

կայությունն ու սպասարկումը, գրադարանային բնագավառի աշխատանքները, գրադարաններն առանցքային են համարում ընթերցողների հետ անմիջական շփումն ու հետադարձ կապը, տարաբնույթ միջոցառումների կազմակերպումը, մատենագիտական-տեղեկատվական, համակարգչային շտեմարանների ստեղծումը, էլեկտրոնային սպասարկումն ու տվյալների մուտքագրումը, ներհամակարգային ու միջգրադարանային բաժնույթի ծառայության կազմակերպումը, մարզի համայնքային գրադարանների, տեղական կառավարման մարմինների ու կրթական օջախների հետ համագործակցված աշխատանքներն ու ծրագրեր և այլն: Նշենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Սյունիքի մարզպետարանի կողմից իրականացվող մշակութային քաղաքականության շնորհիվ մարզում ընդհանրապես գրքի սպասարկման, ընթերցանության կազմակերպման աշխատանքները գտնվում են պատշաճ հիմքերի վրա, մարզային և համայնքային գրադարանների աշխատանքները մեծամասամբ համահունչ են ժամանակի ոգուն: Հատկապես պետք է առանձնացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարության օգնությունն ու միջամտությունը՝ գրադարաններում վերջին տարիներին իրականացված բարենորոգման աշխատանքների, ջեռուցման և ազդանշանային համակարգերի տեղադրման և այլ հարցերում: Այդ աշխատանքների օրգանական շարունակությունն է նաև գրադարանների համար նոր զույգի ու սարքավորումների ձեռքբերումը: Մարզային գրադարանի ֆոնդերը համալրվում են տպագիր արտադրանքի գրեթե բոլոր տեսակներով՝ գրքեր, գրքույկներ, ատլասներ, պարբերական և շարունակական հրատարակություններ, տեղեկատու և հանրագիտարանային բնույթի ունիվերսալ տեսակի գրականությամբ: ՀՀ ԿԳՄՍ նախարարության օջանքերով 2013-2021 թթ. ընթացքում մարզի շուրջ 80 համայնքային գրադարաններին պետպատվերով անվճար հատկացվել է մոտ 9.200 միավոր գրականություն:

Սյունիքի մարզի գրադարանների մի մասը, հատկապես մարզային գրադարանը, գործունեություն են ծավալում ժամանակի

պահանջներին համապատասխան՝ յուրացնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները: Իհարկե, առաջընթացը մի փոքր դանդաղ է լինում, սակայն արդեն որոշակի ձեռքբերումներ կան (ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՇԻՐԻՆՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆ 1996, 68): Նշենք, որ ներկայիս զարգացումը տանում է դեպի հիբրիդ գրադարան, այսինքն՝ գրադարան, որտեղ թղթային կրիչներին զուգահեռ գործածվում են նաև տեղեկատվության էլեկտրոնային կրիչները (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002, 262): Այդ առումով Սյունիքի մարզի որոշ գրադարաններ ընդլայնել են իրենց գործառույթները:

Նշված աջակցության ծրագրերը, պետական մոտեցումը, սակայն, չի բավարարում գրադարաններում հիմնային փոփոխություններ անելու համար: Մարզի ոչ բոլոր գրադարաններն են գտնվում բարվոք վիճակում: Հատկապես շատ են գյուղական գրադարանների խնդիրները, որոնք կապված են տարածքների կարգավիճակի, վերանորոգման, գույքի ձեռքբերման, գրքային ֆոնդերի համալրման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ: Գրադարանների շենքային պայմանները հիմնականում անբավարար են, ինչը խիստ վտանգում է գրքային ֆոնդի պահպանությունը, լիակատար օգտագործումը: Սյունիքի մարզում գործող գրադարանների հիմնախնդիրներից շարունակում է մնալ նոր գույքի ձեռքբերումը, ժամանակակից տեխնիկական միջոցներով ապահովումը: Առաջնային է համարվում է Կապանի, Քաջարանի, Գորիսի, Մեղրիի, Ագարակի և Սիսիանի գրադարանների վերանորոգումն ու նոր գույքով համալրումը: Մարզում գրադարանային ծառայությունների բարելավումը դիտարկվում է գրադարաններում ժամանակակից տեղեկատվական միջոցների ներդրմամբ, ինտերնետային ցանցին միացմամբ: Գրադարանային ծառայությունների բարելավման ուղղություններից է նաև ընդհանուր գրադարանային ցանցի ստեղծումը, որի կենտրոնը կարող է դառնալ Սյունիքի մարզային գրադարանը: Ընդհանուր գրադարանային ցանցում, ըստ առաջնայնության, կընդգրկվեն քաղաքա-

յին, այնուհետ գյուղական գրադարանները, որոնք նույնպես կիրականացնեն էլեկտրոնային սպասարկում:

Առկա ձեռքբերումներն ու խնդիրներն ամրագրելու համար շատ կարևոր է վիճակագրական վերլուծությունների պարբերաբար իրականացումը: Սա հնարավորություն կտա հետազոտել դաշտը, առանձնացնել խնդիրները և գտնել լուծումները:

Հայաստանի Հանրապետությունում գործող գրադարանների վիճակագրական վերլուծությունը փաստում է, որ հանրապետությունում գործում է 651 գրադարան, որից մարզային՝ 10, քաղաքային՝ 117, գյուղական՝ 502, մանկական՝ 22 (ՄՈՒԻՐԱԴՅԱՆ 2022, 3):

Սյունիքի մարզում 2023 թ. գործում է 81 գրադարան, որոնցից 21-ը քաղաքային համայնքների ենթակայությամբ, 56-ը՝ գյուղական, 1-ը՝ Սյունիքի մարզային գրադարանը՝ ՀՀ ԿԳՄՍ ենթակայությամբ, 3-ը՝ մանկական: Մարզում ընդհանուր գրադարանային ֆոնդը կազմում է շուրջ 1.094.309 միավոր: Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում չորրորդ բաժինը վերաբերում է մարզի գրադարաններին²: Ըստ ծրագրի՝ գրադարաններն ունեն հարուստ գրադարանային ֆոնդ, սակայն գրականության հիմնական մասը հնամաշ է, ինչպես նաև մարզում մեծ կարիք կա մասնագիտական գրականության: ՀՀ Սյունիքի մարզում պետական բյուջեի հատկացումների շրջանակներում, համայնքային գրադարանների հավաքածուները ժամանակակից գրականությամբ համալրելու, տեսականին նորացնելու նպատակով «Շարժական գրադարան» (բիբլիոբուսի) միջոցով Սյունիքի մարզային, Մեղրիի, Ագարակի, Քաջարանի, Սիսիանի, Գորիսի քաղաքային համայնքային գրադարաններին և Գորիսի համալսարանի գրադարանին տրամադրվել է 998 միավոր գրականություն: «Ռուսա-

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2010-2013 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը (4-րդ մաս) (26 հունիսի 2009 թվականի N 782-Ն) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=52853> (22.05.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

կան գրքի կենտրոնի», Հանրապետական գիտատեխնիկական գրադարանի միջոցով Շիկահողի, Քաջարանի, Լեռնաձորի, Դովրուսի, Շրվենանցի, Կաղնուտի գյուղական գրադարաններին տրամադրվել է 402 միավոր գրականություն: Համայնքային գրադարաններին, ընդհանուր առմամբ, տրվել է 1269 միավոր:

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում (Ծրագիր 2013, 58-65) առանձնացված են գրադարանները, որպես մարզի մշակութային կյանի պատասխանատուներ և կրողներ: Ըստ այդ ծրագրի՝ մարզում գործում է 126 գրադարան, որոնցից 30-ը քաղաքային համայնքների ենթակայության են, 96-ը՝ գյուղական, 1-ը՝ Սյունիքի մարզային գրադարանը՝ «Մշակույթի նախարարության ենթակայության տակ: Մարզում ընդհանուր գրադարանային ֆոնդը կազմում է շուրջ 1.284.660 միավոր գրականություն: Ծրագրում, ի թիվս ձեռքբերումների, առանձնացված են մարզի գրադարանների առջև ծառայած խնդիրները: Մարզի գյուղական գրադարանների խնդիրները հիմնականում կապված են տարածքների կարգավիճակի, վերանորոգման, գույքի ձեռքբերման, գրքային ֆոնդերի համալրման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման հետ: Գրադարանների շենքային պայմանները հիմնականում անբավարար են, ինչը խիստ վտանգում է գրքային ֆոնդի պահպանությունը, լիակատար օգտագործումը: «Սյունիքի մարզում գործող գրադարանների հիմնախնդիրներից է նոր գույքի ձեռքբերումը, ժամանակակից տեխնիկական միջոցներով ապահովումը և առաջնայինը համարվում է Կապանի, Գորիսի, Մեղրիի, Ագարակի և Սիսիանի գրադարանների վերանորոգումը, նոր գույքով համալրումը: Մարզում գրադարանային ծառայությունների բարելավումը դիտարկվում է գրադարաններում ժամանակակից տեղեկատվական միջոցների ներդրմամբ, ինտերնետային ցանցին միացմամբ: Ընդհանուր գրադարանային ցանցում, ըստ առաջնայնության, կընդգրկվեն քաղաքային, այնուհետ գյուղական գրադարանները, որոնք նույնպես կիրականացնեն էլեկտրոնային

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

սպասարկում: Մարզի գրադարանների հիմնախնդիրների լուծման նպատակով նախատեսվում է մշակել համալիր ծրագիր, ուր կներառվեն գրադարանների վերանորոգման, գրքային հավաքածուների համալրման, նոր տեխնիկական միջոցների ներդրման հարցերը:

Երբ համեմատեցինք վերը նշված ծրագրերը, պարզ դարձավ, որ ծրագրի մի շարք կետեր նույնությամբ, գրեթե բառացի կրկնվում են: Սա փաստում է, որ երկրորդ ծրագիրը կազմվել է առաջինի հիմքի վրա՝ մասնակի փոփոխություններով: Սա խոսում է նաև գրադարանների նկատմամբ եղած որոշակի «անտարբերության» և տվյալները ստուգելու անհրաժեշտության մասին:

2017 թ. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի մինչև 2025 թվականը զարգացման ռազմավարության մեջ մարզի գրադարանները նույնպես ընդգրկված են: Ըստ այդ ռազմավարության՝ Սյունիքի մարզում գործում է 129 գրադարան: Եթե համեմատենք 2013 թ. ծրագրի հետ, գրադարանների թիվն ավելացել է 6-ով:


Յուրաքանչյուր տարի Հայաստանի ազգային գրադարանը տպագրության է հանձնում Հայաստանի Հանրապետության, նաև Արցախի Հանրապետության տարածքներում գործող գրադարանների ամենամյա վիճակագրական վերլուծությունը՝ հիմնված նրանց ամենամյա հաշվետվությունների վրա³: Այս գրքույկներում ներկայացվում են Հայաստանի ազգային, Խնկո Ապոր անվան ազգային մանկական, ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական, Գիտատեխնիկական և Գիտաբժշկական գրադարանների, Երևան քաղաքի վարչական շրջանների (համայնքների) 23 գրադարանների, բուհական գրադարանների, ինչպես նաև 10 մարզային գրադարանների գործունեության տարեկան ամփոփ վերլուծությունը: Գրքի վերջում առանձնացվում են 10 մարզային գրադարանների կոնտակտային տվյալները:

³ Հայաստանի գրադարանները: Վիճակագրական վերլուծություն՝ <https://opac.flib.sci.am/cgi-bin/koha/opac-detail.pl?biblionumber=173748> (22.05.2023):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Գրքի ստեղծման համար հիմք է հանդիսանում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հաշվետվությունների ձև N 6-գմ ձևաչափը: Այսինքն, գրքում ներկայացվում են այն տվյալները, որոնք պաշտոնապես գրանցվում են ՀՀ վիճակագրական ծառայությունում և պաշտոնական փաստաթղթերում: Մինչդեռ այդ տվյալների իսկությունը ստուգելու խնդիրը այդպես էլ առ այսօր մնում է չլուծված:

Ըստ ամենամյա տրամադրվող վիճակագրական տվյալների՝ Սյունիքի մարզում գործող գրադարանների պատկերը հետևյալն է (տե՛ս նկ. 1).




Նկ. 1

2010 թ. Սյունիքում գործել է 143 գրադարան: 2011-2013 թթ. գրադարանների ընդհանուր թիվը Սյունիքի մարզում համեմատաբար նույնն է եղել՝ տատանվելով 142-140-ի միջակայքում: Գրադարանների թիվը Սյունիքի մարզում կտրուկ անկում է ապրել 2014 թ.՝ 140-ից իջնելով 131-ի և 2016 թ.՝ հասնելով 112-ի: 2017 և 2018 թթ. Սյունիքում գործող գրադարանների թիվը պահպանվել է՝ ընդամենը

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

108 գրադարան: Վիճակն ավելի է վատացել 2019 թվականից սկսած, երբ գրադարանների թիվը կտրուկ նվազել է՝ հասնելով 83-ի, այնուհետ՝ 81-ի: 2010-2021 թթ. համեմատության արդյունքում Սյունիքում գրադարանների թիվը 143-ից հասել է 81-ի՝ կրճատվելով 42-ով: Նվազման պատճառները տարբեր են, սակայն ամենակարևոր համայնքների կողմից գումարներ չհատկացնելն է:

Ներկայացնենք Սյունիքում գործող գրադարաններն ըստ տարածաշրջանների 2020-2021 թթ. միջակայքում (տե՛ս նկ. 2).



Նկ. 2

Համեմատությունը ցույց է տալիս, որ առաջատարը Կապանի տարածաշրջանն է, որին հաջորդում է Սիսիանը, հետո՝ Մեղրին, իսկ վերջում՝ Փորիսը: Ներկայացնենք նաև Սյունիքի մարզի գրադարանները՝ ըստ տեսակների (տե՛ս աղյս. 1).

Տարեթիվ	Մարզային	Քաղաքային	Գյուղական	Մանկական
2010	1	28	108	6
2011	1	28	107	6
2012	1	27	107	5
2013	1	27	107	5
2014	1	27	98	5
2015	1	28	96	4
2016	1	28	79	4
2017	1	25	78	4
2018	1	25	78	4
2019	1	23	56	3
2020	1	21	56	3
2021	1	21	56	3

Աղյս. 1

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Ինչպես տեսնում ենք, 2010-2021 թթ. միջակայքում մարզային գրադարանը շարունակել է իր գործունեությունը, քաղաքային գրադարանները կրճատվել են 7-ով: 2017 թ. փակվել են Մեղրիի տարածաշրջանից 3 քաղաքային գրադարան, Կապանի տարածաշրջանից՝ 2, Սիսիանի տարածաշրջանից՝ 2, ինչի արդյունքում Սյունիքում քաղաքային գրադարանների թիվը դարձել է 21: Այս ցուցանիշը պահպանվել է նաև 2021 թ.: Բոլորովին այլ է պատկերը գյուղական գրադարանների համար: Եթե 2010 թ. գյուղական գրադարանների թիվը կազմել է 108, ապա 2021 թ. թիվը դարձել է 56: Գյուղական գրադարանների թիվը կտրուկ անկում է ապրել 2014, 2017 և 2019 թթ.: 2018 թ. պահպանվել է 2017 թ. ցուցանիշը, իսկ 2020-2021 թթ.՝ 2019 թ. ցուցանիշը: Գյուղական գրադարանները փակվել են Սյունիքի մարզի բոլոր տարածաշրջաններում և հիմնական պատճառը համայնքների խոշորացումն է:

Ներկայացնենք նաև Սյունիքի մարզի հավաքածուների ընդհանուր պատկերն՝ ըստ տարեթվերի (տե՛ս աղյս. 2).

Տարեթիվ	Սյունիքի մարզի գրքային հավաքածուների ընդհանուր պատկերը
2010	1.272.546 միավոր
2011	1.274.531 միավոր
2012	1.263.434 միավոր
2013	1.243.669 միավոր
2014	1.250.541 միավոր
2015	1.255.437 միավոր
2016	1.274.531 միավոր
2017	1.249.727 միավոր
2018	1.187.906 միավոր
2019	1.120.606 միավոր
2020	1.122.631 միավոր
2021	1.094.309 միավոր

Աղյս. 2

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Համեմատությունից պարզ է դառնում, որ հավաքածուների ընդհանուր թիվը 2010-2021 թթ. միջակայքում ևս անկում է ապրել: Որոշակի աճ է գրանցվել 2011 թ., երբ թիվը ավելացել է մոտ 2000-ով: 2012-2015 թթ. նորից անկում է գրանցվել՝ 1.274.531 միավորից իջնելով մինչև 1.255.437 միավոր: 2016 թ. գրքային հավաքածուի թիվը կտրուկ աճել է, իսկ 2017 թվականից՝ իջել մինչև 1.094.309 միավորի: Գրքային հավաքածուների շարժը պայմանավորված է և՛ համալրման խնդիրներով, և՛ նոր ստացումներով ու դուրսգրումներով, և՛ համայնքների խոշորացման գործընթացով, և՛ ֆինանսական մի շարք խնդիրներով: Որպես օրինակ՝ ավելի մանրամասն ներկայացնենք 2017-2018 թթ. և 2020-2021 թթ. Ընդհանուր մուտքերն ու ելքերը (տե՛ս աղյս. 3, 4).

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	2017 թ.	Մուտք	Ելք	2018 թ.
<u>Կապանի տարածաշրջան</u>	524.326	4856	5636	523.546
<u>Գորիսի տարածաշրջան</u>	211.092	225	61.971	149.346
<u>Մեղրիի տարածաշրջան</u>	179.451	53.268	53.085	179.634
<u>Սիսիանի տարածաշրջան</u>	334.858	522	-	335.380
Ընդամենը	1.249.727 միավոր	58.871 <u>միավոր</u>	120.692 միավոր	1.187.906 միավոր


Աղյս. 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ	2020 թ.	Մուտք	Ելք	2021 թ.
<u>Կապանի տարածաշրջան</u>	457.426	904	21.149	437.181
<u>Գորիսի տարածաշրջան</u>	149.857	186	-	150.043
<u>Մեղրիի տարածաշրջան</u>	179.674	28	-	179.702
<u>Սիսիանի տարածաշրջան</u>	335.674	261	8552	327.383
Ընդամենը	1.122.631	1379	29.701	1.094.309

Աղյս. 4

Ուշագրավ պատկեր է ներկայացնում Սյունիքի մարզի 2021 թ. գրքային հավաքածուն՝ ըստ թեմատիկ տեսականու: Առկա 1.094.309 միավոր գրականությունն ըստ բովանդակության բաժանվում է հետևյալ խմբերի (տե՛ս նկ. 3)։



Նկ. 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Առանձնացնենք Սյունիքի մարզում գրանցված ընթերցողների թիվն ու հաճախումը 2010-2021 թթ. միջակայքում (տե՛ս աղյս. 5):


Տարեթիվ	Ընթերցողների թիվ
2010	39.594 ընթերցող
2011	38.924 ընթերցող
2012	38.262 ընթերցող
2013	37.002 ընթերցող
2014	36.549 ընթերցող
2015	36.106 ընթերցող
2016	32.117 ընթերցող
2017	30.583 ընթերցող
2018	27.592 ընթերցող
2019	28.611 ընթերցող
2020	14.951 ընթերցող
2021	20.127 ընթերցող

Աղյս. 5

Աղյուսակից պարզ է դառնում, որ 2010-2021 թ. Ընթերցողների թիվը պակասել է շուրջ 19.400-ով: Թվի նվազումը կտրուկ չի եղել, այլ համաչափ՝ յուրաքանչյուր տարի իջնելով 1000-2000-ով: Ընթերցողների թվի նվազումը մեծամասամբ կապված է արտագաղթի, տարածաշրջանում տիրող ռազմական լարվածության, ինչպես նաև ավելացող սոցիալական խնդիրների հետ: Սյունիքի մարզի գրադարանների թիրախային օգտվողները շարունակում են մնալ աշակերտներն ու ուսանողները, սակայն աշակերտների թիվը դպրոցներում նվազել է, իսկ ուսանողները մեծամասամբ սովորում են Երևանում և օգտվում են մայրաքաղաքի գրադարաններից:

2021 թ. ընթերցողների տվյալները ներկայացնենք նաև ըստ տարիքի և մասնագիտության (տե՛ս նկ. 4):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ



Նկ. 4

Հետաքրքիր պատկեր է ներկայացնում նաև սպասարկված գրականության քանակը (տե՛ս աղյս. 6):

Տարեթիվ	Տաքք
2010	806.956 <u>միավոր</u>
2011	787.040 <u>միավոր</u>
2012	753.388 <u>միավոր</u>
2013	745.535 <u>միավոր</u>
2014	703.275 <u>միավոր</u>
2015	648.549 <u>միավոր</u>
2016	612.930 <u>միավոր</u>
2017	561.659 <u>միավոր</u>
2018	458.185 <u>միավոր</u>
2019	475.934 <u>միավոր</u>
2020	219.279 <u>միավոր</u>
2021	295.396 <u>միավոր</u>

Աղյս. 6

Ընթերցողների թվի նվազման հետ մեկտեղ 2010-2021 թթ. միջակայքում նվազել է նաև սպասարկված գրականության քանակը:

Սյունիքի գրադարաններում աշխատող գրադարանավարների քանակն ու կրթական մակարդակը հետևյալն է.

➤ 2012-2013 թթ. Սյունիքի մարզի գրադարանների աշխատողների թիվը կազմել է 198: Նրանցից 19-ը ունեցել է 1-5 տարվա

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

աշխատանքային ստաժ, 18-ը՝ բարձրագույն, մյուսները՝ միջին մասնագիտական կրթություն:

➤ 2014-2015 թ.՝ 199 աշխատող:

➤ 2016 թ.՝ 186 աշխատող, որից 45-ն է ունեցել 5 և ավելի տարվա աշխատանքային ստաժ: Նրանցից 46-ն ունեցել է բարձրագույն, իսկ մյուսները՝ միջին մասնագիտական կրթություն:

➤ 2020-2021 թթ.՝ 142 գրադարանավար: Նրանցից 13-ն ունի առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ, 37-ն էլ գրադարանային գործի մասնագիտական կրթություն: Ըստ աշխատակիցների թվաքանակի՝ առաջին տեղում են Կապանի գրադարանները՝ 90, այնուհետև Գորիսինը՝ 20, Մեղրիինը՝ 6 և Սիսիանի գրադարանները՝ 26 աշխատակիցներով: Մարզի գրադարանների աշխատակիցներից բարձրագույն կրթություն ունեն՝ Սիսիանից 4, Մեղրիից՝ 1, Գորիսից՝ 10, Կապանից՝ 24 աշխատակիցներ: Սյունիքի մարզային գրադարանը 2021 թ. դրությամբ ունի 29 աշխատող: Նրանցից երեքն ունեն առնվազն 3 տարվա աշխատանքային ստաժ: Միջին մասնագիտական կրթություն ունի 14, իսկ բարձրագույն կրթություն՝ 15 աշխատող: Համայնքային գրադարաններում 2021թ. դրությամբ աշխատում է 61 աշխատող: Նրանցից 4-ն ունեն առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ, 9-ն ունեն բարձրագույն, իսկ 52-ը՝ միջին մասնագիտական կրթություն:


2016 թ. Հայաստանի ազգային գրադարանը ՀՀ Մշակույթի նախարարության հետ համատեղ ձեռնամուխ եղավ ՀՀ տարածքում գործող մարզային և համայնքային գրադարանների վիճակագրական տվյալների հավաքագրման աշխատանքներին: Կազմվեց համապատասխան ձևաթուղթ, որն ուղարկվեց բոլոր մարզերին և համայնքներին՝ լրացնելու համար: Ստացված տվյալներն ամփոփելուց հետո դրանք համեմատվեցին նույն թվականի պաշտոնական տվյալների հետ: Ստացվեց բոլորովին այլ պատկեր: Քանի որ մեր ուսումնասիրության խնդիրը Սյունիքի մարզի գրադարանների

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

վիճակագրական ընդհանուր պատկերը ստանալն է, հենց մարզի օրինակով էլ ցույց տանք տարբերությունները:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Սյունիքի մարզում 2016 թ. գործել է 112 գրադարան՝ ի տարբերություն 2015 թ., երբ գործող գրադարանների թիվը եղել է 129: Նշենք, որ 2016 թ. Սյունիքի մարզի համայնքների ընդհանուր թիվը, ինչպես և այսօր, 138-ն էր: Պաշտոնական տվյալներից պարզ է դառնում, որ ոչ բոլոր համայնքներում են առկա եղել գրադարաններ:


Ըստ Հայաստանի ազգային գրադարանի հավաքագրած տվյալների, որոնք նաև ներկայացվել են նախարարությանը, Սյունիքի մարզի համայնքների թիվը 138 է, ձևաթուղթը ուղարկվել է 110 համայնքի, լրացրել է 83 համայնք: Ըստ այդմ՝ գրանցվել է, որ մարզում գործում է 83 գրադարան, չի գործում 7 գրադարան (7 համայնք նշել է, որ գրադարանը չի գործում), 20 համայնքի գրադարանների մասին տեղեկություններ ընդհանրապես չեն արձանագրվել: Մինչդեռ ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների՝ 2016 թ. մարզում գործել է 112 գրադարան: Իրականացված հարցման շնորհիվ պարզ դարձավ, որ մարզի գործող գրադարաններում առկա են բազմաթիվ խնդիրներ, որոնք վերջնական լուծում չեն ստացել: Պատկերը հետևյալն է (ներկայացված են 2016 թ. հարցման արդյունքները, տե՛ս նկ. 5)։



Նկ. 5

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Գրադարաններում առկա համակարգիչների, ինտերնետային ցանցի, տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ պատկերը հետևյալն է (տե՛ս նկ. 6)։



Նկ. 6

Կարելի է փաստել, որ խնդիրները շատ ավելի խորը արմատներ ունեն։ Մարզի գրադարանների տեղեկատվական հագեցվածությունը դեռևս ցածր մակարդակի վրա է։ Բարվոք են մարզային գրադարանը և քաղաքային գրադարանները, մինչդեռ գյուղական գրադարաններում խնդիրը հրատապ լուծման կարիք ունի։

Մի առանձին խնդիր է նաև գրադարանավար-մասնագետների առկայությունը գրադարաններում։ Նշենք, որ գրադարանային գործը խորհրդային շրջանում զարգացման որակական փուլի է հասել առաջին հերթին հենց մասնագետների շնորհիվ և գրադարանային ոլորտի համար կադրերի պատրաստման շնորհիվ։ Մինչդեռ հետանկախության շրջանում այս մասնագիտությանը վերագրվեց «երկրորդական» դեր։ Այսօր Հայաստանի բոլոր գրադարաններում կա մասնագետների պակաս։ Փոխվել են գրադարաններին առաջադրվող պահանջները, փոխվել է գրադարանավարի դերը։ Անհրաժեշտ է պատրաստել մասնագետներ՝ համայնքային գրադարանները «փրկելու» համար։

Ամփոփում

Սյունիքի մարզի գրադարանների գործունեության վիճակագրական վերլուծությունից ակնհայտ են դառնում ոլորտում առկա խնդիրները: Տեղեկատվական համակարգի զարգացումը նպաստել է գիրք-գրադարան-ընթերցող կապերի ընդլայնմանը, սակայն պարզ է նաև, որ Սյունիքի տարբեր գրադարաններում առկա է ընթերցողների թվի կրճատում: Ընթերցողների շրջանում մեծ թիվ են կազմում 15 և ավելի բարձր տարիք ունեցողները:

Վիճակագրական վերլուծությունը ի հայտ է բերում գրադարանային ֆոնդի համալրման բազմաթիվ խնդիրներ, ինչպես նաև աշխատողների շրջանում որոշակի կրճատումներ: Մտահոգիչ է նաև գրադարանային աշխատողների բարձրագույն մասնագիտական կրթություն ունենալու հարցը, քանի որ աշխատողների շրջանում ավելի մեծ թիվ կազմում են միջին մասնագիտական կրթություն ունեցողները:

Կարևոր են նաև մարզային գրադարանների միջև տեղեկատվական-հաղորդակցական ճկուն միջավայրի ստեղծման աշխատանքները, որոնք ստեղծելու համար անհրաժեշտ է մշակված գործողությունների իրագործում:

Շատ կարևոր է ոլորտում վերապատրաստման ծրագրերի իրագործումը, ինչը, անշուշտ, դրական դերակատարում կունենա աշխատողների մասնագիտական պատրաստվածության բարձրացման, որոշակի հմտությունների ձեռքբերման հարցում: Անհրաժեշտ է մարզերում անցկացնել դասընթացներ, սեմինարներ, հետաքրքիր ծրագրեր, որոնք կխթանեն գրադարանային գործի զարգացումը: Մենք քաջատեղյակն ենք, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը և Հայկական գրադարանային ասոցիացիան յուրաքանչյուր տարի անցկացնում է դասընթացներ առկա և հեռակա ձևաչափով: Դրանք պետք է շարունակական և թիրախավորված լինեն:

Հարկավոր է ընդլայնել պետական աջակցության սահմանները, ֆինանսական հատկացումները, որպեսզի տարեցտարի նվա-

զող համայնքային գրադարանները կարողանան լուծել իրենց խնդիրները:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՂՈՅԱՆ 2015 – Աղոյան, Ն. (2015), Էլեկտրոնային գրքի ձևաչափերի ներկայացում և դրանց կիրառումը հայատառ նյութերի պարագայում, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 13-17 [Aghoyan, N. (2015) Introducing e-Book Formats and Their Applications for Armenian Script Materials, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(1), 13-17];

ԶԱՐԳԱՐՅԱՆ, ՇԻՐԻՆՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆ. 1996 – Զարգարյան, Տ. (կազմ.) (1996), *Գրադարանները փոփոխվող աշխարհում: Նոր տեխնոլոգիաներ համագործակցության նոր ձևեր: Մեթոդական ձեռնարկ*, կազմ.՝ Տ. Զարգարյան, Ա. Շիրինյան, Կ. Խաչատրյան, Հ. Ավետիսյան, Երևան, 68 [Zargaryan, T. (1996), *Gradarannery Popokhkhogh Ashkharum. Nor Tekhnologianer Hamagortsakts'utyanyan Nor Dzever. Metodakan Ughets'uyts'*, T. Zargaryan, A. Shirinyan, K. Khachaturyan, H. Avetisyan, Yerevan, 68];

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2002), *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hekh. Hrat., 168];

Ծրագիր 2013 – Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի 2014-2017 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, Կապան, 2013 [Hayastani Hanrapetutyanyan Syuniki Marzi 2014-2017 Tvakaneri Sots'ial-Tntesakan Zargats'man Tsragir, Kapan, 2013]: <http://syunik.mtad.am/development-plan/> (22.05.2023)

ՄՈՒՐԱԴՅԱՆ 2022 – Մուրադյան, Լ. (2022), Հայաստանի գրադարանները 2021 թվականին: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն, Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 107 [Muradyan, L. (2022), *Hayastani Gradarannery 2021 Tvakanin. Ashkhatanqneri Vichakagrakan Verluts'utyun*, Yerevan, National Library of Armenia, 107];

ՄՈՒՐԱԴՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023 – Մուրադյան, Պ., Գրիգորյան, Մ., Մարզային գրադարանների զարգացման միտումները, *Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու* (Երևան), 14, 404-418 [Muradyan, P., Grigoryan, M. (2023), Development Trends of Regional Libraries, *Collection of Scientific Articles of Gavar State University* (Yerevan), 14, 404-418].

LIBRARIES OPERATING IN SYUNIK REGION
STATISTICAL ANALYSIS
(2010-2021)

LIANNA GASPARYAN
Syunik Regional Library

Key words: Syunik region, regional and community libraries, statistical analysis, library collections, Library service.

From the statistical analysis of the activities of the libraries of Syunik region, it becomes clear that many problems are accumulated in this field. The development of the information and communication systems has contributed to the expansion of book-library-reader connections, but it is also clear that there is a reduction in the number of readers in various libraries of Syunik. According to the statistics the number of readers has decreased from year to year. The biggest quantity of library patrons from Syuni region by age are 15 years and older.

The statistical analysis reveals many problems of replenishment of the library collections, as well as certain reductions in the number of employees. The question of having librarians graduated from the “Library and information Science” faculty is actual,

It is also important to create a flexible information-access-database environment abetween regional libraries, which requires the implementation of elaborate actions.

It is very important to implement life-long learning programs for the LIS professionals, which will certainly have a positive role in increasing the professional training of workers and acquiring certain skills. It is imperative to hold courses, seminars, interesting programs in regions that will promote the development of library work.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ԳՈՒՆԱԶԱՐԴ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ*

ՀՏԴ 025.171 + 655.1(479.25) (091)
DOI: 10.54503/2953-8092.2023.1(1)-41

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Տեխնիկական գիտությունների թեկնածու

ORCID: [0000-0002-2644-2507](https://orcid.org/0000-0002-2644-2507)

Սույն հոդվածում անդրադարձ ենք կատարելու Վանանդեցիների տպարանում 1695 թ. տպագրված «ՀԱՄԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ, ՄԵԾ (Կիսագնդեր)» քարտեզի հետագա վերատպություններին, և հույս ունենք, որ բանավեճային սույն հոդվածն իր արձագանքը կգտնի հայ գրքի պատմությունն ուսումնասիրող մասնագետների շրջանում:

In this article, we will refer to the further reprints of the map named "Hamatarats' Ashkharhats'ujts', Mets' (Kisagnder) printed by Vanandetsi in 1695, and we hope that this controversial article will find its response among specialists studying the history of the Armenian book.

Բանալի բառեր¹ Հայ հնատիպ գիրք, քարտեզներ, մատենագիտություն, հայ տպագրության պատմություն, ամստերդամյան հրատարակություններ, Մխիթարյան միաբանություն:

Ինչպես հղել² Զարգարյան Ս. (2023), «Համատարած Աշխարհացոյց»-ի գունազարդ տպագրության հետքերով, *Լրափու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(1), 55–72.

[https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-41](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-41)

* Հոդվածը ներկայացվել է 13.01.2023, գրախոսվել է 29.03.2023, ընդունվել է տպագրության 15.04.2023:

The article was submitted on 13.01.2023, reviewed on 29.03.2023, accepted for publication on 15.04.2023.

How to cite (APA style): Zargaryan T. (2023), In the Footsteps of the “Hamatarats Ashkharhatsuyts” Printed in Color, *Herald of the Armenian Library Association*, 1(1), 55-72. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-41](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-41)

Ներածություն

Հայ տպագրության հնատիպ շրջանը՝ համաձայն մատենագիտական ցանկի (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 795), ներառում է 1,100 մատենագիտական նկարագրություն (գրքում մատենագիտական վերջին նկարագրության թիվն է՝ 1,095: Սրան գումարած 5 նկարագրություն՝ 690ա, 921ա, 1087ա, 1087բ, 1090ա): Դրանք գրքեր են, հմայիլներ, 2 ամսագիր, օրացույցներ, կոնդակներ, քարտեզներ և այլ հրատարակություններ: Հրատարակությունը բազմահմուտ մատենագետների երկարամյա ու տքնաջան աշխատանքի արդյունքն է, տպագրվել է 1988 թ.: Նշենք, որ մատենագետներին ցայսօր հաջողվում է հայտնաբերել նոր հնատիպեր՝ դրանով իսկ հարստացնելով հայ տպագրության պատմությունը նոր անվանումներով և փաստերով:

Առաջին քարտեզի տպագրությունը

Գերմանացի Յոհան Գուտենբերգի Եվրոպայում շարժական տպագրահաստոցի գյուտից մի քանի տարի անց՝ 1472 թ., Աուսբուրգում Գյունտեր Յեյները (Günther Zainer) տպագրեց «Իսիդոր Սևիլացու՝ ստուգաբանությունը» գիրքը, ուր ներկայացվեց աշխարհի տպագիր T-O տեսակի քարտեզը: 1506 թ. Քրիստափոր Կոլումբոսի կողմից Նոր աշխարհի հայտնագործումից ընդամենը մեկ տասնամյակ անց տպագրվեց աշխարհի մեծ քարտեզը, որում արդեն առկա է

¹ Իսիդոր Սևիլացին (մոտ 560 թ. - ապրիլի 4, 636 թ.) ճանաչված է որպես համացանցի սուրբ հովանավոր, իսկ նրա մահվան օրը՝ ապրիլի 4-ը նշվում է որպես համացանցի միջազգային օր: Գրել է բազմաթիվ աշխատություններ, որոնցից առավել նշանավորը 20 հատորից բաղկացած «Ստուգաբանություն» հանրագիտարանային բնույթի երկն է: Կաթոլիկ եկեղեցին ընտրել է նրան որպես ինտերնետի հովանավոր՝ հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Համաշխարհային ցանցը մարդկության գործնական և տեսական գիտելիքի հսկայական գանձարան է:

Ամերիկան (ներկայացվում է որպես Ասիայի ընդլայնում, որը ձգվում է Հյուսիսային Ատլանտյան օվկիանոսով):

Տպագրության ոլորտում նման դարակազմիկ իրադարձություններից բավականին ուշ՝ 1695 թ. Ամստերդամի Վանանդեցիների տպարանում Թովմաս Վանանդեցու ջանքերի և նվիրումի շնորհիվ տպագրվեց կիսագնդերի առաջին հայատառ քարտեզը, որը պարունակում է տեղեկություններ թե՛ երկրի, թե՛ աստղային երկնքի մասին: «Համատարած աշխարհացոյց» ամբողջովին հիմնված է իր ժամանակի եվրոպական քարտեզագիտության և տպագրության առաջադեմ փորձի վրա: Այն կարելի է համարել ժամանակի լավագույն և ամենաարդիական քարտեզներից մեկը: Սույն տպագրության մեծագույն արժեքը այն է, որ քարտեզն ամբողջությամբ հայատառ էր: Ընդհանրապես աշխարհի և կիսագնդերի քարտեզներն աշխարհագրական անունների տեսանկյունից ճոխ պատկեր են ներկայացնում, և չափազանց բարդ է այդ աշխարհագրական անունները հայերեն թարգմանել կամ տառադարձելը: Ինչպես նշում է Ռուբեն Գալսյանը՝ «Համատարած Աշխարհացոյց»-ի մատուցած մեծագույն ծառայությունը մեր քարտեզագրությանը Հայաստանի շրջանից հեռու գտնվող տեղանունների տառադարձումն էր, որը հիմք է հանդիսացել 18-րդ դարի և նրան հաջորդող հայկական քարտեզագրական դպրոցի զարգացման և հաջողության համար (ԳԱԼՉՅԱՆ 2010): Այս տեսակետից արդեն իսկ կարելի է պատկերացնել, թե որքան բարդ է եղել Ամստերդամում 1695 թ. տպագրված աշխարհի առաջին հայերեն քարտեզի տեքստի տառադարձության խնդիրը Վանանդեցիների համար: Մեկ տարի անց՝ 1696 թ., նույն տպարանում Ղուկաս Վանանդեցին տպագրել է «Բանալի համատարածի աշխարհացուցին» 30 էջանոց տետրակը: Այս երկու հրատարակությունները առաջին հերթին նախատեսված էին ծառայելու որպես հայատառ ուսումնական նյութ. «Չայս ուրեմն Տետրիկ՝ որ է՛. Բանալի Համատարածի Աշխարհացուցին մերոյ նորածնի. զոր ածեալեմք ՚ի Լոյս, մատուցա-

նեմք՝ ձօնեմք՝ և նուիրեմք Ձեզ Ուսումնասէր Եղբարցդ Հայկազունեաց» (ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ 1696, 3): Սակայն քարտեզը և տետրակը նախատեսված էին նաև հայ վաճառականների համար:

Այսպիսով, 17-րդ դարի վերջին, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու երկու վարդապետներ, հայ տպագրության անմոռանալի մշակներ, Ամստերդամում, աննախադեպ կարճ ժամանակահատվածում, իրականություն դարձրին լուսավորչական մի անհավատալի նախագիծ. Ոսկան Երևանցին² 1666-1668 թթ. տպագրեց հայերեն առաջին Աստվածաշունչը, իսկ Վանանդեցիների տպարանում Թովմաս Վանանդեցու³ ջանքերով տպագրվեցին առաջին հայտառ քարտեզը և «Գանձ չափոյ, կշռոյ, թուոց եւ դրամից բոլոր աշխարհի»՝ չափագիտության բնագավառում հայերեն առաջին ձեռնարկը: Սույն տպագրություններն ի շարս այդ երկու նվիրյալների կողմից թողարկված այլ գրքերի, ծառայեցին ողջ աշխարհով ճանապարհորդող հայ վաճառականներին՝ որպես ամենօրյա օգտագործման հոգևոր սնունդ և դարձան ուղեցույց միջազգային առևտրի բարդ և խճճված աշխարհում: Երկու վարդապետների տպարաններ-

² Ոսկան Երևանցի - ծնվել է 1614 թ. Նոր Ջուղայում, մահացել է Մարսելում՝ 1674 թ.:

³ Թովմաս Վանանդեցի - ծնվել է 1617 թ., Վանանդ, Գողթն: Մահացել է 1708 թ., Անտվերպեն, Բելգիա: Թաղված է Անտվերպենի Սուրբ Աստվածամոր տաճարի ավագ խորանի առջև: Թովմաս Վանանդեցու մահվանն առնչվող վավերագրի հայերեն թարգմանությունը ստորև. «Բոլոր նրանց, որոնք կը կարդան այս գիրն՝ ողջոյն ի Տէր: Ծանուցանում եւ վկայում ենք, որ 1708 Յուլիս 13ին Անտվերպէն քաղաքս եկաւ Գերպ. եւ Գերապայծառ Տէր Թովմաս վարդապետն, Արքեպիսկոպոս Ս. Խաչ (վանքի) Գողթն (գաառի), Պարսկահայքում, վանահայր Ս. Անտոնի կարգի: Այս անձը, որ ծեր էր, փափագել էր Հայաստան վերադառնալ, սակայն հիւանդութիւնն, որից վաղուց տառապում էր, արգելք դարձաւ: Նա՝ Հռոմէական կաթոլիկ եկեղեցու Ս. Խորհուրդներովը զօրանալով այստեղ բարեպաշտօրէն ի Տէր հանգեաւ, տարույս Սեպտեմբեր 8ին, եւ հանգչում է այս Մայր Եկեղեցու դասի աւագ խորանի առջեւ, այն տապանի մէջ, որի վրայ այսպիսի արձանագրութիւն կայ՝ "Heignini Hyberni Archépi Tuamensis"» (ՍԱՐՈՒԻՍԱՆ 1937, 147-150):

րից դուրս եկած գրքերը դարձան նաև հիմնաքարեր հայ պատանիների կրթության համար: Նշենք նաև, որ Թովմաս Վանանդեցին ունեցել է բարձրագույն ուսումնարանի հաստատման ծրագիր (ԳՐԻԳՈՐԵԱՆ 1969, 106): Նա եւ Ոսկան Երևանցին ընդունված են եղել եվրոպացի մտավորականների շրջանում և տարբեր արքունիքներում, աջակցություն են ստացել թագավորների կողմից (ԱՅՎԱԶՅԱՆ 2015, 71): Առկա է Թովմաս Վանանդեցու 1707 թ. մարտի 20-ով թվագրված աղերսագիրը⁴ Անգլիայի թագուհի Աննային և թագուհու շնորհակալական նամակը նվիրաբերված գրքերի համար (ԳՐԻԳՈՐԵԱՆ 1969, 96): Այս ամենը նախադրյալներ էին՝ «Համատարած աշխարհացոյցի» գունագարդ տպագրության համար:

Հայր Սահակ Ճեմճեմեանի մոտ կարդում ենք. «Մխիթար Աբբահոր կենդանութեան, Ս. Ղազարի մէջ ունինք արդէն յիշուած՝ համատարած աշխարհացոյցի մէկ օրինակը, որ կը կախուէր վանքին հիրասենեակը, Նորընծայարանի մուտքին: Հ. Զաքարիա Ալեքսանեան, որ անձամբ հետամուտ եղած եւ մեծ հետաքրքրութիւն ունեցած է անոր հանդէպ, եւ որ պիտի ըլլայ նաեւ պատրաստողը յաջորդ քարտէսներուն, 1751ին երբ Ս. Ղազարէն կը դառնայ Պոլիս, կը տեսնէ Ամստերտամի քարտէսին ութը կտոր փորագրուած պղինձները՝ հանգուցեալ Պոռուսալըօղլու Պօղոս աղայի տիկնոջ մօտ: Հ. Զաքարիա գիտէ տեսածին յարգը. նոյն գիտակցութիւնը ունի նաեւ տիկինը, որ կը պահանջէ իբր գին 500 ոսկի, մինչ Հ. Զաքարիա տրամադիր էր տալ միայն 150. ու այդ անգամ խնդիրը այդպէս կը մնայ բաց, ամէն օր մաշեցնելով Հ. Զաքարիայի հոգին» (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1980, 77): Երկար սակարկություններից ու բանակցություններից հետո, Հայր Զաքարիային հաջողվում է գործը գլուխ բերել. 1753 թ. մարտ ամսին մի խումբ համակիրներով «կը գումարեն ժողով մը ու

⁴ Թովմաս Վանանդեցին նամակի ավարտին իրեն մեծարել է որպես «Ձերդ մեծության ամենախոնարհ և ամենանվիրված, թեև անշահավետ ծառա Թովմաս՝ Մեծ Հայքի Գողթն գավառի Սուրբ Խաչ եկեղեցու արքեպիսկոպոս»:

կ'որոշեն ձեռքէ չհանել այս գանձը, գնելով գոնէ 220 ոսկիի, որու 200ը պիտի հոգար Հ. Զաքարիա, 10 ոսկի՝ Սարգիս ու 10՝ Յովհաննէս» (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1980, 77): 1753 թ. ապրիլին ձեռք բերված ութը կտոր պղնձյա տախտակները առաքվում են Ս. Ղազար:

Նպատակը հստակ էր՝ փրկված տեսնել ազգային եզակի արժեքը և վերաթողարկել «Համատարած աշխարհացոյցը»:

«Համատարած աշխարհացոյցի» տպաքանակի մասին մատենագիտական ցանկերում չկա ոչ մի թիվ: Այսպես, Հովհաննէս Ստեփանյանը նշում է հետևյալը. «Ըստ հայ գրքի պատմագիրների տվյալների առաջին հայերեն գրքերը տպագրվել են 300 օրինակից ոչ ավելի: Պետք է ընդունել, որ հրատարակված քարտեզները տպագրվել են ավելի պակաս օրինակով, կամ թե այդ չափով (300-ական օրինակ)» (ՍՏԵՓԱՆՅԱՆ 1955, 33): Հայր Զաքարիան ունի հետևյալ գրառումը, որը տալիս է տպաքանակի մասին հարցի պատասխանը. «Նորագիտ ութը կտոր պղնձները Հ. Զաքարիա կը գտնէ շատ լաւ վիճակի մէջ պահուած, այնպէս որ կը վկայէ նոյն նամակին մէջ «կարծեմ թե հարիւր հատ չէ նոքօք տպագրեալ» (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1980, 78): Այսպիսով, կարող ենք որոշ մոտավորությամբ ընդունել, որ «Համատարած աշխարհացոյց»-ի տպաքանակը եղել է 100^{5,6}

⁵ Համաձայն «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտական ցանկի հաշվառված է «Համատարած»-ի (մեկ գույն, սև) ինը օրինակ (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 116): Հաշվառված նմուշները սփռված են աշխարհի տարբեր գրադարաններում:

⁶ Հնարավոր է, որ «Համատարած»-ի տպագրության քանակներն ավելի շատ լինեն, ի հաշիվ հետագա թողարկումների, եթե նկատի ունենանք հետևյալը. «Ի վերջոյ այս ևս աւելցնենք՝ որ այս ութ կտոր պղնձեայ տախտակներն անարատ պահուած կը գտնուին այժմ մեր տպարանին մէջ, ուստի և կը վաճառուի այդ քարտեզն ի Վենետիկ Ս. Ղազար, և մի օրինակի գինն է՝ 5 րուբլի, 12 փռ. փափագողք կարեն դիմել մեր սովորական հասցէին» (Խ. 1896, 275):

օրինակ: Վկայակոչելով Հովհ. Ստեփանյանին՝ քարտեզի գինը եղել է 15 ֆրանկ⁷ (ՍՏԵՓԱՆՅԱՆ 1955, 44):

«Համատարած»-ի պղնձյա տախտակները գունազարդելու գաղափարը ևս պատկանում է Հ. Զաքարիա Ալեքսանեանին, ով 1753 թ. ապրիլ ամսին նամակով դիմել է Մելքոնեան Աբբահորը՝ գրելով. «Լաւ լինի զի զմինն Հ. Իգնատիոսն ըստ զանազանութեան գաւառաց եւ թագաւորութեանց որոշեսցէ զանազան գունովք ներկից, եւ այնու օրինակաւ տաջիք ներկել զոմանս. եւ զայլ մարդեղէն նկարսն, որ շուրջ զաշխարհացոցի, ծաղկարան նկարեսցէ, նաեւ ոսկի եւ արծաթ ուրեք ուրեք ըստ տեղոյն դիցէ, զի պայծառ լիցի, եւ այնժամ զգինն կարէք յաւելուլ, զոր օրինակ տասն դուռուշ» (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1980, 78):

Հայր Ճեմճեմեանը Ս. Ղազարի դիվանի նյութերի ուսումնասիրության արդյունքում փաստում է. «Այս բոլորէն կ'եզրակացնենք թէ քարտէսին պղինձները ենթարկուած են նորոգութեան մը, եւ թէ տպագրութիւնը կատարուած է Վենետիկի տպարաններէն մէկուն մէջ. պատրաստուած է անոնց համար յատուկ շրջանակ, չորս ծայրերը ունենալով չորս գունտեր, ինչ որ յանձնարարած էին Պոլիսէն: Հ. Զաքարիա ապսպարած էր երեսուն քարտէս. սակայն այս առաջին անգամին՝ պատասխանատու պաշտօնեան Հ. Ներսէս

⁷ Որպեսզի պատկերացում կազմենք 18-րդ դարում բելգիական ֆրանկի գնողունակության մասին, բերենք հետևյալ վիճակագրությունը: 18-րդ դարում 15 բելգիական ֆրանկով 2000 թվականների Շվեդիայում կարելի է ստանալ մոտ 54 ԱՄՆ դոլարին համարժեք ծառայություններ: 18-րդ դարի 15 բելգիական ֆրանկը այն գումարն էր, որը Շվեդիայում աշխատող տղամարդը ստանում էր աշխատավարձ 55 ժամ տևող աշխատանքի դիմաց: 2000 թ. Շվեդիայում աշխատող տղամարդը ստացել է 788 ԱՄՆ դոլար՝ աշխատած 55 ժամի դիմաց: 18-րդ դարում 15 բելգիական ֆրանկով կարելի էր գնել 4,3 գրամ ոսկի: 4,3 գրամ ոսկու գինը 2000 թ. կազմել է 39 ԱՄՆ դոլար: Հաշվարկները կատարվել են օգտագործելով «Պատմական արտարժույթների փոխանակման» <http://www.historicalstatistics.org/> շվեդական կայքը:

Համբարեան Վենետիկէն կը դրկէ միայն ինը օրինակ, որոնցմէ առաջին երեքը պիտի բաժնուէին երեք բարերարներուն, իսկ մնացած վեցը ծախու, իրաքանչիւրը վեց դոուուշի⁸» (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1980, 79-80): Հայր Զաքարիան 1754 թ. հուլիսի 15-ին Մելքոնեան Աբբահորն ուղարկած նամակում գրում է. «Զմինն ի յաշխարհացուցից նոյնժամայն գնեաց հաճի Խաչատուրն, որդին Սեղբոսին, միւսքն եւս Աստուծով շուտով վաճառին. դուք հնգետասան կամ քսան եւս ուղարկեցէք», ու ինչպէս նշում է Հայր Ճեմեճեանը «ու դարձեալ կը յանձնարարէ, որ ներկուած ըլլան, խառն ոսկի ու արծաթ գոյներով, եւ այս գործին պատասխանատուութիւնը կը յանձնէ Հ. Յակոբոս Չամչեանի, որ ճարտար ձեռք ունէր»: Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ «Համատարած աշխարհացոյց»-ի գունազարդ տարբերակի առաջին թողարկումն եղել է 1754 թ. (ԿԱՐԱՊԵՏԵԱՆ), վենետիկյան տպարաններից մեկում⁹: Գունազարդողն է Հ. Յակոբոս Չամչեանը: Մատենագիտական այսօրվա սահմանումներով՝ Հ. Յակոբոս Չամչեանը հանդես է եկել որպէս «նկարազարդող», իսկ Հ. Զաքարիա Ալեքսանեանը՝ «մտահղացման հեղինակ» (ՀՍ

⁸ Որպեսզի պատկերացում կազմենք 18-րդ դարում օսմանյան լիրայի (1 օսմանյան լիրան=100 դուրուշի) գնողունակության մասին, բերենք հետևյալ վիճակագրությունը: 18-րդ դարում 6 դուրուշով 2000 թվականների Շվեդիայում կարելի է ստանալ մոտ 5 ԱՄՆ դոլարին համարժեք ծառայություններ: 18-րդ դարի 6 դուրուշը այն գումարն էր, որը Շվեդիայում աշխատող տղամարդը ստանում էր աշխատավարձ 5,09 ժամ աշխատանքի դիմաց: 2000 թվականին Շվեդիայում աշխատող տղամարդը ստացել է 73,36 ԱՄՆ դոլար՝ աշխատած 5,09 ժամի դիմաց: 18-րդ դարում 6 դուրուշով կարելի էր գնել 0,4 գրամ ոսկի: 0,4 գրամ ոսկու գինը 2000 թ. կազմել է 3,59 ԱՄՆ դոլար: Հաշվարկները կատարվել են օգտագործելով «Պատմական արտաբժոյթների փոխանակման» <http://www.historicalstatistics.org/> շվեդական կայքը:

⁹ Ս. Ղազարի պաշտոնական հաշվեգրքի գրառումներում ներկայացված են գունազարդ քարտեզի տպագրության ծախսերը, թվագրված 1754 թ. հունվար-մարտ ամիսներով (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1981, 9): Պետք է ենթադրել, որ գունազարդ քարտեզի առաջին վերաթողարկման տարեթիվն է 1754 թ.:

361 -2013, 22-23): Գունազարդած քարտեզի պատկերը բերված է նկար 1-ում:

Համաձայն Ճեմճեմեանի՝ «Համատարած աշխարհացոյց»-ի գունավոր տարբերակը փոքր քանակություններով, գումարային մոտ 30 օրինակ, տպագրվել է մինչև 1782 թ. ներառյալ (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1980, 80-82): Պատվերներ են ստացվել Պոլսից, Տրանսիլվանիայից, Հռոմի «Հավատքի քարոզչության» գրասենյակից, Մադրասից և այլ վայրերից: Պատվերների մեծագույն մասը եղել է Պոլսից:

Հ. Սահակ Ճեմճեմեանը իր հոդվածն ավարտում է հետևյալ մտքով. «Այսպէս, ահա, ընդհատ ընդհատ ցրուած են Ամսդերտամի Համատարած քարտէսի օրինակներ, որոնց մասին այսքան կրցանք հաւաքել: ԺԹ. դարուն երբ Ս. Ղազարի մէջ կը պատրաստուին այլ քարտէսներ, աւելի շքեղ եւ աւելի կատարեալ, կարծէք, դարուն մտայնութեամբ այլեւս իմաստ չունէր հետամուտ ըլլալ Ամսդերտամի օրինակին, որու հետեանքով մոռացութեան ալ մատնուած է. ներկայ դարս է որ սկսաւ գնահատել հինը, մանաւանդ երբ հոն ծածկուած է անցեալի վառ մշակոյթի մը պատմութիւնը»: Ըստ հոդվածագրի՝ Վենետիկում տպագրված գունազարդ «Աշխարհացոյց»-ի օրինակներից երկուսն առկա են Հայաստանում. մեկը՝ Մաշտոցյան Մատենադարանում, իսկ մյուսը՝ Հայաստանի ազգային գրադարանում: Հայաստանում առկա ուրիշ օրինակների մասին հոդվածագիրը տեղեկություններ չունի: Իսկ Ս. Ղազարի պարագայում՝ «Այս քարտէսէն Ս. Ղազարի մէջ կը պահուի երեք օրինակ, երկուքը լաթի վրայ, իսկ երրորդը տպագրուած՝ ութը պղինձներուն համաձայն, ութը մեծամեծ մաքուր խաւաքարտեալ թուղթերու վրայ, որոնց միութենէն կը ձեւանայ մէկ լրիւ եւ մաքուր օրինակ» (ՃԵՄՃԵՄԵԱՆ, 1981, 12):

Ամփոփում

Նկար 2-ում բերված է հատված 1695 թ. «Համատարած»-ի տպագրությունից (Ամստերդամ): Տպագրության տարին նշված է 1695, ապա հռոմեական թվագրությամբ՝ MDCXCV, իսկ տպագրու-

թյան վայրը նշված է AMSTELODAMI: Նկար 3-ում բերված է «Համատարած»-ի նկար 2-ում բերված հատվածը, բայց այս դեպքում վենետիկյան գունազարդված տպագրությունից: Տեսնում ենք, որ տպագրության տարին նշված է 1695, ապա հռոմեական թվագրությամբ՝ MDCXCV, իսկ տպագրության վայրը նշված է AMSTELODAMI: Այսինքն՝ բացի գունազարդումից, վենետիկյան տպագրությունը ոչնչով չի առանձնանում 1695 թ. տպագրությունից: Հրատարակչական ելքային տվյալները երկու քարտեզներում էլ նույնն են: Մատենագիտական տեսանկյունից կարևոր է դառնում պատասխանել հետևյալ երկու հարցերին.

ա/ Ինչպե՞ս նկարագրել գունազարդված «Համատարած»-ի վենետիկյան տպագրությունը: Քարտեզն առկա է, այն գոյություն ունի, և պետք է նկարագրվի: Քարտեզի առկայությունը պետք է արձանագրվի մատենագիտական նկարագրության տեսքով, դրա հետ հաշվի չնստել չենք կարող:

բ/ Արդյո՞ք գունազարդված «Համատարած»-ի վենետիկյան տպագրությունը պետք է համարենք նոր անուն և ներառենք որպես նորահայտ հնատիպ¹⁰:

Իսնդիրն այն է, որ մատենագիտական ցանկերում սույն հրատարակությունն ամբողջովին անտեսված է, ունի «խորթ» զավակի կարգավիճակ, բավարար լուսաբանված չէ: Հնարավոր չէ, որ Զարբհանայանը կամ Լևոնյանը իմացած չլինեին այդ քարտեզի մասին,

¹⁰ Ինչպես նշված է «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտական ցանկի առաջաբանում. «Դեպքեր էլ կան, երբ գրքերը տպագրվելուց հետո նրանց շարվածքները պահվել են և մեկ կամ մի քանի տարի հետո նույնությամբ օգտագործվել գրքի մի նոր տպագրության համար, փոխելով միայն տպագրության տարեթիվը (N 1082) և հովանավորող պատրիարքի ու տպագրության ծախսերը վճարողի անունները (N 899, 917, 928, 960, 1006, 1007): Իսկ երբեմն էլ շարվածքը նույնությամբ օգտագործվել է առանց փոխելու նախորդ տպագրության նույնիսկ թվականն ու վայրը, որը հետագայում զանազան թյուրմացությունների տեղիք է տվել (N 80, 1034)» (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, VIII):

չենք բացառում այն հանգամանքը, որ քարտեզը նաև տեսել են: Սակայն ոչ մի գրառում նրանց կողմից առկա չէ: «Հայ գիրքը 1512-1800 թթ.» մատենագիտական ցանկում ևս չկա ոչ մի անդրադարձ սույն տպագրությանը (ՈՍԿԱՆՅԱՆ 1988): Հեղինակները մասնագիտական սերտ կապի մեջ են եղել Մխիթարեան միաբանության հայրերի հետ, «Բազմավէպ»-ի բոլոր թողարկումները կանոնավորաբար առաքվել են Հայաստանի գրադարաններ, Հայր Սահակի հողվածն էլ լույս է տեսել 1980 թ.: Անհավանական է, որ հայ նորագույն ժամանակաշրջանի լավագույն մատենագետները և հայ հնատիպ գրքի խոշորագույն մասնագետները, ի դեմս Նինել Ոսկանյանի, Քնարիկ Կորկոտյանի, Անթառամ Սավալյանի ու Ռաֆայել Իշխանյանի տեղյակ չլինեին սույն քարտեզից¹¹: «Հայ գիրքը 1512-1800 թթ.» մատենագիտական ցանկում սույն քարտեզի մասին ոչ մի դիտարկում չանելու հավանական պատճառներից մեկը կարող է լինել հետևյալը: Մատենագիտական ցանկը դրվել է գրքասերների սեղանին 1988 թ., սակայն հանձնված է եղել շարվածքի 1973 թ., իսկ ստորագրվել է տպագրության 1983 թ.: Հեղինակների մեծագույն ցանկության դեպքում էլ հնարավոր չէր լինի մատենագիտական ցանկում հավելումներ կատարելը:

Սույն հողվածը բանավեճային է. հուսանք, որ «Հայկական գրադարանային ասոցիացիա»-ն կկազմակերպի քննարկում ակնկալելով ստանալ հետևյալ հարցերի պատասխանները.

ա/ Ինչպե՞ս նկարագրել «Համատարած»-ի վեներտիկյան տպագրությունը:

բ/ Արդյո՞ք «Համատարած»-ի վեներտիկյան տպագրությունը պետք է համարենք նոր անուն և ներառենք որպես նորահայտ հնատիպ:

¹¹ Ժամանակին ինքս փորձեցի Հայաստանի ազգային գրադարանում պահվող Նինել Ոսկանյանի սևագրերում գտնել որևէ հուշող նշում: Սակայն ապարդյուն:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԲԱԲԼՈՅԱՆ 1986 – Բաբլոյան, Մ. (կազմ.) (1986), *Հայ պարբերական մամուլը (1794-1980)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 470 [Babloyan, M. (comp.) (1986), *Hay Parberakan Mamuly. Matenagitakan Hamahavak Ts'uts'ak*], Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 470];

ԼԵՎՈՆՅԱՆ 1934 – Լևոնյան, Գ. (կազմ.) (1934), *Հայոց պարբերական մամուլը (1794-1934)*, Երևան, Պետհրատ, XXXI, 228, 3 [Levonyan, G. (comp.) (1934). *Hayots' Parberakan Mamuly (1794-1934)*, Yerevan, Pethrat, XXXI, 228, 3];

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ 1924 – Կարապետյան, Հ. (կազմ.) (1924), *Լիակալար ցուցակ հայերէն լրագիրներու որոնք կը գտնուին Մխիթարեան մատենադարանին մէջ ի Վիեննա 1794-1921*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 79 [Karapetyan, H. (comp.) (1924). *Liakatar Ts'uts'ak Hayeren Lragirneru voronk ggtvin Mkhitaryan Matenadaranin mej (1794-1921)*, Vienna, Mkhitaryan Press, 79];

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970 – Կիրակոսյան, Ա. (կազմ.) (1970), *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 621 [Kirakosyan, A. (comp.) (1970). *Hay Parberakan Mamuly (1794-1967)*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 621];

ZARGARYAN 2020 – Zargaryan, T., Astsatryan H., Matela M. (2020), Armenian Research & Academic Repository in Action: Towards Challenges of the 21st Century, *Katchar* (Yerevan), 2, 67-79.

ԱՅՎԱԶՅԱՆ 2015 – Այվազյան, Հ. (խմբ.) (2015), *Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան*, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1120 [Ayzvazyan, H. (ed.) (2015), *Hay Graputyun ev Grqarvest. Hanragitaran*, Yerevan, NAS RA, 1120];

ԳԱԼՉՅԱՆ 2010 – Գալիչյան, Ռ. (2010, Հոկտեմբեր), *Ամստերդամի «ՀԱՄՍԱՐԱԾ ԱՇԽԱՐՀԱՅՈՅՅԸ» 1695 թ.* [Galichian, R. (2010, October), “World Mirror” (*Ashkharhatsuyts*) printed in 1695 in Amsterdam]

<http://roubengalichian.com> և <https://tinyurl.com/4yvdrcd6> (15.04.2023);

ԳՐԻԳՈՐԵԱՆ 1969 – Գրիգորեան, Մեսրոպ ծ. վրդ. (1969), *Նոր նիւթեր եւ դիտողութիւններ հրատարակիչ Վանանդեցոց մասին* (Ազգային մատենադարան ՄԱ), Վիեննա, տպ. Մխիթարեան, 159 [Grigoryan, Mesrob

Ph.D. (1969), *Nor Nyuter ev Ditoghutyunner Hratarakich Vanandets'vots' masin* (Azgayin Matenadaran MA), Wien, Mekhitarist Press, 159];

ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ 1895 – Զարբհանալեան, Գ. (1895), *Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ*, Վենետիկ, տպ. Մխիթարեան, 282 [Zarbhanalyan, G. (1895), *Patmutyun Haykakan Tpagrutyan Skzbnavorutenen Minch ar Mez*, Venice, Mkhitaryan Press, 282];

Խ. 1896 – [Հ. Եսայի Տայեցի] (1896), Համատարած աշխարհացոյց, *Բազմավէպ* (Վենետիկ), Ծ(ԾԴ), 274-275 [F. Esayi Tayets'i (1896), *Hamatarats' Ashkharhats'uyts' Bazmavep* (Venice), Ծ(Ts'D), 274-275];

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ – Կարապետյան, Մ., *Համալսարանի աշխարհացոյց* (Վենետիկ, 1754) [Karapetyan, M., *Hamatarats' Ashkharhats'uyts' (Venetik, 1754)*] <https://digilib.aua.am/> և <https://tinyurl.com/yc7f4mc4> (15.04.2023);

ՀՍՏ 361 -2013 – (2013, 1 հունվար), *Տեղեկատվության, գրադարանային եւ հրատարակչական գործի ստանդարտների համակարգ. Մատենագիտական գրառում. Մատենագիտական նկարագրություն. Ընդհանուր պահանջներ եւ կազմման կանոններ* [(2013, 1 January), *Teghekatvutyan, Gradaranayin ev Hratarakchakan Gorts'i Standartneri Hamakarg. Matenagitakan Gram. Matenagitakan Nkaragrutyun. Yndhanur Pahanjner ev Kazmman Kanoner*] (15.02.2023);

ՂՈՒԿԱՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ 1696 – Ղուկաս Վանանդեցի (1696), *Բանալի համալսարանի աշխարհացոյցին*, Ամստերդամ, տպ. Թովմաս Վանանդեցու, 30 [Ghukas Vanandets'i (1696), *Banali Hamatarats'i Ashkharhats'uyts'i*, Amsterdam, Tovmas Vanandets'i Press, 30];

ՃԵՄՃԵՄԵԱՆ 1980 – Ճեմճեմեան, Ս. (1980), ԺԷ-ԺԸ. դարու հայկական քարտէսներու արձագանքը Ս. Ղազարու դիւանէն ներս, *Բազմավէպ* (Վենետիկ), 1-4, 76-98 [Chemchemyan, S. (1980), *ZhE.-ZHY. Daru Haykakan Qartezneru Ardzagangy S. Ghazaru Divanen Ners, Bazmavep* (Venice), 1-4, 76-98];

ՃԵՄՃԵՄԵԱՆ 1981 – Ճեմճեմեան, Ս. (1981), *Քարտիսագրութեան դպրոց մը Ս. Ղազարու մէջ ժԸ դարուն*, Վենետիկ, տպ. Մխիթարյան, 61 [Chemchemyan, S. (1981), *Qatisagrutyun Dprots' my S. Ghazaru mej ZHY. Darun*, Venice, Mkhitaryan Press, 61];

ՈՍԿԱՆՅԱՆ 1988 – Ոսկանյան, Ն., Կորկոտյան, Բ., Սավայան, Ա. (1988), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ Ա. Մյասնիկ-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

յանի անվան հանրապետական գրադարան, 864 [Voskanyan N., Korkotyan, Q., Savalyan, A. (1988), *The Armenian Book in 1512-1800*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 864];

ՍԱՐՈՒԽԱՆ 1937 – Սարուխան, Ա. (1937), *Բելգիա եւ հայերը*, Վիեննա, տպ. Մխիթարեան, 271 [Sarukhan, A. (1937). *Belgia ev Hayery*, Wien, Mekhitarist Press, 271];

ՍՏԵՓԱՆՅԱՆ 1955 – Ստեփանյան, Հ. (1955), *Հայ քարտեզագրական հրատարակությունները 260 տարում (1695-1955): Համատար ակնարկ*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ, 160 [Stepanyan, H. (1955), *Hay Qartezadrakan Hratarkutyunnery 260 Tarum (1695-1955): Hamarot Aknark*, Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 160];

ՑԱՆԿ 1810 - *Ցանկ ընդհանուր գրոց տպագրելոց ի Վենետիկ յաշակերտաց ամենապարհի տեսոն Մխիթարայ մեծի արքայի ըստ կարգի այբուբենից՝ համառոտ բացատրութեամբ իրաքանչիւր գրոց*, Վենետիկ, տպ. Մխիթարյան, 1810, 35 [Ts'ank Yndhanur Grots' Tragrelots' I Venetik Ashakerats' Amenapativ Tearn Mkhitaray Mets'i Abbayi yst Kargi Aybubenits' Hamarot Bats'atruyamb Yuraqanchyur Grots', Venice, Mkhitaryan Press, 1810, 35].

Լուսանկարների ցանկ

Նկար 1. «Համատարած աշխարհացոյց» գունազարդ:

Նկար 2. Հատված 1695 թ. «Համատարած»-ի տպագրությունից (Ամստերդամ):

Նկար 3. Հատված «Համատարած»-ի գունազարդ տպագրությունից (Վենետիկ):

IN THE FOOTSTEPS OF THE “HAMATARATS ASHKHARHATSUYTS” PRINTED IN COLOR.

TIGRAN ZARGARYAN
Fundamental Scientific Library of NAS RA
Ph. D. (Technical Sciences)

Keywords: Armenian old-print books, maps, bibliography, history of Armenian printing, Amsterdam publications, Mekhitarist Congregation.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

In 1695 in Amsterdam, the Armenian printing house headed by Tovmas Vanandetsi published a unique work; the first printed map of the world in Armenian “Hamatarats Ashkharhatsuyts” (Geographic Map of the World). The first large-scale map of both hemispheres in Armenian was considered the best and one of the most reliable maps at the time. The world map was designed in the style of Western cartography. Later this map was reproduced in Venice in colours, thanks to the efforts of the Mekhitarist Congregation fathers. In this article based on the archival documents the history of creating that coloured map is provided. A question is posed: is this an old-print map, and how should the bibliographic description of this map look?



Նկ. 1.

*«Համադարած աշխարհացոյց» գունազարդ:
Տիգրան Զարգարյանի անձնական ֆոտոարխիվից:*



Նկ. 2.

Հատված 1695 թ. «Համալսարան»-ի տպագրությունից (Ամստերդամ):
Տիգրան Զարգարյանի անձնական ֆոտոարխիվից:



Նկ. 3.

Հարված «Համադարած»ի գունազարդ տպագրությունից (Վենետիկ):
Տիգրան Զարգարյանի անձնական ֆոտոարխիվից:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ «ԷԴԳԱՐՅԱՆ» ՀԱՎԱՔԱԾՈՒՆ*

ՀՏԴ 025.29(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2023.1(1)-52

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Բանասիրական գիտությունների թեկնածու

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

Սույն հեղափոխության նպատակն է ներկայացնել ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուն, արժևորել այն հայ տպագիր ժառանգության ուսումնասիրության համապետքստում և դարձնել հանրության սեփականությունը: Հավաքածուի ուսումնասիրության անհրաժեշտություն և հնարավորություն առաջացավ հատկապես այն այլ մասնաշենք տեղափոխելուց հետո: Գրապահոցի աշխատակիցները, ենթաբաժնի վարիչ Հասմիկ Ղազարյանի գլխավորությամբ, իրականացրին մաքրման և վերականգնման աշխատանքներ՝ միաժամանակ արձանագրելով յուրաքանչյուր միավորի մատենագիտական տվյալները: Սույն հեղափոխությունը հնարավոր դարձավ հենց այդ նախապատրաստական աշխատանքներից հետո, ինչի համար հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Հաշվի առնելով, որ ներկայում նմանատիպ աշխատանքները խիստ սակավաթիվ են, կարող ենք վստահեցնել, որ այս հեղափոխությունը կարող է դառնալ հիմք նոր ուսումնասիրությունների համար:

The goal of this research is to present the "Edgarian" collection of the Fundamental Scientific Library of the National Academy of Sciences of the Republic of Armenia, to value it in the context of the study of Armenian printed heritage and to make it the property of the public. The need and opportunity for

* Հոդվածը ներկայացվել է 23.03.2023, գրախոսվել է 19.04.2023, ընդունվել է տպագրության 26.06.2023:

The article was submitted on 23.03.2023, reviewed on 19.04.2023, accepted for publication on 26.06.2023.

the study of the building arose especially after it was moved to another building. The employees of the library, under the leadership of the head of the sub-department Hasmik Ghazaryan, carried out cleaning and maintenance works, while recording the technical data of each unit. This research became possible after those preparatory works, for which we express our gratitude.

Taking into account that there are currently very few similar works, we can assure that this research can become a basis for new studies.

Բանալի բառեր՝ Գրադարանային հավաքածու, հայ տպագրության պատմություն, նվիրատվություն, անձնական գրադարան, մատենագիտություն, տպագիր ժառանգության պահպանություն:

Ինչպես հղել՝ Գրիգորյան Մ. (2023), ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուն, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(1), 73-96.

[https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-52](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-52)

How to cite (APA style): Grigoryan M. (2023), The "Edgarian" Collection of the Fundamental Scientific Library of NAS RA, *Herald of the Armenian Library Association*, 1(1), 73-96. [https://doi.org/10.54503/2953-8092.2023.1\(1\)-52](https://doi.org/10.54503/2953-8092.2023.1(1)-52)

Ներածություն

Գրադարանային գործի, մատենագիտության և տպագրության պատմության համատեքստում առանձնանում են անձնական գրադարանները՝ որպես ինքնատիպ և յուրօրինակ հավաքածուներ: Գիտության, մշակույթի, գրականության տարբեր ոլորտների ներկայացուցիչների անձնական հավաքածուները արժևորվում են հատկապես տվյալ դարաշրջանի մշակութային կյանքը վերլուծելիս: Ցավոք, ինչպես նախկինում, այնպես էլ այսօր, նմանատիպ գրադարանները հաճախ մնում են ստվերում:

Մի շարք անձնական գրադարաններ տարբեր տասնամյակներում հանգրվանել են գրադարաններում, որոնց հիմքի վրա ձևավորվել են անհատական հավաքածուները: Սակայն այդ հավաքածուների հանրայնացման ուղղությամբ աշխատանքները նորից մնացել

են ստվերում: Դրանք սահմանափակվել են տվյալ կառույցի պատերի ներքո:

Հայ իրականության մեջ անձնական գրադարաններին գիտական անդրադարձները գրեթե բացակայում են¹: Մինչդեռ յուրաքանչյուր նման գրադարան հանդես է գալիս նախ որպես հայ տպագիր ժառանգության բաղկացուցիչ մաս, ապա որպես տվյալ անհատի խոսքի, մտքի, մտածելակերպի, հայացքների կրող և փոխանցող: Յուրաքանչյուր անձնական գրադարանի մեջ ամփոփված են այն սերմերը, որոնք ծլարձակում են տվյալ գործչի ստեղծագործության կամ գիտական ժառանգության մեջ: Ուրեմն, եթե ուզում ենք լիարժեք պատկերացում կազմել որևէ անհատի մասին, նրա անձնական գրադարանի ուսումնասիրությունը պետք է դառնա պարտադիր:

«Հ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանն առանձնանում է իր հարուստ հավաքածուներով: 1965 թ. այստեղ ստեղծվել է առաջին անհատական ֆոնդը՝ պրոֆեսոր Համազասպ Համբարձումյանի² անձնական գրադարանի նվիրատվության հիման

¹ Սա բացատրվում է նաև նրանով, որ շատ քիչ են անձնական գրադարանների մատենագիտությունները: Հայ իրականության մեջ առաջինը Հովի. Թումանյանի անձնական գրադարանն է ուսումնասիրվել պատշաճորեն: Ապացույցը 1987-2000 թթ. ընթացքում տպագրված մատենագիտության չորս հատորներն են: Նրանից հետո, եթե անգամ ուսումնասիրվել են գրողների կամ մշակութային գործիչների անձնական գրադարանները, ապա դրանք գոնե չեն հանրայնացվել: 2022 թ.՝ Եղիշե Չարենցի ծննդյան հոբելյանական տարում, լույս տեսավ բանաստեղծի անձնական գրադարանի մատենագիտությունը, որի կազմման աշխատանքներին զուգահեռ իրականացվեցին հետազոտական աշխատանքներ: Նշենք նաև, որ վերջինիս անձնական գրադարանին անդրադարձել են Ներսես Հայրապետյանն (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1987, 63) ու Ռաֆիկ Ղազարյանը (ՂԱԶԱՐՅԱՆ, ՊԱՊՅԱՆ 1977, 48-59): 2022 թ. տպագրվեց նաև Կոմիտասի անձնական գրադարանի մատենագիտությունը՝ համապատասխան վերլուծությամբ (ՀԱՐՈՅԱՆ 2022, 144):

² Համազասպ Ասատուրի Համբարձումյան (1880-1965), թարգմանիչ, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1962 թ.), Վիկտոր Համբարձումյանի հայրը:

վրա³: Այժմ գրադարանում պահվում են Հայաստանի և Սփյուռքի հայ նշանավոր գիտնականների, մշակույթի և այլ ոլորտների գործիչների՝ նվիրատվության կարգով տարբեր տարիներին ստացված 28 հավաքածուներ, որոնց գրականության ընդհանուր քանակը կազմում է ավելի քան 92.500 գրադարանային միավոր:

Գրադարանի անձնական հավաքածուների հետ պարբերաբար իրականացվում են հետազոտական աշխատանքներ, սակայն առ այսօր ի հայտ են գալիս տպագրություններ, որոնք ինքնատիպ և խիստ արժեքավոր են տպագիր ժառանգության հանրահոջակման տեսանկյունից: Այդ հավաքածուների շարունակական ուսումնասիրությունն ու հանրայնացումը հրատապ է և կարևոր:

«Էդգարյան» հավաքածու. ընդհանուր նկարագիր

Երաժիշտ, բանաստեղծ Հովիկ Ավետիսի Էդգարյանը ծնվել է Իրանի Չհարմահալ գավառի Հաջիբադ գյուղում, 1925 թ. հունիսի 25-ին (ՈՍԿԱՆՅԱՆ 2001, 39; ԽԱՂԵՐ, ԽԱՆԵՆՅ 1988, 53): Շրջանցելով կենսագրական մանրամասները՝ նշենք միայն, որ Մերձավոր Արևելքում նա եղել է իր ժամանակի առաջադեմ մտավորականներից մեկը, իսկ գործունեության շրջանակն ընդգրկել է մշակույթի տարբեր ոլորտները: Այդ գործունեության արդյունքները շոշափելի և տեսանելի են առ այսօր: Մշակույթի տարբեր ոլորտներից առանձնացնենք հատկապես տպագրության ոլորտը:

«Հ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում է գտնվում «Էդգարյան» հավաքածուն՝ ձևավորված Հովիկ Էդգարյանի (1925-2016 թթ.) նվիրատվությունների հիման վրա: Հավաքածուն կազմվել է 1972 թ. օգոստոսի 2-ից, ինչպես նշված է համապատասխան

³ ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում պահվող «Համբարձումյան» ֆոնդի գրանցամատյանը թվագրվում է 1965, որի հիման վրա կարող ենք նշել, որ հավաքածուն ստեղծվել է հենց այդ թվականին: Հայտնի է նաև, որ Համազասպ Համբարձումյանի անձնական ֆոնդի ցուցասրահը բացվել է 1968 թ. (ՄԵՔԵՐՅԱՆ 1968, 61-68):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

գրանցամատյանի կազմին⁴: Նույն գրանցամատյանը փաստում է, որ 1972 թ. օգոստոս-նոյեմբեր ամիսներին մուտքագրվել է 876 միավորի մատենագիտական տվյալ, ինչից կարող ենք ենթադրել, որ ի սկզբանե «Էդգարյան» հավաքածուն կազմել է 876 տպագիր միավոր: 1973 թ. ընթացքում այդ թիվն ավելացել է 17-ով: Հայտնի է, որ Հ. Էդգարյանը հավաքածուն համալրել մինչև իր կյանքի վերջը. ըստ գրանցամատյանի՝ հավաքածուի համալրումը շարունակվել է մինչև 2004 թ.: Ավելին, մի շարք գրքերի տիտղոսաթերթերին պահպանվել են ինքնագրեր և ընծայագրեր, որոնք վերը նշվածի վկայությունն են: Այսպես, իր «Լուսաշող» բանաստեղծությունների ժողովածուի օրինակի տիտղոսաթերթին նա գրել է. «Իմ անուան ֆոնդին Երեւանի գիտութիւնների Ազգային Ակադեմիայում, 15.10.96» (ԷԴԳԱՐԵԱՆ 1984, 172): Ներկայում ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում պահպանվող «Էդգարյան» հավաքածուն կազմում է 1285 տպագիր միավոր⁵:

Ըստ մշակութային գործիչ Ավր Հովհաննիսյանի բանավոր հաղորդման՝ Հ. Էդգարյանը հավաքածուն Հայաստան է ուղարկել բավական բարդ քաղաքական պայմաններում, երբ լարված էին ռուս-պարսկական հարաբերությունները, և խոսք անգամ լինել չէր կարող տպագիր ժառանգությունը Հայաստան փոխադրելու մասին⁶: Սակայն Հ. Էդգարյանին հաջողվել է իրականություն դարձնել իր երազանքը: Հավաքածուի ընդգրկուն հատվածը՝ 876 միավոր, նա Հայաստան է ուղարկել հենց այդ ժամանակահատվածում: Լարված

⁴ Ցավոք, այս հավաքածուն ստեղծելու ՀՀ ԳԱԱ նախագահի որոշումը գտնել չհաջողվեց, այդ պատճառով հենվում ենք գրանցամատյանի ստեղծման տարեթվի վրա:

⁵3 միավոր, թերի օրինակ լինելու պատճառով, չէր արձանագրվել գրանցամատյանում: Սակայն հետազոտելուց հետո հստակեցվեցին մատենագիտական տվյալները և ավելացվեցին:

⁶ Ա. Հովհաննիսյանի ելույթը տե՛ս

<https://www.facebook.com/100064621222722/videos/300579131082773/>
(11.06.2023):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

քաղաքական հարաբերությունները, սակայն, թույլ չեն տվել, որ ինքն անձամբ գա Հայաստան և մասնակցի հավաքածուի ստեղծման աշխատանքներին: Ըստ Շ. Ոսկանյանի՝ Էդգարյանն առաջին անգամ Հայաստան այցելել է 1979 թ., հավաքածուի ստեղծումից 7 տարի անց (ՈՍԿԱՆՅԱՆ 2001, 11): Ա. Հովհաննիսյանը նշում է, որ տեղափոխման ողջ գործընթացը ղեկավարել է անձամբ Հ. Էդգարյանը:

Հ. Էդգարյանի անձնական գրադարանը ձևավորվել է հոր՝ Ավետիս քին. Էդգարյանի հավաքած գրքերի հիման վրա: Ա. Հովհաննիսյանը վերոնշյալ բանավոր հարցազրույցում տեղեկացնում է, որ հնատիպ և վաղ շրջանի տպագրությունների մեծ մասը հավաքել էր տեր Ավետիսը Նոր Զուղայում: Հայտնի է, որ նա եղել է ուսուցիչ, 1945 թ. ձեռնադրվել է քահանա և ծառայել Նոր Զուղայի Ս. Մինաս եկեղեցում: Որոշ ժամանակ անց կրթական և հոգևոր աշխատանքի է անցել Հնդկաստանում՝ դասավանդելով Կալկաթայի համալսարանում, միաժամանակ նախագահելով «Նոր Ազդարար» ամսագրի խմբագրակազմը (ՈՍԿԱՆՅԱՆ 2001, 6): Լինելով ժամանակի առաջադեմ մշակութային ու կրթված գործիչներից մեկը և օգտվելով աշխատանքի ընձեռած հնարավորություններից՝ տեր Ավետիսը կարողացել է հավաքել արժեքավոր տպագրությունները և պահ տալ իր տանը: Հավանաբար սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ հավաքածուում գերակշռում են Նոր Զուղայում, Կալկաթայում, Մադրասում տպագրված վաղ շրջանի եզակի հրատարակությունները, որոնցից աշխարհի տարբեր գրադարաններում և մշակութային օջախներում պահպանվել են եզակի նմուշներ⁷: Հավաքածուում արժեքավոր են նաև Վենետիկում, Վիեննայում, Տրիեստում, Ամստերդամում, Կ. Պոլսում, Շուշիում, Ս. Պետերբուրգում տպագրված հնատիպ և վաղ շրջանի հրատարակությունները: Նման տպագրությունների առկայությունը կարող ենք բացատրել միայն գրավաճառ ցանցի ակտիվությամբ. աշխարհի տարբեր վայրերում տպագրված

⁷ Որոշ տպագրություններ կներկայացնենք հոդվածի երկրորդ մասում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

գրքերն ու պարբերականները հանգրվանում էին Նոր Ջուղայում, Կալկաթայում, Մադրասում, որոնք ժամանակին եղել են գրատպության և գրավաճառ ակտիվ կենտրոններ⁸: Աշխատելով Նոր Ջուղայում և Կալկաթայում՝ Ավետիս քահանան ի պաշտոնն շփվել է տեղի մշակութային օջախների, հայ համայնքի ներկայացուցիչների հետ՝ հավաքելով այդ արժեքավոր տպագրությունները:

Հոր գործը շարունակել է որդին՝ ընդլայնելով անձնական գրադարանի սահմանները և հավաքագրելով նոր տպագիր նյութեր: Հայտնի է, որ Հ. Էդգարյանը զբաղվել է հրատարակչական և տպագրական գործունեությամբ, հիմնել է հրատարակչական հիմնադրամ և տպագրել շուրջ 30 անուն գիրք ու մամուլ (ՈՍԿԱՆՅԱՆ 2001, 10): Նա քաջատեղյակ է եղել հայ տպագրության պատմությանը և արժևորել է այն՝ որպես ազգային մտածելակերպի և հոգեբանության պահպանման կարևորագույն գործոն:

Ժամանակագրական առումով հավաքածուն ընդգրկուն է այստեղ մեկտեղվել են 17-րդ դարի երկրորդ կեսից մինչև 21-րդ դարի առաջին տասնամյակը տպագրված գրքեր և պարբերականներ: Այսինքն, հավաքածուն արտացոլում է հայ տպագրության տարբեր շրջափուլերի առանձնահատկություններն ու նրբությունները թե՛ տպագրարվեստի, թե՛ բովանդակային առումներով: Սա հնարավորություն է տալիս մեզ ուրվագծել տպագրության պատմության զարգացման ընթացքը՝ ընդգծելով յուրաքանչյուր փուլի ինքնատիպությունը: Կարծում ենք՝ սա ոչ միայն «Էդգարյան», այլև ցանկացած այլ անհատական հավաքածուի կարևոր առանձնահատկություններից մեկն է:

⁸ Հայ առաքելական եկեղեցու Իրանահնդկական թեմը կազմավորվել էր դեռևս 17-րդ դարի սկզբին: Առաջնորդանիստը եղել է Նոր Ջուղայի Սուրբ Ամենափրկիչ վանքը: Ընդգրկել է Իրանի ամբողջ տարածքը, բացառությամբ Ատրպատականի թեմի, Հնդկաստանը, Ծայրագույն Արևելքը, Իրաքի հայ համայնքը (ԱՅՎԱՋՅԱՆ 2002, 405-407):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Հավաքածուում պահպանվող ամենահին գիրքը Վենետիկում տպագրված Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» երկն է՝ տպագրված 1660 թ.: Այս արժեքավոր տպագրության նշված օրինակը թերի է, ինչի պատճառով երկար տարիներ հնարավոր չի եղել ամբողջացնել մատենագիտական տվյալները: 2023 թ. սկզբին, երբ դեռ ընթացքի մեջ էին հավաքածուի ուսումնասիրման աշխատանքները, հնարավոր դարձավ պարզել սույն տպագրության ինքնությունը, ինչի շնորհիվ առավել ընդգծվեց հավաքածուի պատմական արժեքը: Նույն ժամանակահատվածում, բացի Շնորհալու երկից, պարզվեց ևս մեկ գրքի՝ 1668 թ. Ամստերդամում տպագրված «Նոր կտակարան»-ի ինքնությունը: Թերի լինելու պատճառով (չունի տիտղոսաթերթ, բացակայում են սկզբի 406 և վերջին 933-934-րդ էջերը, պատուած են 931-932-րդ էջերը) սույն օրինակի մատենագիտական տվյալները ևս չէին ամբողջացվել: Գիրքը չէր արտացոլվել հավաքածուում, ավելին, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանը չէր արտացոլվել «Հայ գիրքը 1512-1800 թթ.» մատենագիտության մեջ՝ որպես նշված երկու տպագրությունների պահպանության վայր (ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 53-54): Գրքի այս օրինակն ունի կաշեպատ կազմ և սև մատիտով արված արժեքավոր նշումներ ու մակագրություններ կազմի երկու երեսներից, որոնք փաստում են, թե պատմական ինչ ուղի է անցել այն:

Նշենք, որ հավաքածուում ներկայում առկա է 20 միավոր հնատիպ (1512-1800 թթ.) և 75 միավոր վաղ շրջանի (1801-1850 թթ.) տպագրություն: Մինչ Շնորհալու երկի և «Նոր կտակարան»-ի մատենագիտական տվյալների ամբողջացումը, հավաքածուի ամենավաղ տպագրություն համարվում էր Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թուոց եւ դրամից բոլոր աշխարհի» գիրքը՝ տպագրված Ամստերդամում 1699 թ.: Ներկայում հավաքածուի 3 գիրք թվագրվում է 17-րդ դար, իսկ 17 գիրք՝ 18-րդ դար: Գրեթե բոլոր օրինակներին առ-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

կա են բազմաթիվ ձեռագիր նշումներ⁹: Ժամանակագրական պատկերն ամբողջացնելու համար ավելացնենք նաև, որ «Էդգարյան» հավաքածուի մեջ ներառված 217 միավոր գրականությունը տպագրվել է 1851-1900 թթ., իսկ 123 միավորը՝ 1901-1920 թթ. ժամանակահատվածում: Մնացյալը հրատարակվել է 1921 թվականից հետո:

Տպագիր նյութերի աշխարհագրական պատկերը ևս ընդգրկուն է: Բնականաբար, առաջին հորիզոնականում Իրանն է: Հավաքածուի 277 միավոր տպագրվել է Թեհրանում, Թավրիզում և Նոր Ջուղայում: Գերակշռում են ԱՄՆ-ում (Նյու Յորք, Բոստոն, Ֆրեզնո և այլն, 147 միավոր), Լիբանանում (Բեյրութ, Անթիլիաս, 167 միավոր), Թուրքիայում (Կ. Պոլիս, Զմյուռնիա, Տրապիզոն, 100 միավոր), Հնդկաստանում (Կալկաթա, Մադրաս, 89 միավոր), Ֆրանսիայում (Փարիզ, Մարսել, 87 միավոր), Վրաստանում (Թիֆլիս, 74 միավոր) և այլ վայրերում տպագրված գրքերն ու պարբերականները: Տպագրության պատմության տեսանկյունից խիստ արժեքավոր են հատկապես Վենետիկում, Վիեննայում, Տրիեստում, Ամստերդամում, Կալկաթայում, Մադրասում, Կ. Պոլսում տպագրված գրքերը, քանի որ դրանք հիմնականում հնատիպ կամ վաղ շրջանի հրատարակություններ են:

«Էդգարյան» հավաքածուն լեզվական առումով միօրինակ չէ: Հավաքածուում առկա է 1111 միավոր հայերեն տպագիր միավոր: Մնացյալը լատինատառ կամ պարսկերեն տպագրություններ են:

Հավաքածուն ներառում է միայն գրքեր (860 միավոր) և պարբերականներ, հիմնականում ամսագրեր՝ տպագրված մեծամասամբ 1920 թվականից հետո աշխարհի տարբեր վայրերում¹⁰:

⁹ Հնատիպ շրջանի տպագրությունների ձեռագիր հիշատակումներն առանձին ուսումնասիրության թեմա են: Քանի որ «Էդգարյան» հավաքածուում դրանց թիվը շատ է, ձեռագիր հիշատակումներին, ինքնագրերին և ընծայագրերին կանդրադառնանք հետագայում:

¹⁰ «Էդգարյան» հավաքածուի պարբերական մամուլի բաժինը բավական մեծ է և բովանդակայից: Ներկայում շարունակվում են աշխատանքները մամուլի

Մաքենագիտական տվյալներ «Էդգարյան» հավաքածուի որոշ արժեքավոր տպագրությունների վերաբերյալ

Հիմնարար գիտական գրադարանում պահվող «Էդգարյան» հավաքածուն բավական ընդգրկուն է: Հնարավոր չէ անդրադառնալ յուրաքանչյուր տպագրությանն անհատապես: Ահա ինչու հետազոտության շրջանակում ուշադրությունը կենտրոնացրել ենք որոշ գրքերի վրա, որոնք մեր կարծիքով արժեքավոր են տպագրության պատմության տեսանկյունից: Նրանց մասին պահպանվել են հակիրճ տվյալներ: Դրանք կամ բացակայում են հայաստանյան գրադարաններում և հավաքածուներում, կամ առկա են եզակի օրինակներ:

Հայ տպագրության պատմության վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացվել են տարբեր ժամանակներում: Առ այսօր դրանք շարունակվում են, քանի որ աշխարհի տարբեր գրադարաններում և մշակութային օջախներում ի հայտ են գալիս գրքեր և պարբերականներ, որոնք նոր լույս են սփռում տվյալ տպագրավայրի և հայ տպագրության պատմության վրա: Մեզ հասած համահավաք մատենագիտություններն, իհարկե, ամբողջացնում են դաշտը, սակայն տասնամյակներ անց այդ ցանկերը թարմացնելը պարտադիր է դառնում, քանի որ ի հայտ եկած տպագրությունները կամ ներառված չեն դրանցում կամ նշված են աստղանիշով (մատենագետը նյութը անձամբ չի տեսել):

Նոր տպագրությունների հայտնաբերումը պայմանավորված է մի շարք հանգամանքներով՝ նոր հավաքածուների ուսումնասիրություններ, թվայնացում, տարբեր գրադարանների փակ ֆոնդերի հանրայնացում և այլն: Անկախ հանգամանքներից, նման տպագրությունների ի հայտ գալը ենթադրում է նոր ուսումնասիրություն և նոր

վերականգնման, դասակարգման ուղղությամբ, որոնք ավարտելուց հետո միայն հնարավոր կլինի իրականացնել որոշակի ուսումնասիրություն: Այդ պատճառով ներկա ուսումնասիրության մեջ հավաքածուի պարբերական մամուլին անդրադառնում ենք հպանցիկ:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

վարկածների շրջանառություն: Համագործակցության և ամենօրյա աշխատանքի արդյունքում նմանատիպ որոշ գրքերի թվային տարբերակները հնարավոր եղավ ներառել հայ գրքի թվային շտեմարաններում: Մինչդեռ այդ գրքերը ֆիզիկապես կամ բացակայում էին Հայաստանում, կամ պահպանվել էր մեկ կամ երկու օրինակ:

Նորահայտ տպագրություններ գտնելու տեսանկյունից խիստ արժեքավոր է «Էդգարյան» հավաքածուն, որի վերահաշվառման և ուսումնասիրության արդյունքում գտնվեցին գրքեր, որոնք տարբեր պատճառներով չէին արտացոլվել հայ գրքի համահավաք մատենագիտություններում կամ նկարագրվել էին ըստ մատենագիտական աղբյուրների: Հավաքածուի ուսումնասիրության արդյունքները գերազանցեցին մեր սպասումները: Ներկայացնենք նրանցից մի քանիսը.

1. *Նոր տետրակ այբուբենական: Երկու հատորով.*- Մադրաս: Ի տպարանի պարոն Սարգիս Ծատուր Աղավելեանց կոչեցելոյ, 1809, շարվածքը՝ 14,5X9,5 սմ:

Հատոր Ա.- 152 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Նոր տետրակ այբուբենական /Վայելուչ կարգաւ դասատրեալ, և պէսպէս իրօք ճո/խացուցեալ, 'ի յուսումն մանկանց մերագնէից:/ Յընտրութեան 'ի Հայրապետութիւն] Քրիստոսահիմն/ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ամենից Հայոց՝ Տեառն/ Եփրեմ Շնորհազարդ Արք Եպիսկոպոսի, և/ նարդենիս Գերզգօն Առաջնորդի ամենայն Հայոցն՝ որք/ 'ի Ռուսաստան:/ Եւ 'ի Առաջնորդութեան] Ս[ր]բ[ոյ] Ամենափրկչի վանին Տ[եառ]ն Յարութիւնի/ Արք Եպիսկոպոսի և Քաջ Հովուի մերոյ որ 'ի Նորն Ջուղայ:/ Յամի Տեառն 1809:/ Եւ 'ի թուին Հայոց 1257:/ Արդեամբք և Ծախիւք Պարոն Սարգիս Ծատուր/ Աղայվելեանց կոչեցելոյ, և ի նորին իսկ նորահաստատ: / Տպարանի որ 'ի Մադրաս: /

Հատոր Բ.- 128 էջ:

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Նոր տետրակ այբուբենական / Հատոր Երկրորդ / Յորում բովանդակին՝ կանոն մի վանկեալ Սաղմոս, և այլ զանազան օգտակար

բանք՝ առակք՝ և ոտանաւորք, / քաղուածոյք և թարգմանեալք յայլ ազգաց:/ Յընտրութեան 'ի Հայրապետութիւն] Քրիստոսահիմն / Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ամենից Հայոց՝ Տեան/ Եփրեմ Շնորհազարդ Արք Եպիսկոպոսի, և/ նարդենիս Գերզգօն Առաջնորդի ամենայն Հայոցն՝ որք/ 'ի Ռուսաստան:/ Եւ 'ի Առաջնորդութեան] Ս[ր]բ[ոյ] Ամենափրկչի վանին Տ[եառ]ն Յարութիւնի/ Արք Եպիսկոպոսի և Քաջ Հովուի մերոյ որ 'ի Նորն Ջուղայ:/ Յամի Տեան 1809:/ Եւ 'ի թուին Հայոց 1257:/ Արդեամբք և Ծախիւք Պարոն Սարգիս Ծատուր/ Աղայվէլեանց կոչեցելոյ, և ի նորին իսկ նորահաստատ: / Տպարանի որ 'ի Մաղրաս: /

Գրքի մասին որոշ մատենագիտական տվյալներ հաղորդել են Ա. Ղազիկյանը (ՂԱԶԻԿԵԱՆ 1909, 134-135) և Օ. Սեքուլյանը (ՍԵՔՈՒԼԵԱՆ 1983, 105-106): «Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ Հ. Դավթյանը առաջին հատորի նկարագրությունը կատարել է՝ հենվելով Ա. Ղազիկյանի հաղորդած տեղեկությունների և Հայաստանի պատմության թանգարանի՝ այդ պահին հայտնի միակ օրինակի վրա (ԴԱՎԹՅԱՆ 1967, 36): Յ. Իրազեկի «Պատմութիւն հնդկահայ տպագրութեան» գրքում գտնում ենք տվյալ տպագրության մանրամասն նկարագրությունը (ԻՐԱԶԵԿ 1986, 142-144): Ըստ նրա՝ այբբենարանի հեղինակը տպարանատեր Սարգիս Աղավալյանն է, ով նյութը բաժանել է երկու մասի և հրատարակել երկու հատորով:

Նշենք, որ Աղավալյանի տպարանում տպագրվել է չորս անուն կամ վեց հատոր գիրք: Այբբենարանը տպարանի երկրորդ տպագրությունն է՝ երկու հատորով: Ա. Ղազիկյանի, Հ. Դավթյանի մատենագիտական ցանկերում նկարագրվել է միայն առաջին հատորը, մինչդեռ երկրորդ հատորի մատենագիտական նկարագրությունը չի արտացոլվել գրքի ֆիզիկական բացակայության պատճառով: Առաջին անգամ երկրորդ հատորին անդրադարձել են Ստյոպա Պետոյանը և Ռուբեն Ալեքսանյանը 2018 թ. «Նորահայտ գրքեր և պարբերականներ» գրքի Ա. պրակում (ՊԵՏՈՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆՅԱՆ 2018, 11), երբ հնարավոր եղավ ստանալ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկչի

վանքում պահվող օրինակի թվային տարբերակը, որի հիման վրա ամբողջացվեց մատենագիտական նկարագրությունը:

2023 թ. ուսումնասիրությունից հետո պարզ դարձավ, որ Հայաստանի պատմության թանգարանի և Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի «Ներսես Շնորհալի» գրադարանի օրինակները միակը չեն. Գրքի Ա. և Բ. հատորները պահպանվում են նաև ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուում: Համեմատության արդյունքում պարզվեց, որ Նոր Ջուղայի թվայնացված օրինակում բացակայում են որոշ էջեր: Հիմնարար գիտական գրադարանի օրինակի մի շարք էջեր պոկված կամ մասամբ պատռված են, որոշ էջեր՝ վերականգնման ենթակա, սակայն սույն օրինակը լրացնում է արդեն հայտնի օրինակի պակաս էջերը: Վերակազմելու արդյունքում տիտղոսաթերթին նախորդող պատկերը՝ համապատասխան գրությամբ այս օրինակում նախորդում է համարակալված առաջին էջին:

2. Թանգարան բարեգարդ կամ Հաւաքումն զուարճալի և քաղցրալուր պատմութեանց: Հատոր Ա.- Մադրաս: Ի տպարանի Սարգիս Ծատուր Աղայալեանցի, 1809.

ՏԻՏԴՈՍԱԹԵՐԹ

ԹԱՆԳԱՐԱՆ / ԲԱՐԵԶԱՐԴ / կամ / Հաւաքումն զուարճալի և քաղցրալուր բարոյական / պատմութեանց: / Թարգմանեալ յիտալական լեզուէ 'ի հայկա/կան բարբա, աշխատութեամբ Պետրոս Վարդապետի / Պոռնագեան Կարնեցոյ Աշակերտին Բօթբականտի. / 'ի գրօսանս և 'ի յօգուտ ուխտի մանկանց եկեղեցոյ : / ՀԱՏՈՐ Ա: / ... / Յամի Տ[եառ]ն 1809: / Եւ ի թովն Հայոց 1258» / Արդեամբք և Ծախիք Պրն Սարգիս Ծատուր Աղայ- / վալեանց կոչեցելոյ, և 'ի նորին նորակերտ / ՏՊԱՐԱՆԻ / ՈՐ / 'ի ՄԱԴՐԱՍ / Է, 176 էջ, շարվածքը՝ 12,3X7,5 սմ:

Առաջին հատորի մասին որոշ մատենագիտական տվյալներ հաղորդել են Արսեն Ղազիկյան, Գարեգին Զարբանայանը, Թեոդիկը, Գարեգին Լևոնյանն իրենց մատենագիտական ցանկերում, որոնք հետագայում արտացոլվել են նաև Հայկ Դավթյանի կազմած

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ (ԴԱՎԹՅԱՆ 1967, 34):

Արժեքավոր այս հրատարակության մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդել նաև Իրազեկը «Պատմութիւն հնդկահայ տպագրութեան» գրքում, ուր ներկայացրել է գրքի տպագրության նախապատմությունը, բովանդակությունն ու կարևորությունը (ԻՐԱ-ՋԵԿ 1986, 144-146): Ըստ այդմ՝ Պետրոս վրդ. Պուոնազյանը իտալերենից թարգմանել է 33 փոքրիկ պատմություններ, որոնք Աղավալյանը հրատարակել է երկու հատորով: Երկրորդ հատորից բազմաթիվ օրինակներ պահպանվել են տարբեր գրադարաններում՝ մատենագիտական ամբողջական նկարագրությամբ: Առաջին հատորի մատենագիտական նկարագրությունը թերի է կատարվել՝ գրքի ֆիզիկական բացակայության պատճառով: Ավելի ուշ առաջին հատորի մեկ օրինակ հայտնաբերվել է Մաշտոցյան Մատենադարանում, ինչը թույլ է տվել ամբողջացնել գրառումը: Եվս մեկ օրինակ արդեն հասանելի է ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում: Սույն օրինակը թերի է. բացակայում են տիտղոսաթերթը, առաջին երեք և վերջին երկու էջերը: Կազմը կաշեպատ է, մի փոքր վնասված, կռնակին զարդանախշեր, որոնք գրեթե չեն երևում կազմի խունացած լինելու պատճառով: Բնագիրը բոլորգիր է՝ մասնակի նոտրգիր հատվածներով: Առկա են գլխագարդեր և վերջագարդեր:

3. *Յորդորակ յաղագս հաստատելոյ Հայկեան ճեմարան ի մեծ մայրաքաղաքին Անգղիոյ ի Լոնդոն.*- Ի Կալկաթա: Ի տպարանի Մարդասիրական ճեմարանի, 1825.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՅՈՐԴՈՐԱԿ / Յաղագս հաստատելոյ / ՀԱՅԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ / Ի մեծի մայրաքաղաքին Անգղիոյ՝ Ի Լոնդոն / Տպագրեալ ի Տպարանի Մարդասիրական ճեմարանի / Ի Կալկաթա, ի Լոնկոտեմբերի, 1825: /

44 էջ, շարվածքը՝ 11,5X7,5 սմ:

«Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ (ԴԱՎԹՅԱՆ 1967, 128) մատենագիտական նկարագրությունը կա-

տարվել է աստղանիշով՝ հենվելով Արսեն Ղազիկյանի, Գարեգին Զարբհանայանի հաղորդած տվյալների վրա, որոնք շատ «ժլատ» են: Ա. Ղազիկյանը գիրքը նկարագրել է առանց հեղինակի տվյալի՝ ընդգծելով միայն, որ փոքր գրքույկ է (ՂԱԶԻԿԵԱՆ 1909, 146), իսկ Գ. Զարբհանայանը նշել է միայն տպագրական կարևոր տվյալները (ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ 1883, 478): Ի տարբերություն նրանց՝ Յ. Իրազեկի հաղորդած տեղեկությունները բովանդակալից են: Վերջինս ընդգծել է Հովհաննես Ավդայանցին՝ որպես հեղինակ-հրատարակիչ, մանրամասնել է բովանդակությունը (ԻՐԱԶԵԿ 1986, 261-262):

Քանի որ մատենագետներին գիրքը ֆիզիկապես հասանելի չի եղել, նրանք ստիպված են եղել հենվել այն տեղեկությունների վրա, որոնք հասանելի են եղել տվյալ պահին: Մինչդեռ 2023 թ. հետազոտական աշխատանքների արդյունքում պարզվեց, որ տպագրության մեզ հայտնի եզակի օրինակը պահպանվում է հենց «Էդգարյան» հավաքածուում: Այս կարևոր ձեռքբերումը հնարավորություն տվեց ուսումնասիրել գիրքը, ստուգել մատենագիտական տվյալները:

Իրազեկը, հետագայում նաև Հ. Դավթյանը, որպես հեղինակ առանձնացրել են Հ. Ավդայանին, բայց գրքի՝ մեր կողմից իրականացված բովանդակային ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ ներառված են միսիոներ Ջոզեֆ Վուլֆի՝ Հովհաննես Ավդայանին ուղղված նամակը, Մարտիրոս Մկրտիչ Դավթյանի կոչը՝ ուղղված համայն հայությանը և Հովհաննես Ավդայանի պատասխան-հորդորը՝ հիշյալ գրությունների առթիվ: Կարծում ենք՝ սույն գրքույկը Լոնդոնում հայկական կրթական հաստատություն հիմնելու վերաբերյալ ժողովածու է, որի հրատարակիչը Հովհաննես Ավդայանն է:

Մեզ հայտնի օրինակն ունի մի փոքր պատռված կապույտ կազմ՝ վրան զարդանախշ, դարձերեսին՝ սև մատիտով ընծայագիր, որի զգալի մասը ջնջված է: Պահպանվել են մակագրության հետևյալ բառերը՝ «1862 նույն 2»: Կազմի վերջերեսին «Դիմառնություն ի դիմաց մօր մերոյ Հայաստանի» վերնագրով բանաստեղծությունն է, որի ներքևում ձեռագիր ավելացված է «Հայկազունք» բառը:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

4. Նուագարան գրությանց.- 'Ի Կալկաթա: յ'Արարատեան տպարանի, 1846.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՆՈՒԱԳԱՐԱՆ ԶԲՕՍԱՆԱՅ / ԱՌ / 'Ի ՊԷՏՍ / ԱԶԳԱՅԻՆ / ԽՐԱԽՃԱՆՈՒԹԵԱՆ / 'Ի ԿԱԼԿԱԹԱ / ՅԱՐԱՐԱՏԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ / 1846 / 2 չի., 95, 2 չի. էջ, շարվածքը՝ 9X5 սմ:

«Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ մատենագիտական նկարագրությունը կատարվել է աստղանիշով (ԴԱՎԹՅԱՆ 1967, 345): Մատենագիտական տվյալը Հ. Դավթյանը վերցրել է Մեսրոպ Թաղիադյանի «Գեղարվեստական երկեր»-ից (ԹԱՂԻԱԴՅԱՆ 1965, 425, 10-րդ ծանոթագրություն):

Երգարանի մասին մանրամասն տեղեկություններ հաղորդել է Իրազեկը՝ առանձնացնելով այս երգարանը՝ որպես հասարակության կողմից պահանջված ժողովածու (ԻՐԱԶԵԿ 1986, 348): Նա, որպես կազմող, նշել է Մ. Թաղիադյանին և մանրամասն նկարագրել է բովանդակությունը: Ա. Ղազիկյանը Մ. Թաղիադյանին նշել է որպես հրատարակիչ, իսկ գրքի նկարագրության մեջ ընդգծել, որ իրեն հասանելի օրինակը չունի տիտղոսաթերթ (ՂԱԶԻԿԵԱՆ, 1912, 297):

Գրքի տպագրական տվյալները հիշատակվել են նաև Մ. Մկրյանի ծանոթագրություններով լույս տեսած Մ. Թաղիադյանի «Եղերերգութիւն» բանաստեղծությունների ժողովածուում (ԹԱՂԻԱԴԵԱՆ 1893, 64): Լրացուցիչ որևէ տվյալ այստեղ չկա:

Մինչև 2023 թ. գիրքը ֆիզիկապես հասանելի չի եղել ընթերցողին և հետազոտողին: «Էդգարյան» հավաքածուի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ մեզ հայտնի եզակի օրինակը պահպանվում է հենց այստեղ: Սա շատ կարևոր ձեռքբերում էր, քանի որ առավել ամբողջական, լիարժեք դարձավ հնդկահայ տպագրության պատմությունը:

Սույն տպագրությունը համարվում է Կալկաթայի «Արարատեան» տպարանի՝ 1846 թ. տպագրած վերջին գիրքը: Պահպանված օրինակի կազմը վնասված է, դարձերեսին, տիտղոսաթերթին և

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

«Ցանկ»-ին նախորդող դատարկ էջերին առկա են ընդարձակ ձեռագիր հիշատակումներ: Տիտղոսաթերթը զարդափակ է, վրան՝ զարդանախշ: Բնագիրը բոլորգիր է՝ նոտրգիր առանձին հատվածներով: Գիրքը մի փոքր վնասված է, սակայն բացակա էջեր չկան:

5. *Յովհաննէս Երզնկացի: Չարդք երկնից առ Ապոլոց իշխան.*- Կալկաթա: Ի տպարանի Արարատեան ընկերութեան, 1846.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՅՈՎՀԱՆՆՈՒ / ՎԱՐԴԱՊԵՏԻ / ԵՐԶՆԿԱՅԻՈՅ / ԶԱՐԴՔ ԵՐԿՆԻՅ / ԱՌ ԱՊԼՈՅ ԻՇԽԱՆ / 'Ի ԿԱԼԿԱԹԱ / 'Ի ՏՊԱՐԱՆԻ / ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ / 1846 /

102 էջ, շարվածքը՝ 14,5X9,5 սմ:

«Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ այս տպագրությունը նկարագրվել է աստղանիշով (ԴԱՎԹՅԱՆ 1967, 345)՝ հենվելով Ա. Ղազիկյանի հաղորդած տեղեկատվության վրա (ՂԱԶԻԿԵԱՆ 1912, 75-76): Վերջինս ընդգծել է, որ 1846 թ. տպագրությունը գրքի երկրորդ հրատարակությունն է և առանձնացրել է առաջին տպագրության հետ եղած տարբերությունները: Իրագելի գրքում մանրամասնված են տպագրական առանձնահատկություններն ու բովանդակությունը (ԻՐԱԶԵԿ 1986, 324-325):

Սույն տպագրության ֆիզիկական բացակայության պատճառով հնարավոր չի եղել կատարել ճշգրիտ մատենագիտական նկարագրություն: Ավելի ուշ պարզ է դարձել, որ մեկ օրինակ պահպանվում է Մաշտոցյան Մատենադարանում, որի հիման վրա ամբողջացվել է նկարագրությունը: 2023 թ. ուսումնասիրության արդյունքում ևս մեկ օրինակ հայտնաբերվեց Հիմնարար գիտական գրադարանում:

6. *Աւերարան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.*- 'Ի Կալկաթա: յ'Արծիւ տպարանի Պօղոսի Վիջէնեան Կոստանդնուպոլսեցոյ, 1847.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱԻԵՏԱՐԱՆ / ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ / ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ / Ի
ԿԱԼԿԱԹԱ / Յ՛ԱՐԾԻԻ ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ / ՎԻՋԷՆԵԱՆ
/ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԵՑԻՈՅ / 1847 /

740 էջ, շարվածքը՝ 8X4,5 սմ:

«Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ (ԴԱՎԹՅԱՆ 1967, 354) մատենագիտական նկարագրությունը կատարվել է աստղանիշով՝ հենվելով Կալկաթայի «Ազգասեր» հանդեսի տվյալների վրա (Աւետարան 1847, 386-387): Հանդեսում տպագրվել էր «Աւետարան ծոցակիր» վերտառությամբ հողվածը՝ որպես գրքի տպագրության ազդ, ուր նշված էր նաև վաճառքի գինը՝ 3 ռուբլի:

Սույն տպագրությունը հիշատակված չէ Ա. Ղազիկյանի մատենագիտության մեջ (ՂԱԶԻԿԵԱՆ 1909, 280): Նա հարցականով խոսել է միայն նույն տպարանում և նույն թվականին տպագրված «Աւետարան Յիւղաբերից» գրքի մասին: Ֆիզիկական բացակայության պատճառով Հ. Դավթյանն իր մատենագիտության մեջ այն սխալմամբ ներառել է անթվակիր գրքերի շարքում՝ աստղանիշով: Վերջինիս մեկ օրինակը պահպանվում է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի գրադարանում, իսկ գրքի 8 չհամարակալված թերթերը գտնվում են Մաշտոցյան Մատենադարանում:

Արժեքավոր այս տպագրության մասին տեղեկություններ է հաղորդել նաև Իրազեկը՝ նշելով, որ այն փոքր ծավալի պատճառով կոչվում է ծոցակիր և հարմար է գրպանում պահելու համար (ԻՐԱԶԵԿ 1986, 393):

Գիրքը Վիջինյան տպարանի 4-րդ կամ 5-րդ հրատարակությունն է: Տպագրվել է 1500 օրինակ¹¹: «Էդգարյան» հավաքածուի օրինակն ունի վարդագույն, ոսկեզօծ զարդանախշերով և զարդափան շրջանակով կոշտ կազմ՝ վրան խաչի պատկերով: Կազմի վրա առկա փոքրիկ անցքերը վկայում են, որ ինչ-որ ժամանակ խաչի վրա ամրացված են եղել կամ թանկարժեք քարեր, կամ մետաղյա խաչի

¹¹ Տե՛ս գրքի տիտղոսաթերթի դարձերեսի նշումը. «Առաջին տիպ 1500 օրինակք»:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

պատկեր: Կազմի կոնակին առկա են ոսկեգօծ խաչի պատկերներ, զարդանախշեր, իսկ վերևի հատվածում արտացոլված է կարծ վերնագիրը՝ «Անետարան»: Տիտղոսաթերթին՝ զարդանախշ և նշում. «Ի պէտս եւ ի զարդ Հայաստանեայց սուրբ եկեղեցեացն Հայոց: Ի հայրապետութեան Տեառն երրորդ Ներսիսի առաքելաշափղ նորապսակ կաթողիկոսի Ամենայն Հայոց», դարձերեսին՝ նշում. «Առաջին տիպ 1500 օրինակք»:

7. *Ժամագիրք արեւնի.*- Ի Կալկաթա: Ի տպարանի Պողոսի Վիջէնեանի, 1848.

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

ԺԱՄԱԳԻՐՔ / ԱՏԵՆԻ / ԱՐԱՐԵԱԼ / ՍՈՒՐԲ ԵՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՈՐՀ ԹԱՐԳՄԱՆՉԱՅՆ ՄԵՐՈՑ՝ ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՎՊՈՒՅ ԵՒ ԵՐԱՆԵԼԻ / ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ԳԻՏՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ / ԵՒ ՍՐԲՈՅ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՐԻՐ ԵՐԵՄՆԵԻՆՆԵՐՈՐԴԻ / ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ / ՈՒՇԱԴԻՐ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԲԱՂԴԱՏՈՒԹԵԱՄԲ ԸՆԴ ՆԱԽԿԻՆ ՕՐԻՆԱԿԱՅ / ԵՒ ՀԵՏԵԻԵԼՈՎ ՏՕՆԱՅՈՅՅԻՆ / Ի ԿԱԼԿԱԹԱ / ՅՄՐԾԻԻ ՏՊԱՐԱՆԻ ՊՕՂՈՍԻ ՎԻՋԷՆԵԱՆ / ԿՈՍՏԱՆՂՆՈՒՊՕԼՍԵՅԻՈՅ / ՅՆԵՐԿՐՈՐԴՈՒՄ ԱՄԻ ՏԱՊԱՐԱՆԻՆ / 1848 /

172 երկայուն, 5 չի. էջ, աղյուսակ, շարվածքը՝ 22,5X16 սմ:

Մամուլանիշեր՝ չունի: Բնագիրը՝ բոլորգիր՝ նոտրգիր հատվածներով: Բնագրում՝ մանր զարդանախշեր և բաժանագարդեր:

1848 թ. Կալկաթայի Վիջէնեան տպարանում տպագրվել է երկու ժամագիրք: «Հայ գիրքը 1801-1850 թթ.» մատենագիտության մեջ կազմողները սույն տպագրությունը շփոթել են նույն թվականին և նույն տպարանում տպագրված մյուս ժամագրքի հետ՝ հղում անելով Ա. Ղազիկյանի մատենագիտությանը և ընդգծելով. «Մեզ հանդիպած օրինակը թվում է թերի է և այս հավելվածները չունի» (ԴԱՎԹՅԱՆ 1967, 367): Այդ պատճառով երկու ժամագրքերը մատենագիտության մեջ նկարագրվել են մեկ համարի ներքո: Ա. Ղազիկյանը նկարագրել է գիրքը՝ նշումով, որ այն ինքը չի տեսել: Նա գրել է. «Միայն ժա-

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

մագիրքն է. ի վերջոյ կան, 1. «Խրատք յաղագս պաշտամանց սուրբ եկեղեցեացն Հայաստանեայց. արարեալ ի սուրբ վարդապետէն Թովմայի Մեծփեցոյ»։ 2. «Կարգաւորութիւն սուրբ եկեղեցեացն Հայոց և արարողութիւնք ժամատեղեաց և այլն», 3. «Խրատ տոմարական և մշտնջենաւոր աղիւսակաց» (ՂԱԶԻԿԵԱՆ 1909, 822): Արժեքավոր այս հրատարակութեան մասին տեղեկություններ է հաղորդում նաև Իրազեկը՝ երկու ժամագրքերը ներկայացնելով որպէս տարբեր տպագրություններ՝ համապատասխան նկարագրություններով (ԻՐԱԶԵԿ 1986, 395-396):

Սոյն տպագրութեան մեկ օրինակ պահպանվում է Հայաստանի ազգային գրադարանում, ևս մեկը, ինչպէս պարզվեց ուսումնասիրությունից, ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում: Ազգային գրադարանի օրինակում բացակա են 3, 4, 137-140-րդ էջերը, մինչդեռ ՀԳԳ օրինակն ամբողջական է: Այս օրինակը կաշեկազմ է, մի փոքր վնասված և խունացած: Սկզբի և վերջի որոշ էջեր մասամբ պատռված են: Տիտղոսաթերթը փակցված է կազմի դարձերեսին, վրան առկա է զարդանախշ և ձեռագիր նշումներ: Վերջին հինգ չհամարակալված էջերին առկա են թանաքի հետքեր: Կազմի դարձերեսին և վերջերեսին, սկզբի ու վերջին էջերին, ինչպէս նաև մեջտեղի որոշ էջերին կան ձեռագիր տարբեր նշումներ, որոնք վկայում են, որ գիրքը տարբեր թվականներին տարբեր մարդկանց է պատկանել:

«Էդգարյան» հավաքածուի երեք տասնյակից ավելի գրքերի վրա առկա են կնիքներ, որոնց մեծ մասը պատկանում է նվիրատուին՝ Հ. Էդգարյանին: Արժեքավոր են 1894 թ. հիմնադրված Նոր Զուղայի «Րաֆֆի» ընկերակցութեան, 1898 թ. հիմնադրված Թավրիզի Լսարանական ընկերութեան, 1964 թ. Սպահանում հիմնադրված «Թունեան» մանկատան, Կ. Պոլսի Յովհաննէս Գլըճեան գրավաճառանոցի, Նոր Զուղայի ազգային կենտրոնական գրավաճառանոցի և այլ կարևոր հաստատությունների կնիքներով պահպանված գրքերը: Կարծում ենք, կնիքները, ձեռագիր հիշատակումները, ինքնագրերն ու ընծայագրերը հավաքածուի արժեքավոր լինելու լավա-

գույն վկաներն են, որոնք պահանջում են առանձին հետազոտական աշխատանք:

Ամփոփում

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուն անհրաժեշտ է արժևորել առաջին հերթին տպագրության պատմության տեսանկյունից: Ներառված հնատիպ գրականությունը, վաղ շրջանի տպագրությունները, ինչպես նաև մինչև 1920 թ. տպագրված նյութերը, որոնք կազմում են այս հավաքածուի հիմքը, տեսանելի են դարձնում տպագրության պատմության զարգացման ընթացքը: Առկա տպագիր գրքերից շատերը (մամուլին, ձեռագիր հիշատակումներին ու կնիքներին կանդրադառնանք մոտ ապագայում) համարվում են եզակի տպագրություններ, քանի որ կամ բացակայում են հայաստանյան այլ գրադարաններում, կամ պահպանվել են եզակի նմուշներ: Հավաքածուի ուսումնասիրությունը թույլ տվեց ամբողջացնել մի շարք գրքերի մատենագիտական տվյալներ, գտնել այնպիսի տպագրություններ, որոնք հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում նկարագրվել էին աստղանիշներով:

Օգտագործված գրականության ցանկ

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2015 – Գրիգորյան, Մ. (2015), Հայ գիրքը՝ պատմության քառուղիներում, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(1), 55-64 [Grigoryan, M. (2015), Armenian Book in the Crossroads of the History, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 2(2), 55-64];

ԱՅՎԱԶՅԱՆ 2002 – Այվազյան, Հ. (կազմ.) (2002), *Քրիստոնյա Հայաստան. հանրագիտարան*, Երևան, Հայկական հանրագիտարան, 1072 [Ayvazyan, H. (2002), *Qristonya Hayastan: Hanragitaran*, Yerevan, Hajkakan hanragitaran, 1072];

Աւետարան 1847 – Աւետարան ծոցակիր, *Ազգասէր* (Կալկաթա), 1847, 121, 386-387 [Avetaran Tsots'akir, *Azgaser* (Calcutta), 121, 386-387];

ԴԱՎԹՅԱՆ 1967 – Դավթյան, Հ. (կազմ.) (1967), *Հայ գիրքը 1801-1850 թվականներին. մատենագիտություն*, Երևան, Երևան, ՀՍՍՀ Ա. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 536, 3 [Davtyan, H. (comp.)

(1967), *Hay Girky 1801-1850: Matenagitutyun*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 536, 3];

ԶԱՐԲՀԱՆԱԼԵԱՆ 1895 – Զարբհանալեան, Գ. (1895), *Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ*, Վենետիկ, տպ. Մխիթարեան, 282 [Zarbhanalyan, G. (1895), *Patmutyun Haykakan Tpagrutyan Skzbnavorutenen Minch ar Mez*, Venice, Mkhitaryan Press, 282];

ԷԴԳԱՐԵԱՆ 1984 – Էդգարեան, Հ. (1984), *Լուսաշող. քանաստեղծութիւններ*, Թեհրան, Նուրբաշխ, 172 [Edgaryan, H. (1984), *Lusashogh: Banasteghtsutyunner*, Tehran, Nurbashkh, 172];

ԹԱՂԻԱԴԵԱՆ 1893 – Թաղիադեան, Մ. (1893), *Եղերերգութիւն*, Թիֆլիս, տպ. Մ. Շարաձէի, 124 [Taghiadyan, M. (1893), *Egherergutyun*, Tiflis, M. Sharadze publ., 124];

ԹԱՂԻԱԴՅԱՆ 1965 – Թաղիադեան, Մ. (1965), *Գեղարվեստական երկեր*, Երևան, Հայաստան, 430 [Taghiadyan, M. (1965), *Gegharvestakan Erger*, Yerevan, Hayastan, 430];

ԻՐԱԶԵԿ 1986 – Իրազեկ, Յ. (1986), *Պատմութիւն հնդկահայ տպագրութեան*, Անթիլիաս, Հրատարակութիւն Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 560 [Irazek, H. (1986), *Patmutyun Hndkahay Tpagrutyan*, Antelias, Publication of Catholicosate of Cilicia, 560];

ԽԱՉԵՐ, ԽԱՆԵՆՑ 1988 – Խաչեր, Խանենց (կազմ.) (1988), *Հանդիպում, հր. 1*, Թեհրան, Հրատ. Հ. Էդգարեան գրական ֆոնդի, 184 [Khacher, Khanents' (comp.) (1988), *Handipum, vol. 1*, Tehran, Hrat. H. Edgaryan Grakan Fondi, 184];

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 1987 – Հայրապետյան, Ն. (1987), *Չարենցը և գիրքը*, Երևան, Սովետական գրող, 60 [Hayrapetyan, N. (1987), *Charents'y ev Girgy*, Yerevan, Sovetakan Grogh, 60];

ՀԱՐՈՅԱՆ 2022 – Հարոյան, Մ. (աշխ.) (2022), *Կոմիդասս վարդապետի անձնական գրադարանը*, աշխ. Մ. Հարոյանի, Կ. Հարությունյանի, Ա. Մուշեղյանի, Ն. Միսակյանի, Դանիել Երաժշտի, Երևան, Կոմիտաս թանգարան-ինստիտուտի հրատ. 144 [Haroyan, M. (comp.) (2022), *The Personal Library of Komitas Vardapet*, M. Haroyan, K. Harutyunyan, A. Musheghyan, N. Misakyan, Daniel Erzhisht, Yerevan, Komitas Museum-Institute Press, 144];

ՂԱԶԱՐՅԱՆ, ՊԱՊՅԱՆ 1977 – Ղազարյան, Մ. (կազմ.) (1977), *Եղիշե Չարենց 80. տարեգրություն, մատենագիտություն, ասույթներ*, կազմ.՝ Ռ.

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ղազարյան, Վ. Պապյան, Խ. Խաչատրյան, Երևան, Սովետական գրող, 80 [Ghazaryan, M. (comp.) (1977). *Eghishe Charents' 80: Taregrutyun, Matenagitutyun, Asuytner*, comp.: R. Ghazaryan, V. Papyan, Kh. Khachatryan, Yerevan, Sovetakan Grogh, 80];

ՂԱԶԻԿԵԱՆ 1909 – Ղազիկեան, Ա. (կազմ.) (1909), *Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան, հյր. Ա, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 2080* [Ghazikyan, A. (comp.) (1909), *Haykakan Nor Matenagitutyun ev Hanragitaran, vol. 1*, Venice, Surb Ghazar, 2080];

ՂԱԶԻԿԵԱՆ 1912 – Ղազիկեան, Ա. (կազմ.) (1912), *Հայկական նոր մատենագիտություն եւ հանրագիտարան, հյր. Բ, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, 306* [Ghazikyan, A. (comp.) (1912), *Haykakan Nor Matenagitutyun ev Hanragitaran, vol. 2*, Venice, Surb Ghazar, 306];

ՄԵՔԵՐՅԱՆ 1968 – Մեքերյան, Հ. (1968), Պրոֆեսոր Համազասպ Համբարձումյանի անձնական գրադարանը, *Լրաբեր հասարակական գիտությունների* (Երևան), 5, 61-68 [Meqeryan, H. (1968), *Profesor Hamazasp Hambardzumyani Andznakan Gradarany, Lraber Hasarakakan Gitutyunneri* (Yerevan), 5, 61-68];

ՈՍԿԱՆՅԱՆ 2001 – Ոսկանյան, Շ. (կազմ.) (2001), *Հովիկ Էդգարյանի հետ. կենսամատենագիտություն*, Երևան, Ամարաս, 40 [Voskanyan, Sh. (comp.) (2001), *Hovik Edgaryani het: Kensamatenagitutyun*, Yerevan, Amaras, 40];

ՈՍԿԱՆՅԱՆ 1988 – Ոսկանյան, Ն., Կորկոտյան, Ք., Սավայան, Ա. (1988), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 864 [Voskanyan N., Korkotyan, Q., Savalyan, A. (1988), *The Armenian Book in 1512-1800*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 864];

ՊԵՏՈՅԱՆ, ԱԼԵՔՍԱՆՅԱՆ 2018 – Պետոյան, Ս., Ալեքսանյան, Ռ. (կազմ.) (2018), *Նորահայր գրքեր և պարբերականներ, հյր. Ա.*, Երևան, Գիրք, 128 Petoyan, S., Aleqsanyan, R. (comp.) (2018), *Norahayt Grqer ev Parberakanner, vol. 1*, Yerevan, Girq, 128];

ՍԵՔՈՒԼԵԱՆ 1983 – Սեքուլեան, Օ. (1983), Հազուագիտ տպագրություններ Վիեննայի Մխիթարեան Մատենադարանին մէջ 1801-1850, *Հանդէս ամսօրեայ* (Վիեննա), 1-6, 101-152 [Sequlyan, O. (1983), *Hazuagyut Tpagru-*

tyunner Viennayi Mkhitaryan Matenadaranin Mej 1801-1850, *Handes Amsorya* (Wien), 1-6, 101-152]:

THE "EDGARIAN" COLLECTION OF
THE FUNDAMENTAL SCIENTIFIC LIBRARY OF NAS RA

MAYA GRIGORYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph.D. in Philology

Keywords: Library collection, history of Armenian printing, donation, personal library, bibliography, preservation of printed heritage, book restoration.

The "Edgarian" collection of the Fundamental Scientific Library of NAS RA needs to be valued first of all from the point of view of the history of printing. Includes old printed books, early prints and the printed materials until 1920 that form the basis of this collection. Many of the existing printed books (we will examine the periodicals, handwritten notes and seals in the future publications) are considered unique prints, because they are either missing in other Armenian libraries, or damaged copies have been preserved. The study of the collection made it possible to complete the bibliographic data of a number of books, to find such editions that were described with asterisks in the union bibliographic lists of Armenian books.

ԻՆՉ Է ԿԱՆԱԶ ԳՐԱԴԱՐԱՆԸ

ՀՏԴ 02 + 502

Շրջակա միջավայրը մեր շրջակայքն է և/կամ պայմանները, որտեղ ապրում ու գործում են մարդիկ, կազմակերպությունները, կենդանիները կամ բույսերը: Միջավայրը կարող է լինել բնական, սոցիալական կամ մշակութային: «Կայուն զարգացումն այն զարգացումն է, որը բավարարում է ներկայիս կարիքները՝ չվնասելով ապագա սերնդի սեփական կարիքները բավարարելու կարողությանը» (Մեր ընդհանուր ապագան, Բրունդալենդի զեկոյց, ՄԱԿ):

Այսօր շրջակա միջավայրը վտանգված է կլիմայական փոփոխություններով և այլ սպառնալիքներով՝ ներառյալ սոցիալական անհավասարությունը: Բոլոր կազմակերպությունները կայուն զարգացման միջոցով պետք է աշխատեն պահպանել շրջակա միջավայրը: Խոսքը վերաբերում է նաև բոլոր տեսակի գրադարաններին, որոնք կարող են ակտիվ և նշանակալի դեր կատարել կայուն զարգացման գործում:

Կանաչ և կայուն գրադարանը հաշվի է առնում բնապահպանական, տնտեսական և սոցիալական կայունությունը:

Կանաչ և կայուն գրադարանները կարող են լինել ցանկացած չափի, բայց պարտադիր ունենան կայունության հստակ օրակարգ, որը ներառում է.

- *Կանաչ շենքեր և սարքավորումներ.* շենքի և սարքավորումների արտանետումները կամ ածխածնի հետքը ակտիվորեն նվազում է:

- *Կանաչ գրասենյակի սկզբունքներ.* գործառնական առօրյան և գործընթացները բնապահպանական առումով կայուն են:

- *Կայուն տնտեսություն.* սպառումը զուսպ է, շրջանակային և համընդհանուր օգտագործվող տնտեսության պրակտիկական զարգացած է և համայնքին հասանելի:

- *Գրադարանային կայուն ծառայություններ.* օգտատերերի համար հեշտ հասանելի է պատշաճ և արդի տեղեկությունը: Առաջարկվում են ընդհանուր տարածքներ, սարքեր և բնապահպանական կրթություն, իսկ գործողություններն արդյունավետ են: Գրադարանն ունի ածխածնի դրական ձեռքի դրոշմ:

- *Սոցիալական կայունություն.* կարևորվում է լավ կրթությունը, գրագիտությունը, համայնքի ներգրավվածությունը, միջմշակութային բազմազանությունը, սոցիալական ներգրավվածությունը և ընդհանուր մասնակցությունը: Գրադարանն ակտիվորեն աշխատում է անհավասարությունը նվազեցնելու ուղղությամբ:

- *Շրջակա միջավայրի կառավարում.* բնապահպանական նպատակներն են SMART (Specific՝ Հատուկ, Measurable՝ Չափելի, Achievable՝ Իրագործելի, Realistic՝ Իրատեսական և Timebound՝ Ժամանակի մեջ չափելի), և գրադարանն աշխատում է նվազեցնել իր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Գրադարանի բնապահպանա-

կան քաղաքականությունը, նրա իրականացումը և բնապահպանական աշխատանքների արդյունքը հաղորդվում է ավելի լայն լսարանի:

➤ Պարտավորություն բնապահպանական ընդհանուր նպատակների և ծրագրերի նկատմամբ. պարտավորությունն առաջնորդվում է ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներով, Փարիզի կլիմայի համաձայնագրով և բնապահպանական նմանօրինակ/հարակից հավաստագրերով ու ծրագրերով:

Հղումը տե՛ս

<https://www.ifla.org/g/environment-sustainability-and-libraries/ifla-green-library-definition/>

Անգլերեն բնագրից թարգմանեց

Տիգրան Զարգարյանը

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ



**ԱԶԳԱՅԻՆ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ՇԱԲԱԹ***
ՀՏԴ 02(479.25)

Ազգային գրադարանային շաբաթը համարվում է Հայկական գրադարանային ասոցիացիայի ամենակարևոր նախաձեռնություններից մեկը: Նպատակը՝ գրքի, գիտելիքի և ընթերցանության դերի վերահիմաստավորումն է, գրագետ և տեղեկացված հասարակության ձևավորումն ի շահ մտավոր արժեքների պահպանման:

Ազգային գրադարանային շաբաթվա տոնակատարությունները սկիզբ են առել Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1958 թ.¹: Այնտեղ միջոցառումները սկսվում են կիրակի և ավարտվում շաբաթ օրը: Ավելին, միջոցառումների շարքում նշվում է նաև Գրադարանավարի օրը:

Հայաստանում Ազգային գրադարանային շաբաթվա միջոցառումներն առաջին անգամ իրականացվել են 2002 թ. և մինչ օրս իրենց ուրույն տեղն ունեն գրադարանային միջոցառումների շարքում: Ի տարբերություն ԱՄՆ-ի՝ Հայաստանում միջոցառումները մեկնարկում են երկուշաբթի և շարունակվում են ողջ շաբաթվա ընթացքում:

* Ներկայացվել է 17.04.2023, ընդունվել է տպագրության 26.06.2023:
The article was submitted on 17.04.2023, accepted for publication on 26.06.2023.

¹ National Library Week History <https://www.ala.org/conferencesevents/national-library-week-history> (06.06.2023):

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային գրադարանային շաբաթը հրաշալի առիթ է մեծաբերելու գրադարանային ոլորտի ներկայացուցիչներին, արժևորելու գրադարանները՝ որպես մշակութային, գիտական և սոցիալական հարթակներ:

Միջոցառումների շրջանակում կարևորվում են գրադարանային ոլորտին առնչվող հիմնահարցերը և դրանց լուծմանը նպատակաուղղված գործիքակազմը: Շաբաթվա աշխատանքներին մասնակցում են հայաստանյան գրեթե բոլոր գրադարանները՝ իրենց բազմաբնույթ միջոցառումներով: Գրադարանները հատուկ կազմված ծրագրով անցկացնում են տարբեր հորեյանական և թեմատիկ միջոցառումներ իրենց տարածաշրջանում, ինչպես նաև մասնակցում են այլ գրադարանների միջոցառումներին:

Ազգային գրադարանային շաբաթն անուրանալի դեր ունի մշակութային կյանքի համաչափ ձևավորման համատեքստում, քանի որ գիրք ընթերցելն ու սիրելը, գրքի նկատմամբ հոգատարություն դրսևորելն առաջնային են հոգևոր ու մշակութային դաստիարակության գործում, իսկ միջոցառումները նպաստում են գրադարանների, գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, հանրության կյանքում գրադարանների նշանակության արժևորմանը, ընթերցող-գրադարան կապի սերտացմանը:

Ամեն տարի ապրիլ ամսին անցկացվող այս միջոցառումն արդեն ավանդույթի ուժ է ձեռք բերել և նվաճել հասարակության համակրանքը:

2023 թ. Ազգային գրադարանային շաբաթն անցկացվեց ապրիլի 17-23-ը, «Գրադարանը կրթության բաց հարթակ» կարգախոսով: Շաբաթվա շրջանակներում անցկացվեցին տարբեր մշակութային միջոցառումներ՝ առկա և առցանց եղանակով: Մշակութային-մասնագիտական շաբաթը հնարավորություն ընձեռեց կազմակերպելու փոխայցելություններ մարզային ու քաղաքային գրադարանների միջև, գրադարանների փորձն ու նորարար լուծումները միմյանց

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ


հետ կիսելու, գրադարանային արդի խնդիրների շուրջ քննարկումներ կազմակերպելու համար: Անցկացված վարպետաց դասերը, կլոր սեղան-հանդիպումները հրատարակիչների և համայնքապետերի հետ, ինչպես նաև մասնագիտական այցերը այլ գրադարաններ մեկ անգամ ևս կարևորեցին Ազգային գրադարանային շաբաթվա դերը հայկական թվային բովանդակության ստեղծման, գրադարանային տեղեկությունները շահագրգիռ լսարանին մատուցելու տեսանկյունից: Հանրապետության տասնյակ՝ երևանյան, մարզային, համայնքային, մասնագիտական ու բուհական գրադարաններ մեկ շաբաթ շարունակ դարձան յուրօրինակ հարթակ երեխաների և մեծահասակների շարունակական կրթության համար:

Հայկական գրադարանային ասոցիացիա

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐՔԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՇԱԲԱԹ*

ՀՏԴ 021(479.25)+78



Հայ իրականության մեջ առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերել Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթը, որը նշվում է Հանրապետությունում յուրաքանչյուր տարի:

Առաջին անգամ շաբաթվա միջոցառումները կազմակերպվել են 1943 թ. Մոսկվայում՝ վերածվելով համամիութենական մեծ տոնի բոլոր երեխաների համար: Հետագա տարիներին շաբաթվա միջոցառումները կենտրոնանում էին Խորհրդային Միության որևէ հանրապետությունում:

Հայաստանում Շաբաթն անցկացվեց 1982 թ. մարտի 24-30-ը: Երևանը հյուրընկալեց Խորհրդային Միության 15 հանրապետությունների անվանի մանկագիրների և հյուրերի, ինչպես նաև գրողներ:

* Ներկայացվել է 21.03.2023, ընդունվել է տպագրության 24.05.2023:
The article was submitted on 21.03.2023, accepted for publication on 24.05.2023.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

րի Բուլղարիայից, Չեխոսլովակիայից, Հունգարիայից: Շաբաթվա հանդիսավոր բացումը տեղի ունեցավ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքում: Հյուրերն իրենց հայ գրչակիցների ուղեկցությամբ եղան Երևանում և տարբեր քաղաքներում: Իսնկո Ապոր անվան հանրապետական մանկական գրադարանում նրանք հանդիպումներ ունեցան ընթերցողների հետ:

Արդեն երկար տարիներ Շաբաթը նշվում է մարտի վերջում՝ կարևորելով գրքի և ընթերցանության դերը աճող սերնդի կյանքում: Իսնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն այն անցկացնում է Հայաստանի գրողների միության հետ համատեղ: Միջոցառումներին մասնակցում են հանրապետության գրեթե բոլոր գրադարանները:

2023 թ. Մանկապատանեկան գրքի և երաժշտության հորելյանական 80-րդ շաբաթն անցկացվեց մարտի 31-ից ապրիլի 7-ը: Կազմակերպվեցին հանդիպումներ մշակութային գործիչների, ավագ ու երիտասարդ սերնդի մանկագիրների հետ, քննարկումներ, երաժշտական խաղ-վիկտորինաներ, կրթական դասընթացներ, մուլտֆիլմերի դիտումներ, հեքիաթապատումներ և այլն: Կոնֆերանս-հանդիպումի ընթացքում ընթերցողները հնարավորություն ունեցան անմիջական շփում ունենալ երիտասարդ հեղինակների հետ:

Լայնածավալ միջոցառումներ անցկացվեցին նաև հանրապետության մի շարք գրադարաններում՝ նպատակաուղղված ընթերցանության խթանմանը, գրող-ընթերցող կապի ամրապնդմանը:

Հայկական գրադարանային ասոցիացիա

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

նասիրական ու մշակույթի ֆակուլտետների գրադարանային բաժիններում:

1956 թվականից աշխատանքի է անցել Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում (1990 թ. օգոստոսի 1-ից Հայաստանի ազգային գրադարան)՝ շարունակելով նաև դասախոսական աշխատանքը:

Գրադարանային մասնագիտության տիրապետելու, գիտելիքները խորացնելու նպատակով 1957-1962 թթ. հեռակա կարգով սովորել և ավարտել է Մոսկվայի կուլտուրայի ինստիտուտի գրադարանային ֆակուլտետը:

1958 թ. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի և Կուլտուրայի մինիստրության որոշմամբ Ալ. Մյասնիկյանի անվան պետական գրադարանում ստեղծվել է հայ գրքի մատենագիտության բաժին, որին հանձնարարվել է կազմել հայ գրքի ամբողջական մատենագիտություն: Այն պետք է արտացոլեր հայերեն առաջին տպագիր գրքից մինչև մեր օրերը աշխարհում լույս տեսած հայատառ ամբողջ արտադրանքը: Բաժնի վարիչ է նշանակվել հայտնի լեզվաբան, մշակութային, հասարակական գործիչ Ռաֆայել Իշխանյանը, ով հետագայում՝ 1991-1995 թթ., եղել է Հայաստանի ազգային գրադարանի տնօրենը:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ 1930-ական թվականներից սկսած գրադարանային-մատենագիտական ոլորտի մի շարք հայ ներկայացուցիչներ ավարտել են Մոսկվայի կուլտուրայի ինստիտուտի գրադարանային ֆակուլտետի առկա և հեռակա բաժինները՝ Համիկ Սիվանյան, Հրաչյա Կոստիկյան, Վաչե Կարմենյան, Բաբկեն Զաքարյան, Ռաֆայել Իշխանյան, Յողիկ Խաչատրյան, Հայկ Դավթյան, Նինել Ոսկանյան և ուրիշներ: Դա հնարավորություն էր տվել շփվելու Խորհրդային Միության տարբեր հանրապետությունների ներկայացուցիչների հետ՝ փոխանակելով սեփական գիտելիքներն ու ձեռքբերումները: Այդ շփումների արդյունքում տեղեկատվություն էին

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

ստանում մյուս հանրապետությունների մշակութային իրողությունների մասին:

Մեծ է Ն. Ոսկանյանի ավանդը Հանրային (ներկայում՝ Ազգային) գրադարանի հիմնադրման տարեթվի կողմնորոշման հարցում: Նա պատմում էր, որ Ռաֆայել Իշխանյանը Ն. Ոսկանյանի ուշադրությունը հրավիրել է հետևյալ իրողության վրա. «...ուշադրություն ես դարձրել այլ երկրների մեր գործընկերները իրենց գրադարանների պատմությունն այնպես են ներկայացնում, որ մենք հայտնվում ենք հետին պլանում, քանի որ մեզանում դեռ վիճում են, թե մեր գրադարանը 1919 թվականին է հիմնադրվել, թե 1921-ին՝ տալով քաղաքական երանգ: Հաշվի էլ չեն առնում Ռոմանովսկու գիրքը, որ մեզ համար սկզբնաղբյուրի նշանակություն ունի»: Ռ. Իշխանյանի մտահոգությունը փոխանցվում է Ն. Ոսկանյանին և ստիպում ցավոտ այդ հարցը պահել ուշադրության կենտրոնում: Արդյունքում՝ լույս է տեսնում Ռ. Իշխանյանի և Ն. Ոսկանյանի հեղինակած «Հայկական ՍՍԲ Ալ. Մյասնիկյանի անվան պետական ռեսպուբլիկական գրադարանը (համառոտ ակնարկ)» գիրքը (Երևան, 1960 թ.), որի 3-րդ էջում գրված է. «Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի պատմությունը անմիջականորեն առնչվում է Երևանի գիմնազիայի և նրա գրադարանի պատմության հետ: ...1832 թ. Երևանում բացվում է գավառական ուսումնարան, այնտեղ ստեղծվում է ...ուսումնական գրքերի մի փոքրիկ հավաքածու, որն աստիճանաբար սկսում է աճել: Դա ուսումնարանի գրադարանն էր»: Այնուհետև նույն գրքույկի 5-րդ էջում կարդում ենք. «Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու հենց առաջին օրերից եռանդուն աշխատանքներ են սկսվում ռեսպուբլիկական հանրային գրադարան ստեղծելու ուղղությամբ: 1921 թ. Հայաստանի պետական հանրային գրադարանն արդեն գոյություն ուներ, այն կազմակերպվել էր Երևանի գիմնազիայի գրադարանի 18.000 միավոր գրականության բազայի վրա: ...1921 թ. վերջին Հանրային գրադարանի ֆոնդը բաղկացած

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

էր 40.000 միավոր գրականությունից»: «...Գրադարանը արդեն գոյություն ուներ» արտահայտությունը թափանցիկ ակնարկ և անդրադարձ էր Հայաստանի Առաջին Հանրապետության Գերագույն խորհրդի 1919 թ. հուլիսի 4-ի որոշմանը՝ հանրային գրադարան-մատենադարան ստեղծելու մասին: Իսկ ՀՍՍՌ Ժողկոմխորհի որոշումը գրադարանի ստեղծման վերաբերյալ ընդունվել է 1921 թ. մայիսի 11-ին:

Ռ. Իշխանյանի և Ն. Ոսկանյանի վերոնշյալ գրքույկը կարևոր նշանակություն ունեցավ հետագա իրողությունների վրա, որի արդյունքում Հայաստանի ազգային գրադարանի պատմության սկիզբը համարվեց 1832 թ. և հիմնադրման 150-ամյակի կապակցությամբ՝ 1982 թ. գրադարանը պարգևատրվեց Խորհրդային Միության Ժողովուրդների բարեկամության շքանշանով:

Անդրադառնանք Ն. Ոսկանյանի մատենագիտական գործունեությանն ու հարակից որոշ հարցերի:

Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանում Հայ գրքի մատենագիտության բաժնի ստեղծումից 5 տարի անց՝ 1963 թ., գրադարանը հրատարակեց «Հայ գրքի մատենագիտական ցուցակ. 1512-1800» գիրքը, որը կազմել էին Հայկ Դավթյանը, Համլիկ Սիլվանյանը, Նինել Ոսկանյանը, Քնարիկ Կորկոտյանը, Մարգարիտ Միրզոյանը, Անթառամ Սավալյանը: Խմբագիրը բազմավաստակ գիտնական Հակոբ Անասյանն էր:

Կազմողներն առաջաբանում գրել են, որ «...ամենից առաջ օգտագործել են Երևանի, Թբիլիսիի, Բաքվի գրադարաններում և անհատների մոտ պահվող հնատիպ գրքերի այն նկարագրությունները, որոնք կատարվել են հայկական մատենագիտության հիշյալ հատորի համար: Ցուցակում նշված այդպիսի նկարագրությունների քանակը 597 է: Այսինքն՝ դրանք այն գրքերն են, որոնք եղել են ցուցակը կազմողների ձեռքին, ուստի և նրանց մասին տրված տեղեկությունները ամենից ստույգն են»:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Հնատիպ գրքի մատենագիտական ցուցակի հրատարակման նպատակն այն էր, որ այն տրամադրվեր աշխարհի հայագիտական կենտրոններին, հաստատություններին, կազմակերպություններին, անհատներին, օտարերկրյա գրադարաններին, թանգարաններին, մշակութային կենտրոններին՝ խնդրանքով, որ գրադարանին տեղեկատվություն տան իրենց մոտ գտնվող հնատիպ գրքերի մասին: Այդ նպատակի իրագործումը տևեց 25 տարի:

Հարցազրույցներից մեկում Ն. Ոսկանյանը նշել է, որ «...ճամփորդել է ամբողջ Հայաստանով՝ վանքեր, տեսարժան վայրեր, ինչպես նաև աշխարհի 15 երկրներ, 42 քաղաքներ, չհաշված նախկին Խորհրդային բոլոր հանրապետությունները» (Հայկական գրադարան: Տարեգիրք, 2002, թ. 6, էջ 94): Մեծ թիվ են կազմում խոշոր հայագիտական կենտրոնները, ուր ամիսներով աշխատել է նա, պահպանվել են նամակները, գրություններն ու խնդրագրերը, որոնք գրել և ուղարկել է նա աշխարհի տարբեր հաստատություններին և անհատներին՝ հնատիպ հայերեն գրքեր գտնելու ակնկալիքով և որոնց մեծ մասը պահպանվում է Հայաստանի ազգային գրադարանի արխիվում: Նա մեծ կապերի տեր անձնավորություն էր և այդ կապերը պահպանեց մինչև կյանքի վերջը:

Ներկայացնենք այդ կոթողային աշխատության հրատարակության հետ կապված որոշ հուշեր:

Նշենք, որ մինչև հնատիպ գրքի մատենագիտության հրատարակումը, 1967 թ. լույս էր տեսել Հայկ Դավթյանի կազմած «Հայ գիրքը 1801-1850 թվականներին» մատենագիտությունը, որն ընդգրկում էր հիմնականում Խորհրդային Միության գրադարաններում պահվող այդ ժամանակաշրջանի գրքերը: Այս գրքի տպագրությունից ավելի քան 20 տարի անց դեռ որոշակի չէր հնատիպ գրքերի մատենագիտության հրատարակության հարցը: Գրադարանի տնօրինությունը ևս անհանգստացած էր: Խնդիրը լուծելու և տպագրությունն արագացնելու նպատակով որոշում են քննարկում կազմակեր-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

պել սկզբնական կուսակցական կազմակերպության ժողովում: Ն. Ոսկանյանը կուսակցական չէր, բայց դա նշանակություն չուներ: Ցանկացած ձեռնարկի թերակատարում, եթե քննվում էր կուսակցական ժողովում, տարբեր տեսակի տույժեր էր ենթադրում: Դա 1987 թ. էր: Գրադարանի տնօրեն Ա. Թիրաբյանը կուսակցական ժողովին ներկայացնելը պայմանավորում էր նրանով, որ տպարանից գանգատներ կային. Ոսկանյանն ամեն օր որոշակի փոփոխություններ էր կատարում, ինչը խոչընդոտում էր գրքի տպագրությունը: Տնօրենը խնդիրը քննարկել էր Ն. Ոսկանյանի հետ, սակայն արդյունք չէր ստացել, այդ պատճառով ուզում էր հարցը դնել կուսակցական ժողովի քննարկմանը: Այդ մասին տողերիս հեղինակին տեղեկացրել է կուսկազմակերպության քարտուղար Հ. Մկրտչյանը՝ նշելով, որ ինքը պետք է գրուցի Ն. Ոսկանյանի հետ և տեղեկացնի առաջիկա ժողովի մասին: Ն. Ոսկանյանը վրդովվում է, հանդիպում է տնօրենին, ինչի արդյունքում Հ. Մկրտչյանին հրահանգվում է ժողովի օրակարգից հարցի դուրսբերումը: Բայց միջադեպը անհետևանք չի անցնում: 1988 թ. լույս է տեսնում «Հայ գիրքը 1512-1800 թվականներին» մատենագիտությունը: Կազմողների՝ Նինել Ոսկանյանի, Քնարիկ Կորկոտյանի, Անթառամ Սավալյանի անունները գրվում են գրքի կազմի վրա, ինչը տվյալ ժամանակի համար աննախադեպ երևույթ էր: Առաջաբանի հեղինակն ինքը՝ Նինել Ոսկանյանն է, խմբագիրը՝ Ռաֆայել Իշխանյանը:

917 էջանոց մեծադիր այդ հրատարակությունն անմիջապես տպավորում և հարգանք է ներշնչում կատարված աշխատանքի նկատմամբ: Հանգամանալի գրված առաջաբանում Նինել Ոսկանյանն անդրադառնում է այն բոլոր դժվարություններին, որոնք հաղթահարել են կազմողները, նաև մատնանշում է այն նշաճողերը, որոնք հետագայում պիտի նկատի առնվեն:

Լինելով համահավաք մատենագիտություն՝ այն կարող էր հետագայում ևս համալրվել, ահա ինչու ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստ-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

րության Ալ. Մյասնիկյանի անվան պետական հանրապետական գրադարանը հայտարարություն է տարածում՝ նոր հրատարակություններ հայտնաբերելու դեպքում տեղեկացնել գրադարանին: Առաջաբանում Նինել Ոսկանյանը շնորհակալություն էր հայտնում 1963 թ. մատենագիտական ցուցակի կազմողներից Մարգարիտ Միրզոյանին, ով կենսաթոշակի էր անցել և գրադարանի տնօրեն Ա. Թիրաբյանին՝ հրատարակչական դժվարությունները լուծելու համար:

Ինչպես ամեն մի արժեքավոր հրատարակություն, այս մատենագիտությունը ևս դարձավ բուռն քննարկումների թեմա: Տպագրությունից որոշ ժամանակ անց տողերիս հեղինակին է մոտենում (արդեն 6 ամիս ես զբաղեցնում էի գրադարանի տնօրենի գիտական գծով տեղակալի պաշտոնը) գրադարանի մատենագիտության բաժնի գլխավոր մատենագետ Մանիկ Բաբայանը՝ առաջարկելով տնօրենության նիստում կազմակերպել նորատիպ գրքի քննարկումը (այն ժամանակ շնորհանդես բառը կիրառելի չէր դեռ): Քննարկում սովորաբար անց էինք կացնում գրադարանի հրատարակչական խորհրդում, բայց քանի որ նշված մատենագիտության վրա հղում կար, որ տպագրվում է գրադարանի գիտական խորհրդի որոշմամբ, նա գտնում էր, որ պետք է քննարկումը կազմակերպել հենց տնօրենության նիստում: Առաջարկն անակնկալ էր, քանի որ մինչ այդ նման քննարկում երբևէ չէր կազմակերպվել: Հարցին, թե ինչու է պնդում այդ առաջարկը, նա պատասխանեց, որ գրքում կան սխալներ: Շրջանցելով խոսակցության մանրամասները՝ նշեմ միայն, որ Մանիկ Բաբայանին հանձնարարվեց գրավոր ներկայացնել իր առաջարկը: Երկու օր անց նա ներկայացրեց 5 ձեռագիր էջ, ուր նշված էին վրիպակները: Ակամա մտաբերեցի հայտնի մատենագետների խոսքը՝ մատենագիտական գիրքն անսխալ լինել չի կարող, դրա արժանիքը նվազագույնի մեջ է: Քննարկման ցանկության մասին հայտնեցի տնօրեն Ա. Թիրաբյանին և Ն. Ոսկանյանին: Վերջինս վրդովվեց և նեղացած հեռացավ:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Քննարկման ժամանակ գրավոր ելույթ ունեցավ Մանիկ Բաբայանը՝ նույնությամբ ներկայացնելով այն, ինչ գրավոր արդեն ուղարկել էր: Ընթացքում նա հանգիստ պատասխանեց նաև Նինել Ոսկանյանի դիտարկմանը, որով երկխոսությունն ավարտվեց: Մի քանի կարճ արժևորող ելույթներից քննարկումն ամփոփեցինք, որից հետո Նինել Ոսկանյանը նույնիսկ շնորհակալություն հայտնեց այն կազմակերպելու համար:

Նինել Ոսկանյանի ջանքերի շնորհիվ 1999 թ. լույս տեսավ «Հայ գիրքը 1851-1900 թվականներին» մատենագիտությունը, որի ֆինանսական խնդիրների լուծման գործում ևս մեծ էր նրա դերակատարությունը: Մատենագիտությունը կազմել էին Նինել Ոսկանյանը, Անթառամ Սավալյանը, Մարիետա Սողոմոնյանը, Օֆելյա Գյուլումյանը, Աստղիկ Սահակյանը, Սիլվա Թադևոսյանը: Առաջաբանում Ն. Ոսկանյանը և Ա. Սավալյանը շնորհակալություն էին հայտնում Աիդա Ադամյանին, Վերա Հայրապետյանին, Մարիետա Խալատովային, Վիոլետա Մնացականյանին և Մարիետա Կարապետյանին, ովքեր տարբեր տևողությամբ աշխատել էին հայ գրքի մատենագիտության բաժնում: Գրքի խմբագիրն էր բանասիրական գիտությունների դոկտոր Գևորգ Աբգարյանը:

Նինել Ոսկանյանը բազմաթիվ հոդվածներ և գրախոսություններ է գրել: 1976 թ. Գաբրիել Սունդուկյանի ծննդյան 150-ամյակի առթիվ գրադարանը հրատարակեց տողերիս հեղինակի «Գաբրիել Սունդուկյան-150» մեթոդա-մատենագիտական ժողովածուն, որի գրախոսությունը՝ «Արժեքավոր գրքույկ» վերնագրով, տպագրվեց «Կուլտուր-լուսավորական հանդես»-ում (Երևան, 1976, թ. 4): Հեղինակը Նինել Ոսկանյանն էր: Լսել էի, որ նա աշխատում է գրադարանում, բայց չէի տեսել (գուցե և տեսել էի, բայց չգիտեի, որ այդ գեղեցիկ տիկինը Նինել Ոսկանյանն է), չէի ճանաչում: Տարիներ անց, երբ մոտիկից ծանոթացա, հասկացա, որ մասնագիտական մտեցումը նրան բնորոշ հատկանիշներից մեկն էր:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Նինել Ոսկանյանը հասարակական ակտիվ կենսադիրք ունեցող քաղաքացի էր: Ապացույցը «Նամակ խմբագրությանը» վերնագրով նյութն է (Սովետական Հայաստան, 1989, 14 հունվարի), ուր առաջարկում էր ստեղծել «Մայրության ֆոնդ»՝ ի նպաստ 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժից տուժած երեխաների ու ընտանիքների: Ավելին՝ ինքն էլ դարձավ այդ ֆոնդի նախագահի տեղակալը:

2002 թ. ապրիլի 14-20-ը՝ առաջին անգամ, Հայկական գրադարանային ասոցիացիան (այն ժամանակ միություն) մեր հանրապետությունում անցկացրեց Ազգային գրադարանային շաբաթ, որի «Ընտանեկան ընթերցանության երեկո» վերնագրով առաջին պլակատագրագրի տպագրությանը՝ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի և Ազգային գրադարանի աշխատակցուհու 2 տղայի լուսանկարով, օժանդակեց հրատարակել հենց Նինել Ոսկանյանը:

Դրանից օրեր անց՝ ապրիլի վերջերին, Ն. Ոսկանյանն առաջարկեց կազմակերպել իր մոտ եղած նյութերի ցուցադրություն: Գրադարանի տնօրինությունը համաձայնություն տվեց, թեև շրջանառվում էր նաև այդ ցուցադրությունը 2003 թ.՝ Ն. Ոսկանյանի ծննդյան 80-ամյակի առթիվ կազմակերպելու վարկածը: 2002 թ. մայիսի 10-ին ցուցադրությունը բացվեց: Ցուցահանդեսի առաջին բաժինն ավանդական էր, այսինքն՝ նրա կազմած, հեղինակած և խմբագրած գրքերն էին, բազմաթիվ հոդվածներ և նույնիսկ բանաստեղծություն: Մեծ թիվ էին կազմում հեղինակային մակագրությամբ՝ հայ երևելի և նշանավոր դեմքերի կողմից Ն. Ոսկանյանին նվիրած նյութերը: Թվարկենք մի քանի անուններ՝ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա., Մարտիրոս Սարյան, Հովհաննես Ծիրագ, Սիլվա Կապուտիկյան, Պարույր Սևակ, Համո Սահյան, Վահագն Դավթյան, Ալիսա Կիրակոսյան, Գրիգոր Խանջյան, Արա Բեքարյան, Մորուս Հասրաթյան, Լևոն Հախվերդյան, Ասատուր Մնացականյան, Ռաֆայել Իշխանյան, Գառնիկ Անանյան...: Մեկ ուրիշ ցուցափեղկում ցուցադրված էին Նինել Ոսկանյանի ուսանողների հեղինակած գրքերը՝ ջերմ մակա-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

գրություններով հանդերձ: Մեկ ուրիշում ներկայացված էր բացիկների և շնորհավորական քարտերի մի ամբողջական հավաքածու, որոնք տարիների ընթացքում տարբեր երկրներից ստացել էր Նինել Ոսկանյանն անվանի գիտնականներից և մտերիմներից: Երկու մեծ ցուցափեղկում ներկայացված էին ծաղիկներ՝ «Ճամփորդական հուշերս ծաղիկների լեզվով (1941- 1991)» խորագրով: Յուրաքանչյուր երկրից նա իր հետ բերել էր ծաղիկներ, որոնք սիրով խնամել էր և պահել: Մեկ այլ ցուցափեղկում այն գրքերի և նյութերի ցուցակն էր, որոնք Ն. Ոսկանյանը նվիրել էր Ազգային գրադարանին, Խնկո Ապոր անվան մանկական ազգային գրադարանին, Ավ. Իսահակյանի անվան քաղաքային կենտրոնական գրադարանին, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին և այլն:

Ոմանց համար գուցե զարմանալի՝ ցուցադրությունը դիտելու էին եկել գրականության և արվեստի նշանավոր դեմքեր, գիտության տարբեր բնագավառի ներկայացուցիչներ, տարբեր գրադարանների աշխատողներ, ուսանողներ: Ծաղկեփնջերի պակաս չկար: Այնուհետև հավաքվեցին դահլիճում: Բեմում բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի և Ազգային գրադարանի տնօրեն Դավիթ Սարգսյանի ընկերակցությամբ նստած Նինել Ոսկանյանը դժվարանում էր զսպել հուզմունքը: «...Երբեք չէի պատկերացնի, որ այսքան մարդ կհավաքվի և այսչափ ջերմ խոսքեր կսավեն իմ հասցեին: Նշանակում է կյանքս զուր չի անցել, և ինչ-որ բան թողել եմ, որ արժանի էր գնահատանքի».- ասաց նա՝ իր հարուստ կյանքից դրվագներ հիշելով, ուրախ պատմություններ անելով, հայտնի մարդկանց խոսքեր մեջբերելով, հուզվելով և հուզելով (ավելի ընդարձակ տե՛ս Ղազարյան Ռաֆիկ: Մի ցուցահանդեսի մասին, որ հետո դարձավ նվիրյալի մեծարում, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2002, թ. 112, 21 հունիսի, էջ 5):

Վերհիշելով Ն. Ոսկանյանի աշխատանքային տարիները՝ պետք է ասեմ, որ Ազգային գրադարանի տնօրինության և գիտ-

խորհրդի նիստերին երբեք ակտիվ չի եղել: Նստած տեղից մեկ-երկու նախադասություն էր ասում: Խորհրդային ժամանակաշրջանում պարտադիր ժողովներ՝ մեծ և փոքր, շատ էին լինում. էլի նույն վերաբերմունքը: Տարբեր բաժինների վերաբերող հարցեր և հաշվետվություններ էին քննարկում, անգամ հայ գրքի մատենագիտության բաժնի հետ կապված հարցեր, միևնույնն է, նա միայն որոշ մտքեր էր արտահայտում: Գրադարանի գիտամեթոդական բաժնում մեկ-երկու մտերիմ ուներ, նրանցից էի հաճախ լսում Նինելի մասին: Ումանցից էլ լսում էի, որ գնացել են Նինելի մոտ տարբեր հարցերի մասին նրա կարծիքը իմանալու: Այդ ամենը մինչև իր հետ մտերմանալը:

Գրադարանից դուրս բազմաթիվ կապեր ուներ: Նրա տանը, ուր մի քանի անգամ եղել եմ տարբեր առիթներով, պատից կախված էր իր մեծադիր նկարը, որի վրա մեծանուն նկարիչը մակագրել էր. «Հիշատակ իմ սիրելի Նինելիս. Հայ ազգի պայծառ ապագայի երազանքի համար-Մարտիրոս Սարյան 1965, 3 դեկտ. »: Նրա դիմանկարը վրձնել են նաև Երվանդ Քոչարը և Հովհաննես Զարդարյանը (տե՛ս Հայկական գրադարան: Տարեգիրք, 2002, թ. 6, էջ 94): Նրան ձոնվել են նաև բանաստեղծություններ:

Հումորով լեցուն անձնավորություն էր Ն. Ոսկանյանը: Այնպես էր պատմում, որ անմիջապես գրավում էր դիմացինին, երբեմն էլ այնպիսի արտահայտություններ էր անում, որ համընդհանուր ծիծաղ էին առաջացնում: 1995 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի ազգային գրադարանի դահլիճում հանդիսավոր արարողություն էր: Գրադարանի 45 աշխատողի, որոնց տարիքը 65-ից ավելին էր, ճանապարհում էինք կենսաթոշակի: Նախագահողը մեկ առ մեկ կարդում էր անունները: Նրանցից յուրաքանչյուրը մոտենում էր նախագահողին, ստանում նախատեսված փոքր նվերը, շրջվում, մոտենում առաջին շարքում նստած գեղեցիկ արտաքինով տարեց տղամարդուն, ջերմորեն զգվում նրան ու համբուրում: Տղամարդն Արագի Մարտիրոսի Թիրաբյանն էր՝ գրադարանի երկարամյա տնօրենը

(1956-1989 թթ.): Հերթական մոտեցողը գրադարանի Կերպարվեստի և քարտեզագրության բաժնի երկարամյա վարիչ Ավարդ Հայրապետյանն էր, ով ամուսնացած չէր եղել և համբուրեց Թիրաբյանի գլուխը: Դահլիճում բարձր հնչեց Ոսկանյանի ծայնը. «Տղամարդու հետ գործ չի ունեցել, դրա համար չգիտի որտեղ են համբուրում»: Դահլիճը պոռթկաց ծիծաղից (ասեմ, որ այդ պահը լուսանկարվել է և զետեղված է Հայկական գրադարանային միության (ասոցիացիա) տեղեկագրի 1999 թ. 4-րդ համարում, էջ 135):

Հարցազրույցներից մեկում Ն. Ոսկանյանը նշում է. «...բոլորին կուզեի դիմել կոչով, որ միշտ հիշեն Ավ. Իսահակյանի հանճարեղ խոսքերը. «Աղքատ հայրենիքումդ ապրելը հերոսություն է, իսկ անարդար հայրենիքումդ ապրելը՝ իսկական հայրենասիրություն»: ...Այսօր, երբ մարդիկ գանգատվում են երկրի վիճակից և իշխանություններից, լավ կլիներ, որ ամեն մեկը թեկուզ իր հոգու խորքում ինքն իրեն հարցնի, թե ինքն ինչ է տվել իր հայրենիքին: Ինչպես Հյուզոն է ասել «Բարի լինելը հեշտ է, դժվարը արդար լինելն է»: Հիշում եմ՝ մի օր հայրենիքի թեմայով խոսակցության ժամանակ (որը տարիների հեռվից կարգախոսի նման է հնչում) ասաց. «Հայրենիքից չեն նեղանում և լքում, հայրենիքը ջանում են շենացնել»:

Հետաքրքիր և ուսանելի է նաև մատենագետի աշխատանքի մասին նրա խորհրդածությունները: Այն հարցին, թե ինչու ընտրեցիր մատենագետի մասնագիտությունը, պատասխանում է. «Կյանքի սեմին երագում էի դառնալ բժիշկ կամ մանկավարժ: ...Ինչո՞ւ բժիշկ ու մանկավարժ: Որովհետև այդ երկուսը ամենամարդասիրական մասնագիտություններն են: Մեկը բուժում է մարդու մարմինը, մյուսը՝ հոգին: Իսկ ինչու, այնուամենայնիվ, դարձա մատենագետ: Իմ կարծիքով մարդը չպետք է սոսկ կատարող լինի, այլ դրսևորի իր եսը իր գործի մեջ, նվիրվի անմնացորդ: Գտնում եմ, որ մատենագետից, գիտելիքներից բացի, պահանջվում է ավելի շատ բարեխղճություն, անշահախնդիր նվիրում: Մի տեսակ նվիրում ես ինքդ քեզ անհայտ, ան-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

ծանոթ ընթերցողին: Այսինքն՝ մատենագետը չպետք է ակնկալի, թե աշխատանքի դիմաց որևէ փոխհատուցում կլինի: Քո գիտելիքները պետք է ծառայեցնես մարդկանց, առանց նրանց տեսնելու և ճանաչելու: Ժամանակն է տալիս մատենագետի աշխատանքի գնահատականը»: Միանգամայն համաձայն լինելով Ն. Ոսկանյանի հետ՝ ասենք, որ նրա աշխատանքի գնահատականը հիմա և միշտ տրված է՝ անգնահատելի:

Կյանքի վերջին տարիներին նա տպագրության էր պատրաստում «Երախտիքիս գիրքը Ձեզ...» հուշ-ընծայագրերի ժողովածուն, որը, ավա՛ր, չհասցրեց հրատարակել: Վերջին հրաժեշտը ՀԽՍՀ վաստակավոր գրադարանավար Նինել Ոսկանյանին եղավ Հայաստանի ազգային գրադարանի վարչական մասնաշենքից՝ 2005 թ. նոյեմբերի 4-ին: Նույն օրը «Հայաստանի Հանրապետություն» թերթում տպագրվեց մահախոսական, որի տակ ստորագրել էին Հայաստանի Հանրապետության Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարությունը, Հայկական գրադարանային ասոցիացիան, Հայաստանի ազգային գրադարանը:

Տարիների հեռվից ավելի լավ է երևում նրա վաստակի մեծությունը: Մտովի զրուցելով անմոռանալի Նինել Ոսկանյանի հետ՝ ասում եմ՝ Ձեր հարուստ կյանքի մասին ընդամենը մի քանի էպիզոդներ ներկայացնելով՝ ուզեցի հետաքրքրվողը իմանա Ձեր թողած մատենագիտական ժառանգության և Ձեր մասին: Եվ 100-ամյակի կապակցությամբ ոգեկոչելով Ձեր հիշատակը՝ շնորհակալ ենք անմնացորդ նվիրումի և մարդկային ուրույն կերպարի համար:

Փառք ու պատիվ Ձեր հիշվող անվանը:

Ռաֆիկ Ղազարյան

***Կոմիտասի թանգարան-ինստիտուտ,
Հայկական գրադարանային ասոցիացիայի
փոխնախագահ***

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ



ՍՈՒՍԱՆՆԱ ՇՄԱՎՈՆԻ ՄԻՆԱՍՅԱՆ*

ՀՏԴ 929: 02(479.25) Մինասյան + 02

Հայ իրականության մեջ գրադարանային գործի զարգացումն անմիջականորեն առնչվում է գրադարաններում աշխատող անհատների մասնագիտական հմտություններին ու կարողություններին: Մշակութային այս կառույցներում աշխատել և աշխատում են նվիրյալներ, որոնց առաջնային խնդիրը ընթերցող-գիրք-գրադարան փոխհարաբերության ստեղծումն ու պահպանումն է: Գրադարանային գործի երախտավորների արժևորումը հաջորդ սերունդների պարտքն է:

Սուսանա Շմավոնի Մինասյանը երկար տարիներ ղեկավարել է Սյունիքի մարզային գրադարանը, միաժամանակ համակարգել մարզի տարբեր գրադարանների աշխատանքները:

Ծնվել է 1950 թ. սեպտեմբերի 2-ին Կապան քաղաքի Կավարտ բանավանում՝ Մինասյանների հայտնի գերդաստանում: Հայրը՝ Շմավոն Մինասյանը, աշխատել է Կապանի պղնձահանքային կոմբինատի հանքում՝ որպես հերթափոխի պետ, իսկ մայրը՝ Գալյա Պատվականյանը, նույն ձեռնարկությունում՝ որպես հաշվապահ:

* Ներկայացվել է 25.05.2023, ընդունվել է տպագրության 28.06.2023:
The article was submitted on 25.05.2023, accepted for publication on 28.06.2023.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Ավարտելով Կավարտի ութամյա դպրոցը՝ միջնակարգ կրթություն է ստացել Կապանի թիվ 2 դպրոցում:

1969 թ. Ս. Մինասյանն ընդունվել է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի «Մանկավարժություն և հոգեբանություն» ֆակուլտետը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է Կապանի թիվ 1 մսուր- մանկապարտեզում, ուր աշխատել է 1972-1973 թթ. որպես վարիչ:

1973 թ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Անդրկովկասյան կոմերիտական բարձրագույն դպրոցը: Նույն թվականից աշխատել է որպես ՀԼԿԵՄ Կապանի շրջկոմի քարտուղար մինչև 1981 թ.՝ զբաղվելով շրջանի սովորող երիտասարդության հարցերով:

1982 թվականից Ս. Մինասյանի աշխատանքային գործունեությունն առնչվում է գրադարանային ոլորտին: 1982-1997 թթ. աշխատել է Կապանի շրջանի գրադարանների կենտրոնացված համակարգում, իսկ 1997-2015 թթ. ղեկավարել է Սյունիքի մարզային գրադարանը:

Երկարամյա աշխատանքային գործունեության ընթացքում նա մասնակցել է բազմաթիվ սեմինարների, վերապատրաստման դասընթացների, տարաբնույթ միջոցառումների, ինչը հնարավորություն է տվել կապ հաստատել գրադարանային համակարգում ներառված բոլոր գրադարանների հետ: Թվենք մի քանիսը.

1982 թ. – մասնակցություն Մոսկվայում գրադարանների տնօրենների մեկամսյա վերապատրաստման դասընթացներին:

1998 թ. - մասնակցություն Հայկական գրադարանային միության կողմից կազմակերպված մարզային գրադարանների տնօրենների վերապատրաստման դասընթացներին, նաև ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Կառավարում և առաջնորդություն» վերապատրաստման ծրագրին:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

2001 թ. - մասնակցություն Ամերիկայի հայկական համագումար ՀԿ կենտրոնի կազմակերպած «Ուսուցման և տեղեկատվական միջոցներ» դասընթացներին:

2002 թ. - մասնակցություն «Հայաստանի կանայք, գնահատիր ներկան, որ կերտես ապագան» հանրապետական շարժմանը և ՄԱԿ-ի կանանց զարգացման հիմնադրամի /ՅՈՒՆԻԿԵՄ/ «Կանայք հանուն հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատմանը հարավային Կովկասում» ծրագրի կողմից կազմակերպված դասընթացին:

2003 թ. վերապատրաստման և փորձի փոխանակման նպատակով ԱՊՀ-ի երկրների «Տեխնիկական հիմնադրամի ծրագրով» գործուղվել է Եգիպտոս:

2009 թ. ընտրվել է հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակի միջոցառումների կազմակերպման և անցկացման նպատակով կազմված Հայկական գրադարանների միջազգային առաջին համագումարի պատվիրակ:

Տարիներ շարունակ եղել է հանրապետական և շրջանային կանանց խորհրդի անդամ: Ակտիվորեն համագործակցելով համայնքային իշխանությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ՝ Սուսաննա Մինասյանը կարողացել է տարբեր օգտակար և ժամանակի պահանջներին համապատասխան ծրագրեր իրականացրել Սյունիքի մարզային գրադարանում:

Առաջինը՝ «IREX»-ի գրասենյակ-կենտրոնի ստեղծումն էր մարզային գրադարանում 1998 թ., որտեղ շուրջ երկու տարի իրականացվում էր «Համացանցի մատչելիության և ուսուցման ծրագիրը», ու գիտելիքներ ստացան տարբեր տարիքի, զբաղմունքի և մասնագիտության տեր բազմաթիվ մարդիկ:

Երկրորդը՝ «Եվրասիա» հիմնադրամի «Գրադարաններն իբրև հանրային հաղորդակցության կենտրոններ» ծրագիրն էր /15 ամիս տևողությամբ/, որը հնարավորություն տվեց ներգրավել մեծ

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

թվով մարդկանց՝ մոտեցնելով նրանց գրադարանին: Երկրորդ տեղեկատվական կենտրոնի ստեղծումն ամենամեծ նվերն էր «Եվրասիա» հիմնադրամի կողմից: Համակարգիչներից զատ գրադարանը նվեր ստացավ նաև 332 կտոր գիրք:

Հաջորդը Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կողմից նախագծված «Արև» ծրագիրն էր՝ նախատեսված կույր և թույլ տեսողություն ունեցողների համար. ծրագրի ներդրման շնորհիվ տեսողական խնդիրներ ունեցող բազմաթիվ օգտվողներ կարողացան օգտվել գրադարանային հավաքածուներից:

Հաջողությամբ իրականացրել են նաև «Սիվիլիթաս» հիմնադրամի և «Բաց հասարակության» ինստիտուտի կողմից հայտարարված ծրագրերը:

Գրադարանը երեք անգամ տարբեր ժամանակաշրջանում համագործակցել է Կապանի զբաղվածության կենտրոնի հետ և կազմակերպել համակարգչային ուսուցման և ինտերնետի մատչելիության ծրագրեր:

2006 թվականից ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան հետ համագործակցության արդյունքում ստեղծվել է «Ամերիկյան անկյուն» տեղեկատվական կենտրոնը, որը ցայսօր մեծածավալ աշխատանք է իրականացնում մարզում:

Հայ մշակութային և գրադարանային գործին մատուցած ծառայությունների, գրքի և ընթերցանության դերը կարևորելու գործում ունեցած ավանդի համար տիկին Մինասյանը պարգևատրվել է հուշամեդալներով, պատվոգրերով, շնորհակալագրերով:

Խորհրդային տարիներին ընտրվել է Կապանի քաղաքային և շրջանային խորհուրդների դեպուտատ, ՀԼԿԵՄ Կապանի շրջկոմի անդամ:

1988 թ. արժանացել է ՀամԼԿԵՄ և ՀԼԿԵՄ կենտկոմի պատվոգրի և շքանշանի, 2006 թ.՝ ՀՀ մշակույթի նախարարության ոսկե

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ


մեղալի, 2010 թ.' ՀՀ Սյունիքի մարզպետի «Ակսել Բակունց» հուշամեղալի, 2011 թ.' ՀՀ նախագահի կողմից «Մովսես Խորենացի» մեղալի, 2015 թ.' Հայաստանի ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» հուշամեղալի:

Սյունիքի մարզային գրադարան

Հավելում՝ Մեր շնորհակալությունն ենք հայտնում տիկին Սուսաննա Մինասյանին գրադարանային գործում իր ունեցած ավանդի համար:

Հայկական գրադարանային ասոցիացիայի

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ



**ԲԵՆ
(ԲԵՆ-ՀՈՒՐ ՀԱՅԿ)**

ԲԱՂԴԻԿՅԱՆ

1920-2016

**Ամերիկյան գրադարանային
ասոցիացիայի հայ
մրցանակակիրը***

ՀՏԴ 929: 008(479.25)

Բաղդիկյան + 02

1998 թ. Ամերիկյան գրադարանային ասոցիացիայի «Ջեյմս Մեդիսոն» մրցանակը շնորհվեց հայազգի լրագրող, հասարակական և մշակութային գործիչ Բեն Բաղդիկյանին:

Բեն Բաղդիկյանը ծնվել է 1920 թ. հունվարի 30-ին Մարաշում (Օսմանյան կայսրություն): Փոքր տարիքում, փրկվելով Մեծ Եղեռնից, ընտանիքի հետ հաստատվել է Միացյալ Նահանգներում, ուր ապրել և ստեղծագործել է ողջ կյանքի ընթացքում:

Իր աշխատանքային գործունեության ընթացքում Բաղդիկյանը աշխատակցել է ամերիկյան ավելի քան 200 պարբերականների: Ստացել է հետևյալ մրցանակները.

- Պուլիցերյան մրցանակ (1953 թ.):
- Հիլմանի մրցանակ (1956 թ.) քաղաքացիական ազատությունների մասին իր շարքի համար:

* Ներկայացվել է 21.05.2023, ընդունվել է տպագրության 24.06.2023:

The article was submitted on 21.05.2023, accepted for publication on 24.06.2023.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

➤ Ջեյմս Մեդիսոնի մրցանակ (1998 թ.)՝ շնորհված Ամերիկյան գրադարանային ասոցիացիայի կողմից կառավարության տեղեկատվական դաշտը հանրությանը հասանելի դարձնելու համար:

Գիտակից ողջ կյանքի ընթացքում նա արարել է՝ առաջնորդվելով հետևյալ գաղափարով. «Երբեք մի մոռացեք, որ պատասխանատու եք ժողովրդի առաջ, ոչ թե նրանց, որոնք վճարում են ձեզ (դրանք ձեր խմբագիրներն են, աղբյուրները, ընկերները կամ առաջընթացի հնարավորությունները): Միա՛յն հանրության առաջ»:

Բեն Բաղդիկյանի կյանքն ու գործունեությունը տե՛ս
https://en.wikipedia.org/wiki/Ben_Bagdikian

Մրցանակը տե՛ս
Ամերիկյան գրադարանային ասոցիացիա՝
<https://www.ala.org/awardsgrants/ben-bagdikian>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագրի սյունակ 3

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ՄԱՂԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Հայկական գրադարանային ասոցիացիայի
պարբերական հրատարակությունները (1994-2014 թթ.)..... 5

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՆԵԼԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Թվանշային գրադարանների
ստեղծման անհրաժեշտությունը 9

ԱՆՈՒՇ ՄԱԿԱՐՅԱՆ

Հանրային կապերի և գովազդի դերը
ժամանակակից գրադարանի ձևավորման գործում..... 22

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ԼԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

Սյունիքի մարզում գործող գրադարանների
վիճակագրական վերլուծություն (2010-2021 թթ.)..... 35

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

«Համադարած Աշխարհացոյց»-ի
գունագարդ տպագրության հետքերով..... 56

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական
գրադարանի «Էդգարյան» հավաքածուն..... 73

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է կանաչ գրադարանը..... 97
Թարգմ.' Տիգրան Զարգարյան

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային գրադարանային շաբաթ 99

Մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ 102

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐ

Նինել Ոսկանյան – 100 104

Սուսաննա Շմավոնի Մինասյան 117

Բեն (Բեն-Հուր Հայկ) Բաղդիկյան 122

CONTENTS

Editor-in-Chief's Column 3

ARMENIAN LIBRARY ASSOCIATION

MADLEN HOVSEPYAN

Serial Publications of

Armenian Library Association's (1994-2014)..... 5

21ST CENTURY LIBRARY

NELLY HAYRAPETYAN

The Importance of Creating Digital Libraries:

Presentation of Free/Open Source Software 9

ANUSH MAKARYAN

The Role of Public Relations and Advertising in the

Formation of the Modern Library.....22

THEORY AND PRACTICE

LIANNA GASPARYAN

Libraries Operating in Syunik Region:

Statistical analyses (2010-2021) 35

CULTURAL HERITAGE

TIGRAN ZARGARYAN

In the Footsteps of the “Hamatarats Ashkharhatsuyts”

Printed in Color..... 56

MAYA GRIGORYAN

The "Edgarian" Collection of

the Fundamental Scientific Library of NAS RA..... 73

PARTNERSHIP

What is a Green Library?..... 97

Transl. by Tigran Zargaryan

LIBRARY EVENTS

National Library Week..... 99

Children's Book and Music Week..... 102

DEVOTED TO LIBRARY WORK

Ninel Voskanyan – 100 104

Susanna Shmavoni Minasyan 117

Ben (Ben-Hur Hayk) Baghdikyan 122